



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9642

1903



1903

2011


EB 2002

641

հւ 67

# ԽԱՀԱՐԱՐՈՒՀԻՑ

ԿԵՐԱԿՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԶԵԹՆԱՐԿ



Կազմեց Թ. Ա.

Երկրորդ՝ ձնիսացրած սպազրութիւն.



Թ Ի Գ Լ Ի Ս

Տպարան Ա. Քութաթելաձեկի, Կիկ. 21  
1903

ՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀՆԴՀԱՆՈՒՐ Ա-  
ՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ:

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Сентября 1901 г.

Կ 6020 - ամ



31055-43

1. Կերակուրների տեսակները պէտք է փոփո-  
խել. միատեսակ կերակուրները ախորժակը կորց-  
նում են,

2. Ամեն տեսակ ծայրայեղութիւններ վնասա-  
կար են. լաւ չէ նյուպէս բացառապէս կենդանա-  
կան կերակուրներով անդուել ինչպէս նաև միայն  
բուսեղէն ուտել. մարդուս կարեոր է խառը կերա-  
կուր:

3. Միանդամից չպէտք է չափաղանց կշտանալ.  
այնքան միայն պէտք է ուտել, ինչքան որ հարկա-  
ւոր է քաղցը կոտրելու համար. Աւելի լաւ է քիչ  
քիչ ուտել և յաճախ:

4. Ամառը պէտք է աւելի բուսեղէն կերա-  
կուր ուտել, «չգրգռող» ուտելիք, ձմեռ՝ մսեղէն, ա-  
ւելի չաղ կերակուրներ, քան ամառը, բայց ոչ չա-  
փաղանց չաղլ.

5. Զպէտք է ուտել սաստիկ գրգռմունքից, մը-  
տաւոր կամ մարմնական լարումից յետոյ:

6. Յուզմունքից, վշտանալուց իշխ տալու է.  
վիշտը կորցնում է ախորժակը

7. Չատ սովելուց կամ երկար ժամանակ ոչինչ  
չուտելուց յետոյ միանդամից չպէտք է շատ կշտա-  
նալ.

8. Պէտք է ուշադրութիւն դարձնել կերակրի և խմիչքի ջերմութեան վերայ. խիստ տաք կերակուրը և շատ սառը խմիչքը միակերպ վնասակար են և թերես նպաստում են անդամ մի վտանգաւոր հետանդութեան գոյանալուն—ստամբուխի քաղցկեղին:

9. Անպայման վնասակար են ամեն տեսակ պարարտ խմորեղէններ և համեմներ:

10. Կերակուրն ինչքան կարելի է խնամքով պէտք է ծամել:

11. Ուտելու ժամանակ չպէտք է խմել որպէսզի ստամբուխի հիւթը չջրիկանսյ և ի դուր տեղ ստամբուլ չծանրաբեռնենք հեղուկով. աւելի լաւ է մի փոքր խմել ուտելուց յետոյ,

12. Ուտելու ժամանակ պէտք է հեռացնել կօրսէտները, գօտիններ և ամեն տեսակ կապեր, որոնք ճնշում են ստամբուլ:

13. Ուտելիս չպէտք է կարդալ կամ մտաւոր ուրիշ գործով պարապել. այդպէս վարուելիս՝ արիւնը մարսողութեան գործարաններից ուղեղն է անցնում, և մարսողութիւնը խանդարում է:

14. Սուրճ և թէին, որովհետեւ նոցա մէջ պարունակում է դլուրի թթու, միանում են սպիտնին և մարսողութեան արգելը լինում:

15. Ուտելուց յետոյ քնելը վնասակար է. քնած ժամանակ ստամբուխի մարսողութիւնը նշանաւոր կերպով թույանում է. Աւելի լաւ է ուտելուց յետոյ մարմնական չափաւոր վարժութիւններ և զբօսանք կատարել Սակայն ճաշից յետոյ հանգստութիւնը վնասակար չէ, եթէ միայն առանց քնելու լինի այն. Մէջքի վերայ պարկած դրութեամբ հե-

դուկ կերակուրը մինչև անգամ հեշտութեամբ է ստամբուխից աղիրներն անցնում, քան մարմի մի ուրիշ դիրքի ժամանակ:

16. Հայց ժամանակ ծիսելը ցնցում է ստամբուլ և մարսողութիւնը խանդարում, մանաւանդ երբ ծուխը կուլ են տալիս կամ թռնդ ծխախոտ ծխում:

17. Մի անգամ ընդ միշտ ուտելու համար պէտք է ըստ հնարաւորութեան որոշ ժամեր նշանակել:

18. Երրէք քնից անմիջապէս առաջ չպէտք է ընթրել որպէս զի զիշերը ստամբուլ չծանրաբերնուի:

19. Լաւ չէ առաւօտը անօթի գուրս դնալ տասից կամ գործի սկսել:



## Ա. ՄԱՍԱՀ

### Ն Ա Խ Ա Ճ Ա Շ

Ա Բ Տ Ի Ս Ո Ւ Ե Ը Ե Ւ Պ Ա Վ Ա Շ Ա Շ Ա Շ

(Գ մարդու բաժին):

Աերակու ըներ ընտրելիս անշրա-  
ժեշտ է ուշադրութիւն դարձնել որ-  
նոքա խառնուելով չվասեն առողջու-  
թեան, միաժամանակ չում կա-  
թը, սունկ և թթուածուր. Օրինակ,  
եթէ պատրաստուած է թան կամ ակ-  
րօշկա, այդ միւնցն ճաշին չի կարե-  
լի տալ սունկ, թթուածուր, չում միրգ  
կամ պտուղ կաթի հետ, որովհետեւ  
այդ տեսակ խառնուրդից հեշտ կա-  
րելի է հիւանդանալ:

1. ԹէՅ. Ուտիսին՝ կաթով կամ սերով:  
Պասին՝ լիմոնով կամ թթու քաղցրաւէնիով:

2որս մարդու համար սովորաբար վերց-  
նում են մի թէյի գգալ թէյ: Թէյամանը պէտք  
է ծածկել ահձեռոցով և դնել հեշտաեսի վե-  
րայ շատ կարճ ժամանակ, այնպէս որ թէյն

չը եռ գայ, որովհետև եռցրած թէյը կորցնում  
է հտոն ու համը և վնաս է առողջութեան:

Թէյն բոլորովին նոյն ազգեցութիւնը ու-  
նի մարմնի վերայ, ինչ որ սուրճը, բայց մի-  
այն թպլ. նա զրդում է նեարդային գրութիւ-  
նը, թեթևացնում է մտաւոր ու ֆիզիքական  
գործունէութիւնը և քունը փախցնում:

Եթէ շատ մոյզ և միծ քանակութեամք  
գործ զրուի՝ թէյն առաջ է բերում անհանգս-  
տութիւն, սրտի բարախում, երկիւղի զգացում,  
ցնցումներ, բայց սուրճի հակառակ լուծողու-  
թեան փոխարէն՝ աւելի շուտով փորկապութիւն  
է բերում:

2. ՍՈՒՐՃ. Ուտիսին՝ կաթով կամ սերով:  
Պասին՝ նշէկաթով, նշէնացով և կամ շարարանշով:

Ինչպէս թէյի, այնպէս էլ սուրճի հետ  
տալիս են հաց ու կարագ, պարսիմատ, քաղց-  
րահաց: Պասին՝ բլիթ, սպիտակ հաց:

Նայելով մարդու միջոցներին և առողջա-  
կան գրութեան՝ կարելի է գործ դնել զանա-  
գան սուրճեր, օրինակ՝ խոզկաղինի, զարու,  
թզան և խկական սուրճ:

Սուրճը գլխաւորավէս դրվող ներփոր-  
ծութիւն ունի նեարդային գրութեան վերայ.  
Նա աւելացնում է սրտի գործունէութեան ոյժը  
և առաջ է բերում մտաւոր և ֆիզիքական ոյ-

ժերի նորոգման դրացմունք. սուրճի քիչ գործածութիւնը կարգի է զնում մարտողութիւնը: Եթէ անշավաւոր գործ դրուի՝ առաջ է բերում թունաւորութիւն, որ արտայայտում է գրգումնքով, ամբողջ մարմնի դողալով, գործելու անկարողութեամբ, սրտի արագ բարախումով և խիստ փորլուծութեամբ:

Խոգկապնի սուրճը առողջ մարդիկ շատ հազիւ են գործ զնում, նա օգտակար է զլսաւորապէս փորլուծութեան ժամանակ. բայց պէտք է աշքի առաջ ունենալ, որ եթէ շարունակ գործ զնեն՝ մարտողութեան խանգարում առաջ կը բրի:

### 3. 6 ԲԱԺԱԿ ԿԱԹ.

ԿԱԹ. Կաթը սննդարար նիւթերի մէջ աւելի կատարեալ ձեն է: Երեխայոց համար նա միակ կերակուրն է ու այս շատ հասկանալի է, որովհետեւ պարունակում է իւր մէջ մեր մարմնին անհրաժեշտ բոլոր բաղկացուցիչ մասերը:

Կաթի մէջ կայ ածուխ (յրլեօծ) – կաթնային շարար, որ նորան ախորժելի համ է տալիս և որ անհրաժեշտ է որպէս զի երեխան սիրով ծծէ մօր կաթը:

Կաթը հարուստ է և լուսածնաթթու կրով և լուսածնաթթու կալիով, երկու աղեր, որոնք անհրաժեշտ են կմազրի և մարմնի հիւսուածք-

ների կազմութեան համար: Սորա հակառակ, երկաթ քիչ կայ կաթի մէջ: Սորանով է բացատրում, որ բացառապէս կաթով սննդուող երեխաները սակաւարիւն են լինում: Նորանին հարկաւոր չէ երկաթ, նա մեծ բանակութեամբ երկաթ ունի փայծաղում:

Այսպէս ուրիմն կաթի մէջ կան սննդուելու անհրաժեշտ բոլոր նիւթերը և այն էլ դիւրամաս ձեւով:

Ջատ կարեոր հանգամանք է, որ կաթի մէջ ոչ մի տեսակ քիմիական գրգորիչ նիւթեր չկան, ուստի և ստամոքսի ու աղիքների զում չէ առաջացնում:

Այս կողմից կաթին կարող է համեմատուել միայն հացը:

Կաթին առհասարակ հեշտ է մարսում, սակայն երբեմն մանուկները և մինչեւ անդամ մեծերը դժուարութեամբ են կոչի կաթի բնապանիրը մարսում. կաթի ճարպն ու ածուխը միշտ լաւ են մարսում: Այդ նորանից է, որ երբ մեծ բանակութեամբ կաթ են խմում, միջի բնապանիրը ստամոքսում մեծ քանակութեամբ կոշտ կոշտ խաժոյ է գոյացնում, որի վերայ ստամոքսի հիւթը մեծ դժուարութեամբ է ներգործում: Որպէս զի բնապանիրը այդպիսի կոշտեր չգոյացնէ՝ կաթը պէտք է եռցնել,

— 10 —

հետը պարզ ջուր և կամ հանքային ջուր (էմ-սի, սելտերի) խառնել, պաքսիմատ, բիսկվիտ, սպիտակ հացի կեղե. այլ և կաթը միանգամից շպէտր է խմել, այլ կում կում. սա նոյնքան անհրաժեշտ է, ինչքան և պինդ կերակուր ծամելլ:

Որովհետն լոկ կաթով սննդուելլ փորկապութիւն է առաջ բերում, ուստի և միայն կաթով շպէտր է կերակրուել. իսկ ուրիշ կերակրի հետ՝ կաթը ամենալաւ խմիչքն է կազմում և միշտ պէտք է ուտելուց յետոյ կաթ խմել, որ ախորժակը շը փակուի:

ԱՅԻ ԿԱԹԻ ՆՇԱՆԵՐԸ.

1) Բնական կաթնային գեղնասպիտակ գոյն, առանց կապտառն ցոլքի:

2) Թափանցիկ չլնելը. թափանցկութիւնը ջուր խառնած լինելու նշան է:

3) Իրան յատուկ ախորժ հոտ. անախորժ հոտով կաթը՝ առողջութեան համար վնասակար հիւթ է պարունակում:

4) Նուրբ քաղցրառն համ, որ ցոյց է տալիս, թէ բաւարար շափով կաթնաշաքար կայ մէջը:

5) Եթէ, լաւ կաթի մի կաթիլ զցենք մաքուր ջրի մէջ, տակն է անում, գրեթէ առանց քացուելու ջրի մէջ:

6) Լաւ կաթը երբ կաթեցնես եղնդի վերայ, պահպանում է իւր աղեղնաձե դրութիւնը, իսկ ջրախառն կաթը բացւում է:

7) Մի կաթիլ կաթը մատներով տրորելով՝ կարելի է իմանալ իւղալի է թէ ոչ:

8) Լաւ կաթը որ տաքացնես՝ երեսն իսկոյն փրփուր կկապի:

ԿԱԹԻ ԿԵՐՉԵԼՔ.

Կաթնավաճառները յաճախ կեղծում են կաթը, սերբ բաշում են երեսից, ջուր են խառնում, մէջը օսլայ, ալիւր, սօգա են խառնում և այլն:

Սոգա խառնում են, որ կաթը չթթուի. սօգան վնաս չէ, բայց կաթի համը փոխում է: Եթէ ուղում էր իմանալ սօգա խառնած էր կաթում թէ ոչ, մի միքանի կաթիլ զցեցէր քացախի մէջ. խառնածը խկայն չէ կարում, այն ինչ մաքուր կաթը խկոյն կտրում է:

Ալիւր խառնած է թէ ոչ՝ համից կարելի է իմանալ. կամ ուղղակի նստում է տակը:

Օսլա խառնած է թէ ոչ՝ կարելի է իմանալ մէջը մի երկու կաթիլ եօդ խառնելով, որով նա կապտառն զոյն է ստանում:

Խառնում են և ուրիշ նիւթեր: Կաթի կեղծելը երեխաների մահացութեան գլխաւոր պատճառներից մէկն է իրանց մատաղ հասա-

կում, ուստի պէտք է ամեն միջոց գործ դնել  
կեղծելու առաջն առնելու համար:

4. ԿԱԿԱԾՈ. (Կայ արտասահմանի՝ ամենա-  
լաւը Բլօկէր գործարանից և Ռուսաստանի՝  
Եյնէմ գործ.): Մի բաժակի համար վերցրու  
մէկ լիքը թէյի զդալ կակաօ և 2 թէյի զդալ  
շաքարաւազ, ածա բաժակի մէջ և լաւ խառ-  
նիր, յետոյ վրէն լցրու եռցրած ջուր կամ եռ-  
ցրած կաթ:

Յանկացողը կակաօ և շաքարը կարող է  
խառնել մէկ թարմ ձուով և յետոյ վրէն լցնել  
եռցրած կաթ, որ աւելի մննդարար է:

Կակաօն աւելի պակաս մննդարար է քան  
չոկոլադը. նա աւելի շատ ածուխ է պարունա-  
կում և պինդ կակաօն կարելի է մեծ քանիա-  
կութեամբ ընդունել: Կակաօն աւելի պակաս  
գրգռիչ ներգործութիւն ունի, քան թէյն ու  
սուրճը, բայց պէտք է ի նկատի ունենալ, որ  
նա գաղեր է առաջացնելում աղիքներում և յա-  
ճախ վատ է տանում մարդ: Խողկադնի սուրճի  
պէս կայ նաև խողկադնի կակաօ:

5. ՇՈԿՈԼՈՒԹԻՒՆ/<sup>1/4</sup> ֆունտ չոկոլադը ծեծել և  
բաց անել 3 զդալ տաք ջրի կամ ոսալը կաթի  
մէջ և ածել կաթսայի մէջ 15 բաժակ եռցրած  
կաթի և շաքարի հետ, դնել միջակ կրակի վե-  
րայ և հարիչով հարել այնքան, մինչև չոկոլա-

դի կէսը փրփուր դառնայ. փրփուրը պէտք է  
հանել պատրաստ տաքացրած գաւաթների մէջ  
և լրայից ածել հեղուկ չոկոլադը:

Կարելի է նոյնպէս վազօրօք ձուի դեղնուցը  
շաքարով հարել, խառնել արդէն պատրաստ  
եփած չոկոլադի մի մասի հետ, այս խառնուր-  
դըն ածել չոկոլադով կաթսայի մէջ, հարիչով  
հարել, էլ շմորնելով, որ եռ գայ, որպէս զի  
գեղնուցը չը կտրուի. այսպիսի չոկոլադը շատ  
մննդարար է:

Զրի կամ կաթի տեղ կարելի է վերցնել նա  
և 2 մաս ոպիտակ գինու և մի մաս ջրի խառ-  
նուրդ:

6. ՅՈՒ. Կերակրի համար գործ են զրում  
բոլոր ընտանի թռչունների ձուերը, այսպէս  
հաւի, սագի, բագի, հնգկահաւի. բայց ամենից  
մեծ նշանակութիւն ունի ՀԱԿԱԿԹԸ, որ ամե-  
նից շատ է գործ դրում:

Յայտնի է, որ հաւկիթը պատած է կրա-  
յին թագանթով կամ կճեպով, որ հարուստ է  
ծակոտիքներով: Այդ ծակոտիքների միջոցով  
օդից հեշտութեամբ ներս են մտնում փուլ-  
թեան զանազան սերմեր, ուստի և հաւկիթը  
շատ հեշտ է փչանում:

Լաւ հաւկիթը պլիսաւորապէս այս միջոցնե-  
րով կարելի է զանազանել վատ ու վշացածից. —

1) Վերցնել մի մասը աղ և 10 մասը ջուր,  
խառնել. և հաւկիթներն ածել մէջը: Բոլորո-  
վին թարմ ձուն խսկոյն կիջնի ներքի. երեք օրից  
տւելի հին ձուն տակը կանի, բայց ոչ մինչև  
ամանի յատակը, իսկ հինգ օրից հինը կլողայ  
ջրի երեսին և այսպիսին արդէն անպէտք է:

և 2) Եթէ լեզուն դիպցնենք հաւկիթի երկու  
ծայրերին, սառը զգացմունք են առաջ բերում,  
բայց այնուամենայնիւ բութ ծայրը տւելի տաք  
է քան սուրը, հին հաւկիթի երկու ծայրի բա-  
րեխառնութիւնն էլ միատեսակ է և սառնու-  
թեան զգացողութիւն չեն առաջացնում:

Հաւկիթը փշանալուց պահպանելու համար  
պէտք է պահել կրի, աղի, ալիւրի, չոր աւազի  
կամ մոխրի մէջ: Աւելի լաւ է արտաքուստ  
օծել որևէ իւղով, ձիթով, մոմով և այլն, որով  
հաւկիթը տւելի քիչ է կորցնում իւր համը: Եր-  
կու գէպքումն էլ պէտք է դարսել սառը և ցա-  
մաք տեղ, իսկ ամենից լաւ է չոր յարդի մէջ:  
Բացի դորանից գոնէ շաբաթը մի անդամ պէտք  
է հաւկիթները շուռ տալ միւս կողքի վերայ,  
որովհետեւ փորձը ցոյց է տուել, որ հաւկիթն  
աւելի շուտով է փշանում երբ շարունակ մի  
կողքի վերայ է լինում դարսած:

Հաւկիթը ամենասննդարար և թանկազին  
սննդանիւթերից մէկն է իրեւ առանձին կերա-

կուր և թէ ինչպէս զանազան կերակրի խառ-  
նուրդ:

Հաւկիթը շատ լաւ է մարսում. բայց այդ  
կախումն ունի եփելու ձեից:

Ջատերը ուղղակի հում են ուտում. այդ-  
պէս շատ հեշտ է մարսում. յարմար է երկու  
ծայրերից ասեղով ծակել և մի կողմից ծծել.  
բայց հում ձուն բաւական անախորժ համ ունի:

Աւելի համել է թոյլ եփած, որ պակաս  
դիւրամարս չէ: Պինդ եփածն անպայման դժ-  
ուարամարս է և կարող է ստամոքսի կտրտոց  
և ցնցումներ առաջացնել: Պինդ եփած ձուն  
դիւրամարս գարձնելու համար պէտք է շատ  
մանր տրաբել և որևէ մանրած աղցանով ուտել:

Չուազեղը շատ իւղ պարունակելով դժուա-  
րամարս է. լաւ մարսում է կիսաեփ ձուաձեղը:

Դեղնուցը աւելի սննդարար է և դիւրա-  
մարս քան սպիտակուցը, ուստի և շատ օգտա-  
կար է, մանաւանդ երեխաների համար, մեծ  
քանակութեամբ երկաթ պարունակելու պատ-  
ճառով: Թերիսաշ հաւկիթ ստանալու համար  
պէտք է եփել 3 բոպէ. քիչ աւելի պինդ՝ 4  
բոպէ, իսկ բոլորովին պինդ՝ 5 բոպէ:

Որովհետեւ եփելիս սպիտակուցի մի մասը  
կծեպից դուրս է գալիս, իսկ կաթսայի ջրի մա-  
սը մտնում հաւկիթի մէջ, ուստի հաւկիթը

պէտք է եփել անշուշտ մարուր ջրի մէջ, որով հետեւ կեղտուտ ջրից վատ համ է ստանում ձռն և եփելուց առաջ էլ լաւ պէտք է լուանալ:

7. ԽՈԶԱՊՈԽԻՑ ԵՒ ԵՐՃԻԿ. Մանանեխով, վայրի բողիով (քրէնե) և քացախով:

Մանը կտրտած կամ ծեծուած միսը հեշտ է մարտում, որովհետեւ մարտուական գործարանը ազատում է իւր մեքենական աշխատութեան մի նշանաւոր մասից. ուստի և լաւ պատրաստուած երշիկը ներկայանում է որպէս մի շատ դիւրամարս կերակուր:

Սակայն փողոցում ծախած երշիկի միսը յաճախ թարմ չէ լինում և փշացած, կտորտանքից և անպէտք: Փշացած երշիկը պարունակում է իւր մէջ երշիկի թոյն, որից յաճախ ծանը թունաւորութիւններ են յառաջ գալիս և նոյն իսկ մահ: Կասկածելի են այն երշիկները, որոնք քաղցրահամ կամ թթուահամ են տալիս և նոյնպիսի հոտ, կանաչագոյն կամ գեղնագոյն ճարպ ունին, տեղ տեղ փափկել են և սև բծեր ունեն: Հում, չեփած երշիկը առանձնապէս լինասակար է նորանով, որ կարող է ճիճուններ պարունակել իւր մէջ, բայց եփածն էլ բաւական չուտ է փշանում:

8. ԽԱԼԻՆԱՐ ԵՒ ԶՎԱԿԻԹԸ մի համել և սնընդպարար կերակուր է, նա գրգռում է ախորժա-

կը, օգնում է ստամոքսահիւթի ստացման և մարտում է հեշտութեամբ, այլ միայն շատ չըպէտք է ուտել, որովհետեւ մէջը շատ աղ լինելով՝ շափազանց գրգռում է ստամոքսը: Բարբունած խաւեարը փսխումն և լուծողութիւնն է առաջ բերաւ:

9. ՊԱՆԻՐ.

10. ԿԱՐՄԻՐ ԲՈՂԿ, որ պէտք է մարուր լուանալ:

11. ՓԱՅԼՈՒԿ (սելեդկա) ՉՈՒԿԵ ՊԻՐՎԱՆ-ՍԻ ԿԱՄ ԶԻԹԱՊՏԸ ՀԵԹՈՎ. ԵՒ ՔԱՑԱԽՈՎ. Մէկ հատ հասարակ կամ հոլանդական 2 փայլունիկ թրջիր ջրի կամ թէյի մէջ, մաքրիր, լուա, երկարութեան վերայ միջից կտրտիր, ողնաշարը հանիր, երկու կէսերը դարձեալ միասին դիր, լայնութեան վերայ կտրտիր, դիր փոքր սկուտղի վերայ, մի կողմը ածա մանրացրած սոխ, իսկ միւս կողմը բարակ կտրտած գետնախնձոր, վրէն ածա մի գդալ պրօվանսի կամ ձիթապտղի ձէթ, խաւը (սիրովների համար) մի գրգալ բացախի, <sup>1/8</sup> թէյի գդալ մանանեխի, քիշ աղի և շաբարի հետ:

12. ՄՍԻ ՎԻՆԵԳՐԵՏ, Վերցրու եփած կամ տապակած միսը, 6 հատ եփած գետնախնձոր, խորոված ճակնդեղ, 1—2 հատ կճպած թթու խիար, այս ամենը մանր կտրտիր և խառնիր



մանանեխի սուսի հետ, որ պատրաստում է այսպէս. —  $\frac{1}{2}$  թէյի գդալ մանանեխը,  $\frac{1}{4}$  բաժակ ջուր,  $\frac{1}{2}$  գդալաշափ շաքարաւաղ, մի գրդալ պրօվանսի ձէթ, երկու գդալ քացախ և ով ուզում է մէկ կամ երկու էլ ձուի դեղնուց լաւ խառնում են: Վինէգրէտի վերայ ուտելուց առաջ կանաչի են կտրտում:

**13. ՊԱՍՈՒԱՅ ՎԵՆՔՐԵՏ.** Վերցրու 1 գրգանքա կարմիր լորի, 1. գրվ. ճակնդեղ և 1 գրվ. գետնախնձոր, առանձին առանձին եփիր և յետոյ վերջինները մանր կտրտելով խառնիր միասին, վրէն ածա 2 գդալ կերակրի ձէթ և 2 գդալ քացախ, ալ, սղպեղ և  $\frac{1}{4}$  գրվ. ձիթապտուղ:

**14. ՆՈՐ ՍՈՒԿԿ ՏԱՊԱԿԱՄ.** Մի ափսէ լիբը սունկ պէտք է լաւ մաքրել, լուանալ, կըտրեկ և վրէն ալիւր ցանել: Թաւի մէջ եռցնել իւզ կամ կերակրի ձէթ, մէջը տապակել մէկ նոր սոխ, յետոյ ածել նորա մէջ՝ աղ արած սունկը և տապակել միջակ կրակի վերայ, դարձնել միւս երեսին և տապակել, ածելով վրէն սամիթ, մաղդանոս և պղպեղ: Խւզով պատրաստածի վերայ կարելի է լցնել  $\frac{1}{2}$ , բաժակ թըթուասեր և մի անգամ եփ տալ:

**15. ՆՈՐ ՍՈՒԿԿ ԽՈՐՈՎԱՄ.** Մի ափսէ լիբը թարմ սունկը լաւ մաքրիր, լուա, վրէն ցա-

նիր աղ, գարսիր թաւի մէջ և դիր հնոցում մինչև կխորովուի:

**16. ՍՊԻՏԱԿ ԼՈԲԻ ԿԱՄ ԳԱՍՈՒԼԻՅ.** Վերցրու երկու բաժակ լորի, մի ըիշ աւելի ջուր, եփիր առանց աղ զցելու, մինչև կփափկի. աւելորդ ջուրը դէն ածա, աղ արա, վրէն աւելացրու ձէթով տապակած սոխ և մի քիշ էլ րացախ:

**17. ՊԱՏԻՑԱՒՈՐ ԿԱՆԱԶ ՍԻՍԵՌ.** 2 գրվ. պատիճաւոր կանաչ սիսեռը (горохъ) մաքրիր պատիճներից, ածա եռցրած ջրի մէջ, նախապէս լցնելով մէջը մի գդալ աղ, եփիր մինչև կփափկի, յետոյ ջուրը դէն ածա և հանիր ափսէի վերայ, սեղան տանելիս տար նաև հարած տաք իւզն առանձին: Ամեն մի շիշ ջրին պէտք է ածել մի թէյի գդալ աղ:

**18. ԽՈՐՈՎԱՄ ՇԵՂԳԱՄ ԻՎՈՎ.** 6 հատ շաղգամ լուա, կճեպը քերիր և դիր հնոցը որ եփուի. պէտք է ուտել լաւ իւզով: Կամ թէ պէտք է խորովել շաղգամը, գդալով բոլոր գուլը միջից հանել, աւելցնել վրէն մի գդալ իւզ, մի ձու, ածել վրէն մի բաժակ կաթ, խառնել և թխել քրեղանով:

**19. ԽՈՐՈՎԱՄ ԳԵՏՆԱԽՆՉՈՐ ԻՎՈՎ.** Գետնախնձորը լուա, սրբիր ու թաղիր մոխրի մէջ կամ դիր հնոցի մէջ ու շուտ շուտ տուր

որ շայրուի: Խորովելուց յետոյ պէտք է կճպել,  
վրէն աղ և իւղ անել և ուտել:

20. ԵՓԱԾ ԳԵՏՆԱԽՆՉՈՐ. Որպէսզի գետ-  
նախնձորը փխրուն լինի, պէտք է մարբել, լուա-  
նալ, ածել եռցրած ջրի մէջ առանց աղի, լաւ  
եփել, նայել որ շատ չեփուի, ջուրը դէն ածել,  
խսկոյն աղ անել, պղնձի խուփը ծածկել, մի-  
քիշ շարժել և թողնել անշարժ  $\frac{1}{4}$  ժամ: Գետ-  
նախնձորից գոյացած ջուրը ածել ճաշու ար-  
գանակի մէջ. խսկ այսպէս պատրաստած գետ-  
նախնձորը հետեւեալ կերպով են գործ դնում:

21. ԵՓԱԾ ԳԵՏՆԱԽՆՉՈՐԸ ԻՒՂՈՎ ԵՒ-  
ՄԱՂԴԱՆՈՍՈՎ. Եփում են գետնախնձորը վե-  
րոյիշեալ կերպով, խառնում են հետը 2—4  
դդալ տաք իւղ և վրէն ածմում մանր կտրտած  
մաղդանոս և ումիթ:

22. ԵՓԱԾ ԳԵՏՆԱԽՆՉՈՐ ԻՒՂՈՎ ԵՒ-  
ՑՈՒՈՎ. Եփում են գետնախնձորը, հետը խառ-  
նում են 2—4 դդալ տաքացրած իւղ, խառնած  
2 հատ պինդ եփած և մանր կտրտած ձուի  
ու 2—4 դդալ եռցրած կաթի հետ:

23. ԳԵՏՆԱԽՆՉՈՐ ԿԱԹՆԻ ՍՈՒԽՈՎ.  $\frac{1}{2}$   
դդալ ալիւր, կէս մանր կտրտած սոխը տապա-  
կիր  $\frac{1}{2}$ , դդալ իւղի մէջ, խառնիր  $1\frac{1}{2}$ , բաժակ  
կաթի հետ և եռցրու. յետոյ ածա մէջը եփած,  
մարբած և չերտ չերտ կտրտած գետնախնձո-

րը, խառնիր, աղ արա, սղնձի խուփը ծածկիր  
և 2—3 անգամ եռցրու. սկուտպի վերայ ածելիս  
վրէն պէտք է մաղդանոս ցանել: Կարելի է  
հետը խառնել նաև երկու հատ եփած ու մանր  
կտրտած սունկ:

24. ԵՓԱԾ ԳԵՏՆԱԽՆՉՈՐ ՍՈՒԽԿԻ ՍՕ-  
ՈՒԽՈՎ. 2—3 դդալ իւղի մէջ տապակիր մի զը-  
դալ ալիւր, մի սոխ և 3 հատ եփած և մանր  
կտրտած սունկ, մէջը ածա 2 բաժակ սնկի  
ջրից, եռցրու և ածա եփած գետնախնձորի  
վերայ:

25. ԳԵՏՆԱԽՆՉՈՐԻ ՊԻԿՐԻ ԵՐԵՇԿՈՎ. Գետ-  
նախնձորը լուա, կճպիր, նորից լուա, ածա տ-  
ղաջրի մէջ, եփիր, յետոյ ջուրը դէն ածա, գետ-  
նախնձորը շուտով տրորիր: Վայտէ դդալով, աղ  
արա, մէջը ածա մի թէլի դդալ ալիւրով կարմ-  
րացրած մի դդալ իւղ, խառնիր, վրէն  $\frac{1}{2}$ , 1  
բաժակ կաթ լցրու, խառնիր և եռցրու. Երբ  
սկուտպի վերայ հանես՝ չորս կողմը եփած կամ  
խորոված տաք երիշկներ շարիր:

26. ՏԱՊԱԿԱԾ ԳԵՏՆԱԽՆՉՈՐ. Գետնա-  
խնձորը եփիր, մարբիր և տապակիր իւղի մէջ,  
զցելով մէջը զլուխ կամ կանաչ սոխ:

27. ԵԴ. ՈՒ ՑՈՒՈՎ ԵՐԵՇՏԱՅ. 1 դրվ. է-  
րիշտան եփիր աղաջրի մէջ. ջուրը բամիր. պը-  
ղնձի մէջ ածա  $\frac{1}{4}$  դրվ. իւղ, եռցրու. մէջը

ածա եփած էրիշտան, վրէն ածա չորս ձու և  
խառնիր մինչև կարմրի:

**28.** ԿԱԹՈՎ ՄԱՆԱՑԱ ԱՐՈՒՊԱ. (Քարա-  
սերմնիկ): Յ բաժակ կաթը եռցրու, մէջը ածա  $\frac{1}{4}$ ,  
բաժակ մաննայեա կրուպա, նորից եփիր, միե-  
նոյն ժամանակ խառնելով, որ կոշտեր չգոյա-  
նայ: Ածելիս պէտք է աղ անել և ոլ ցանկա-  
նում է՝ մի քիչ էլ կարագ:

**29.** ԿԱՂԱՄԲՈՎ ՊԻՐՈԳ. վերցրու  $\frac{1}{4}$ .  
բաժակ ջուր, Յ մսխալ չոր թթխմոր (դրօժժ),  
մի թէի գդալ աղ, 1 ձու,  $\frac{1}{4}$  զրվ. իւղ. և 2  
զրվ. ալիւր. առաւօտը վաղ այս բոլորը շաղա-  
խիր, խմոր հունցիր և անձեռոցով ծածկիր,  
որ բարձրանայ: Մինչև խմորը կըհամնի՛ պէտք  
է վերցնել կէս դլուխ կաղամք, մանր կտրտել  
փոել մաղի վերայ, եռցրած ջուր ածել վրէն,  
քամել, աղ անել, ածել պղնձի մէջ  $\frac{1}{4}$  զրվ.  
իւղի հետ և տապակել միենոյն ժամանակ խառ-  
նելով, մինչև որ կփափիկի, բայց այնպէս որ  
շայրուի և չկարմրի: Երբ սառչի, պէտք է 2  
պինդ եփած և կտրտած ձու խառնել մէջը, աղ  
ու մի քիչ էլ պղպեղ անել: Երբ խմորը պատ-  
րաստուի՛ պէտք է զրդնակով բաց անել, վրէն  
ածել կաղամքն ու չորս ծայրերը հաւաքելով  
վրէն կանոնաւոր երկար ու քառանկիւնի ձե  
տալ. ախուհետե թիթեղեայ թաւայի վերայ մի.

փոքր իւղ քսելով՝ պիրոզը գնելու և նորա վե-  
րայ և թողինելու է կէս ժամի չափ, որ բարձ-  
րանայ: յետոյ ձուն հարելով՝ վետուրով պէտք  
է երեսին քսել և տաք հնոցի մէջ գնել կէս  
ժամի չափ:

**30.** ԲԲՆՉՈՎ ՈՒ ՀՈՒՈՎ ՊԻՐՈԳ. Խմորը  
պէտք է պատրաստել վերցիշեալ ձեռվ (№ 27):  
Մի բաժակ բրինձը լուա սառը ջրում, այդ  
ջուրը դէն ածա, վրէն նոր ջուր լցրու այնքան,  
որ բրինձը ծածկէ և դիր եփուի: Երբ բրինձը  
փափիկի, միայն չափից աւելի չփուի, ածա  
քամիչի մէջ, վրէն սառը ջուր լից և թող մին-  
չև բոլորովին բամուի. յետոյ ածա բրեղանի  
մէջ, աւելցրու վրէն մէջը սոխ տապակած  $\frac{1}{4}$   
զրվ. իւղ, աղ արա, 2 կամ 3 պինդ եփած և  
մանրացած ձու խառնիր. մնացածը կատարիր  
ինչպէս որ զրուած է № 28-ի մէջ:

**31.** ՄՍՈՎ, ԲԲՆՉՈՎ ՈՒ ՀՈՒՈՎ ՊԻՐՈԳ.  
 $\frac{1}{2}$  զրվ. եփած տաւարի միոր պէտք է մանր  
ծեծել և քիչ տապակել մի գդալ իւղի մէջ.  
 $\frac{1}{2}$  բաժակ բրինձը եփել (№ 29), վերցնել 2  
հատ պինդ եփած ու մանրած ձու, այս բոլո-  
րը խառնել և պիրոզը շինել լստ № 28-ի:

**32.** ԹԱՐՄ ՍՈՒԿԱՎ ՊԻՐՈԳ. 2 զրվ. թարմ  
սունկը մարբիր, կտրտիր, ածա պինձի մէջ,  
աղ, պղպեղ, սոխ և սամիթ աւելցրու և դիր

կրակի վերայ, Երբ սունկը ջուրը թողնէ իրանից և բոլորովին չմշկի, այն ժամանակ մէջը <sup>1/8</sup> զրպ. իւղ և 2 զդալ թթուասեր ածա և լաւ եփիր, որ սունկը հում չմնայ. յետոյ վերցրու կրակից, սառցրու, և 2 զրպ. ալիւրից պատրաստած խմորի մէջ դիր, ինչպէս որ առուած է № 28-ի մէջ:

**33. ՏԱՊԱԿԱԾ ԵՒ ԽՈՐՈՎԱԾ ԶԿՆԵՐ. 2**  
զրպ. մեծ ձկներից, ինչպէս են՝ չչուկա, սպիտակ սաղմոն (բելորիբիցա), սիգա, կապուտ (լեշչա), պերկ (սագան), թառափ (տոհտրինա) և այլն, մաքրիր, լուա, միջից կէս արա, ունաշարը հանիր, կտրտիր, աղ արա և այնպէս թող 1 ժամ, յետոյ շորով ցամաքացրու և վրէն ալիւր կամ փշրած պարսիմատ (սուլսարի) ցանիր. Թաւան պէտք է տարացնել, մէջը <sup>1/4</sup> զրպ. իւղ կամ քաղցը ձէթ դնել և երբ եռ դայ՝ ձուկը մէջը ածել և մի քիշ էլ պարսիմատ ածելով վրէն՝ տապակել երկու կողմից էլ, պատառարազով խառնելով. սկուտղի վերայ ածելուց յետոյ՝ վրէն պէտք է մաղդանոս ածել:

Խորովելու համար՝ ձուկը պէտք է մաքրել, լուանալ, աղ անել, քերել և ամեն կողմը իւղ բսելով՝ դնել հնոցի մէջ. Երբ մի քիշ խորովուի՝ պէտք է ցանել վրէն պարսիմատ և մի

բանի անգամ էլ իրանից թողած զրից, մինչեւ բոլորովին կխորովուի:

Թէ տապակած և թէ խորոված ձկան հետ յարմար է մօտ բերել տապակած գետնախնձոր և սպատ:

**34. ԿԱՏԼԵՏ. Մի գրվանքա փափուկ մսից ոսկորները հանիր, շատ մանր ծեծէ, միջից ջղերը հան, որոնց կարելի է արգանակի մէջ ածել, աղ և պղպիկ արա, մէջը խառնիր թըրջած և քամած բուկի, կէս զդալ իւղ հետը կէս սոխ տապակած, 1 հոմ ձու, մի քիշ չուք կամ արգանակ. այս բոլորը խառնիր, կլոր կլոր կատլէտների ձև տուր. շաղախիր փշրած պարսիմատի մէջ և դարսելով թաւայի վերայ՝ եռցրած իւղի մէջ՝ երկու երեսն էլ տապակիլ. Կատլէտները սկուտղի վերայ դարսելուց յետոյ՝ վրէն պէտք է ածել հիւթը, որ այսպէս է պատրաստում. միմնոյն իւղի մէջ պէտք է 2 զդալ ջուր, սեր կամ թթուասեր ածել, մի երես եռցնել և սոխ կտրտել մէջը. Կատլէտի հետ տալիս են եփած կամ տապակած գետնախնձոր, գետնախնձորի պիւրէ, զաղարի սոսւս, կանաչ սիսեռ և այլն:**

**35. ԵԶԱԿ ԿԱՄ ՀՈՐԹԻ ՈՒՂԵՂԸ ԽՈՐՈՎԱԾ. Ուղեղը պէտք է սառը ջրում դրշել ջուրը փոփելով մի ժամի շափ մինչև որ արիւ-**

նից մաքրուի. յետոյ թաղանթից հանով և ջրի մէջ ողողել, աղ անել. շաղախիր 2 ձուի և փշրած պարսկմատի մէջ և դնելով տակը իւզ քսած թաւի մէջ, վրէն էլ աւելցնելով մանր կտորներով իւզ, գիր տաք հնոցում  $\frac{1}{2}$  ժամի չափ. իր հիւթիցն էլ ածա վրէն։ Հետը կարելի է տալ գետնախնձորի պիւրէ կամ կանաչ սիսո (գալով)։

**36. ԽՄՈՐԻԿՆԵՐ (ՅԼԻԱՅ): Ճաշից 7 ժամ առաջ պէտք է խմոր պատրաստել 2 գրվ. ցորենի ընտիր ալիւրից,  $\frac{3}{4}$  գրվ. գրեշնի ալիւրից. և  $1\frac{1}{2}$  բաժակ գոլ կաթից, նախապէս բացանելով կաթի մէջ 4—6 մսխալ շոր թըթխմոր (գրօժժ), — լաւ հարիր և շորով ծածկելով թող որ բարձրանայ. Ճաշից 2 ժամ առաջ խմորը լաւ հարիր, հետը խառնիր 1 թէյի գդալ աղ, 2 ձու, 2 գդալ իւզ և 1 թէյի գդալ շաքարաւագ։ Նորից հարիր, 3 բաժակ եռցրած կաթ աւելցրու։ Խմորը այն թանձրութիւնը պէտք է ունենայ, որ ակիչն շպէտք է կպչի, այլ թափուի նորանից։ Եթէ խմորը մի քիչ թանձր գուրս չպայ՝ հետը աւելցրած շուրջ աւելցրած։ Թող որ բարձրանայ և էլ ձեռը մի տուր, որ խմորը չնստի, զգուշութեամբ տարչ քուրայի կամ պլիտայի վերայ. վերցրու փոքր թաւայ, մէջը աղ ցանիր, տաքացրու, շո-**

րով մաքրիր, փետուրով իւղ քսիր և յետոյ գդալով այնքան խմոր ածա, որ թաւայի տակը ծածկէ և թխիր։ Երբ խմորիկը բարձրանայ և կարմրի, վրայից պէտք է իւղ քսիր։ Սմեն մի հատը եփելուց առաջ թաւայի մէջ իւղ պէտք է քսիր։

Խմորիկի հետ տալիս են կարագ և թթուասեր, որ այսպէս է պատրաստում. — 3 շիշ կաթի մէջ խառնում են  $1\frac{1}{2}$  բաժակ թարմ և թանձրթթուասեր և դնում տաք սենեակում. Երբ թթուի՛ լաւ պէտք է խառնել և սառը տեղ տանել։

**37. ՍՕԴԱՑՈՎ ԽՄՈՐԻԿ. Սա այն առաւելութիւնն ունի, որ միշտ ուղած ժամանակ կարելի է պատրաստել։ Վերցրու 1 գրվ. ցորենի և 1 գրվ. զրեշնի ալիւր, շաղախիր  $4\frac{1}{2}$  կամ 5 բաժակ տաք զրի մէջ, աղ արա, հարիր և երբ թաւան արգէն տաքացրած է՝ վերցրու մի կիսատ թէյի գդալ լիմոնի աղ, ածա  $\frac{1}{2}$  բաժակ գոլ զրի մէջ, խառնիր և ածա խմորի մէջ  $\frac{1}{2}$  բաժակ գոլ զրի մէջ խկոյն խառնիր մի կիսատ թէյի գդալ սօդա, ածա խմորի վերայ, խառնիր և խկոյն թխիր ինչպէս վերը ասուած է։ Հետը կարելի է տալ իւզ, թթուասեր և խաւիար.**

**38. ԽՄՈՐԻԿՆԵՐ ՄԻԱՅՆ ԱԼԲԻՐԻՑ. Խմորը հոնցում են և թխում ինչպէս № 36-ում ասուած է, միայն շպէտք է խառնել զրեշնի ալիւր, այլ նորա տեղ աւելցնել  $\frac{3}{4}$  գրվ. նոյն ցորենի ալիւրից։**

Արգանակ պատրաստել կարելի է բռւխօնից, կաթից, ջրից, գինուց և դարեջրից: Ձրի արգանակը բոլորովին անհամ է և սննդարար չէ. գինուց ու գարեջրից միտք չունի պատրաստել. որովհետև եփելիս նոյցա միջի ոգին շողիանում է և աւելորդ է գինին ու գարեջրից:

**ՏԵՐ ԵՒ ՍԵՐԸ, ՈՒՏԻՄՈՒԵՑ ԵՒ ՊԵՍՈՒԵՑ ԸՐԳԸՆԸԿՆԵՐ**

### 1. ՄՍԵ ԱՐԳԱՆԱԿՆԵՐ

Արգանակը նոյն բուլիօնն է, այլ միայն մէջը խառնում են ուրիշ մննդանիւթեր՝ միս, բանջար, պտուղ, խմոր և այն: Լաւ արգանակը հետեւեալ յատկութիւններն ունի.

1) Նա շատ մննդարար է, որովհետև պարունակում է իւր մէջ ամենալաւ մննդանիւթեր:

2) Դիւրամարս է, որովհետև մէջը ամեն իւր լուծուած, տրուուած և հեղուկ է:

3) Ջատ համեղ է, որովհետև մէջը ամենահամով մննդանիւթերը կան:

Սակայն բոլոր արգանակները այս արժանաւորութիւնները չունին. երբեմն բոլորովին անհամն են շինում, երբեմն խիստ շատ արմտիք են անում ու համեմներ, այնպէս որ արգանակը գրգռող յատկութիւն է ստանում:

**ԲՈՒԼՔԻՕՆՆԵՐ.** Բուլիօնը ստացւում է միուր ջրի հետ եփելուց: Սորա համար աւելի լաւ է միուր մանր կտրտել, ածել սառը ջրի մէջ և թոյլ կրակի փերայ եփել մինչև եռ գալը: Եթէ ուզում էր, որ միան էլ պէտք գայ ուտելու համար, այդ դէպքում պէտք է ամբողջ կտորը գցէր սառը ջրի մէջ և կամաց կամաց եփեր մինչև եռցնելը, բայց այսպիսով բուլիօնը պակաս համեղ դուրս կդայ:

Բուլիօնի սննդական նշանակութիւնը շատ աննշան է, որովհետև սպիտը մեծ մասամբ քափի հետ դէն է ածուում, բայց որովհետև մէջը աղի ու համ տուող նիւթեր շատ կան, ուստի և բուլիօնը գրգռում է նեարգերը և ախորժակ է գրգռում և ախորժելի համ ունի, ուստի և գործ են դնում միշտ ճաշի սկզբում:

Այս յատկութիւնների պատճառով՝ սրտի գրգռուած գործունէութեան և ստամորսի գրգը-

ռուած դրութեան ժամանակ բուլիօն շպէտք է գործածել, դժբաղաբար հէնց այդ դէսքի-  
րումն է ժողովուրդը բուլիօն գործ ածում,  
սննդաբար և միանդամայն անվնաս կերակուր  
համարելով:

Դիտնական փորձերը ցոյց են տուել, որ  
բուլիօնը ամենալաւ զրգուիչ միջոցն է ֆիզի-  
քապէս (մկանային) աշխատողների համար, ա-  
ւելի քան սուրճն ու ալքօօլը: Բայց ի նկատի  
պէտք է ունենալ, որ բուլիօնը անվնաս է մի-  
այն երբ քիչ քանակութեամբ է գործ դրում  
և առողջ երիկամունքների համար: Երիկամունք-  
ների հիւանդութեան ժամանակ և կամ երբ  
մնձ քանակութեամբ են զործ դնում, բուլիօնը  
ոչ միայն օգտակար չէ, այլ մինչև անդամ կտ-  
րող է թունաբութիւն առաջ բերել:

Բայց կան միջոցներ, որոնցով կարելի է  
առաւել սննդաբար բուլիօն ստանալ: Սորա  
համար պէտք է տաւարի կամ հաւի միսը մանր  
կտրտել և 10 ժամ ածել աղաջրի մէջ, յետոյ  
ժոյլ կրակի վերայ եփել առանց քափը քաշե-  
լու, որովհետեւ քափի հետ դնում է և սպիտա-  
յին նիւթերը և այն ժամանակ բուլիօնը միան-  
դամայն զուրկ է լինում մննդաբար լինելուց:  
1/2 ժամից յետոյ բուլիօնին աղ պէտք է ա-  
նել. 3 ժամից արդէն պատրաստ կլինի: Աւելի

գեղեցիկ գոյնի կլինի բուլիօնը, եթէ գոյն  
տանը նորան իւղի մէջ խաշած մաքուր արմը-  
տիք խառնելով: Ամբողջ հեղուկը պէտք է մա-  
զի մէջ քամել, իսկ մնացած միսը պէտք է  
ճնշել: Այս տեսակ բուլիօնի մէջ սպիտային  
նիւթերն աւելի շատ են ( $1,5 - 2,0\%$ ):

**39. ՄՍԷ ԱՐԳԱՆԱԿԱՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՆ  
ԱՌԴԱՍՍԱՐԱԿ.** 4 հոգու համար պէտք է վերց-  
նել 1—2 գրլ. տաւարի միս՝ բուլիօն, պոչուկից,  
կոկողնակից, բղի տակից, թիակամսից, ողնաշ-  
րից կամ հարսնակուլից: Տաւարի միսն առաջ  
պէտք է լուանալ, բայց չքամել, ածել պղնձի մէջ,  
վրէն ածել 10 բաժակ ջուր, մի քանի անդամ եփ  
տալ թէժ կրակի վերայ, քափը քաշել (կարելի  
է և քափը մէջը թողնել, որովհետեւ նա իր մէջ  
աւելի սննդաբար մասեր է պարունակում): Սո-  
խը,  $1/2$  գաղարը, մի փոքր մաղդանոս, մի քիչ  
նեխուր, պրաս մաքրեցէք, լուացէք, մանր կտրր-  
տեցէք և բոլորը միասին մի քիչ խորովեցէք  
պլիտայի երկաթի վերայ, յետոյ ածեցէք ար-  
գանակի մէջ և թողէք որ թոյլ կրակի վերայ  
կամաց կամաց եփուի մինչև ճաշը: Եյն ար-  
գանակը, որ շինուալ է տաւարի մսից և թարմ  
արմտիքներից, առանց դափնի տերևի և պղդ-  
պեղի, կոչւում է բուլիօն:

Եթէ մէջը կրուպա (քարասերմնիկ) են

ածում; դա կոչւում է արգանակ, որին կարելի է սպիտակ գայն տալ մի բաժակ կաթով, մանաւանդ երբ որ առանց մսի են եփում:

Եթէ մասազրի մէջ ճակնդեղ են անում՝ կոչում է ըորշչէ: Իսկ եթէ անում են թթու կամ թարմ կաղամբ՝ շչի է կոչում: Բօրշչը, շչին և այլն կարելի է սպիտակացնել մի բաժակ թթուասեր ածելով:

Բուլիօնին ճաշից քիչ առաջ պէտք է ազանել և տաքացնել: Նորան անում են սամիթ և մաղղանոս:

40. ՏԱԿԱՐԵ ՄԻՍ. Միշտ պէտք է թարմ միու առնել և ամենալաւից, որովհետև առողջութեան համար ոչ թէ նորա բանակութիւնն ունի նշանակութիւն, այլ որակութիւնը: 4 մարդու համար օրական անհրաժեշտ է 3 գրլ, միս առնել պոշուկից, որովհետև նորանից կարելի է և արգանակ պատրաստել և տապակած: Ոռկորներից՝ արգանակ, իսկ փափուկ մսից տապակած կամ կատլէտ:

41. ՏԱՊԱԿԱՆԵՐԵ ՄԱՍԻՆ. Տապակածի համար կառան մսի կարեսը մսերն ընտրելով՝ մնացած ոսկորներից կարելի է արգանակ եփել արմադիներով և պերլովայա կրուպով:

Տապակածի հորթի մսի ոսկորներից՝ շինում է արգանակ գետնախնձորի պիւրէով:

Տապակածի տաւարի մսի ոսկորներից առելացնելով վրէն 1. գրլ. կրծքամիս եփում են թթու շչի:

Եթէ տաւարի մսի ճարպը դեղին է՝ պառաւի միս է, իսկ եթէ սպիտակ է՝ ջահիլինն է: 42. ԻՆՉՊԵՍ ԽՄԱՆԱՆՔ ԲՈՒԼԻՇՈՆԸ, ԳԵՏՆԱՆՉՈՐԸ, ՏԱՊԱԿԱՆ ԵՒ ԱՅՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԹԷԶէ: Պէտք է պատառաքաղով տեսնել, եթէ հեշտ է մտնում մսի, գետնախնձորի մէջ և այլն, կընշանակի պատրաստ է:

43. ԱՐՄՏԻ-Ք, ԳԵՏՆԱԽՆՉՈՐ ԵՒ ԿԱՆԱՁԻ ՄԱՅՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ. Արմադիրը պէտք է ողողել կամ ուղղակի 5 բովէ ջրի մէջ ածել, յետոյ դանակով ցեխուրը քերել, լաւ լուանալ և ջրի մէջ պահել մինչև եփելը: Գետնախնձորը դանակով կճպել և խալսն ածել ջրի մէջ, որ չը սեանայ: Իսկ կանաչու փշացած մասերը հեռացնելով՝ լուանում են, ածում են խախալի մէջ նորից ջուր են ածում վրէն և կտրտում:

44. ԱՐՄՏԻ-ՔՊՈՎ. ԵՒ ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ. ՄԸՍԱՁՈՒՐ. 2 գրլ. տաւարի մսից և արմադիրից եփել մսաշուր ինչպէս ասուած է № 37-ում. Ճաշից  $\frac{1}{2}$  ժամ առաջ վերցրու 1 թարմ գաղար, 1 մաղղանոս, 1 շաղգամ և 1 ափսէ լիքը գետնախնձոր, այդ բոլորը մաքրիր, լուա, կտրտիր և ածա բուլիօնի մէջ: Երբ որ եփուի՝

ածա մէջը մաղղանոս կամ սամիթ։ Միսը կարելի է և առանձին հանել։

45. ԱՐՄԾԻՑՈՎ, ԳԵՏՆԱԽՉՈՐՈՎ, ՇԱՀԿԱՄՈՎ, ԵՒ ԿԱՂԱՄԲՈՎ, ՄՍԱԶՈՒՐ, 2 գրվ. տաւարի մսից և խորոված արմատներից եփիր մսաջուր № 37-ի եղանակով։ Ճաշից մէկ ժամ առաջ մէջը աւելացրու 1 հատ մաքրած և կտրուած քաղցր շաղղամ,  $\frac{1}{2}$  գաղար,  $\frac{1}{2}$  մաղղանոս,  $\frac{1}{4}$  զլուխ թարմ կաղամբ 4 կտոր արած և կէս ժամ էլ առաջ 6 հատ կտրուած զետնախնձոր, և այս բոլորը լաւ եփիր. ածելիս վրէն աւելացրու կանաչի։

46. ՊԻՐՕԺԿՈՎ, ՄՍԱԶՈՒՐ, 2 գրվ. տաւարի մսից և մի քիչ խորոված արմատներից եփիր մսաջուր № 37-ի կերպով։ Ճաշից մի ժամ առաջ մսաջրից միսը պէտք է հանել և մանր ծեծել։  $\frac{1}{2}$  գդալ իւղի կամ մսի շաղղութեան մէջ մի քիչ տապակել  $\frac{1}{2}$  սոխի զլուխս մանր կտրած, միսը ածել նրա մէջ, աղ և պղպեկ անել և խառնել։ 1 ձու, քիչ ջուր,  $\frac{1}{2}$  գդալ աղ և  $1\frac{1}{2}$  բաժակ ալիւր խառնելով պինդ խմոր հունցիր. բաց արա շատ բարակ, միսը մանր մանր գունդերով դարսիր խմորի վերայ, խմորի միւս կէսը ծածկիր վրէն, ափերը ջրով թաց արա, բաժակով մանր սլիրոժկիր կտրուտիր և ծայրերը ամրացրու. ճաշից  $\frac{1}{4}$  ժամ

առաջ ածա եռցրած մսաջրի մէջ. երբ կրարձրանան ջրի երեսին՝ պղինձից ածա և մէջը աւելցրու մաղղանոս կամ սամիթ։

47. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՐԳԱՆԱԿ,  $1\frac{1}{2}$  գրվ. տաւարի մսից ոսկորներն ու ջղերը հանելով, լուա, մանր կտրտիր, ածա 8 բաժակ եռցրած սառը ջրի մէջ և ամբողջ գիշերն այնպէս լիսկ։ Նախաճաշի ժամանակ աղ արա, 4 կտոր ծեծած շաքար և 1 կամ 2 հում ձուի դեղնուց. ածա կաթուայի մէջ և դիր բուրայի վերայ ու տաքացրու։ Միսը, իբրև բոլորովին անպէտք, պէտք է դէս ածել։

48. ԳԵՏՆԱԽՉՈՐՈՎ, ԵՒ ԲԲՆԶՈՎ, ԿԱՄ ՄԱՐԴԱՐԱՍԱՍԵՐԻԿՈՎ, (Պերլօայ երսա) ԱՐԳԱՆԱԿ, եփիր մսաջուր № 37-ի պէս։ Ճաշից երկու ժամ առաջ մէջն ածա 1 գինու բաժակ մարդարտասերմիկ կամ բրինձ, իսկ կէս ժամ առաջ 1 գրվ. մաքրած զետնախնձոր և եփիր։ Ածելիս վրէն կանաչի ցանիր։

49. ՄԱԿԱՐՈՆՈՎ, ԵՒ ԳԵՏՆԱԽՉՈՐՈՎ, ԱԲԳԱՆԱԿ, 2 գրվ. տաւարի մսից և արմտիքից մսաջուր եփիր № 37-ի պէս։ Ճաշից կէս ժամ առաջ մէջը ածա մի գրվ. հում գետնախնձոր, իսկ յետոյ  $\frac{1}{4}$  գրվ. մանր կտրտած մակարօն և եփիր, ածելիս ցանելու է կանաչի։

50. ԷԲԻՇԱՅ (յափա), 2 գրվ. տաւարի

մսից և արմտիքից եփիր մոաջուր ինչպէս ասուած է՝ № 37-ում։ 1 ձու, աղ, ջուր,  $\frac{1}{2}$  գրվ. ալիւր միասին խառնիր և պինդ խմոր հոմնցիր. բարակ բաց արա, վրէն ալիւր քսիր, շերտ շերտ կտրտիր, շերտերը միմեանց կողքին շարիր, սուր դանակով մանր կտրտիր, սեղանի վերայ փռիր, որ չորանայ և ալիւրը մարրիր։ Ճաշից առաջ էրիշտան ածա եռցրած մսաջրի մէջ, մի թէյի գդալ աղ արա և նորից եփ տուր։ Երբ էրիշտան ջրի երեսին բարձրանալ՝ արդէն պատրաստ է, պէտք է ածել և վրէն կանաչի ցանել։

51. ԳԵՏՆԱԽՆՉՈՐՈՎ. ՍՐԳԱՆԱԿ. 2 գրվ. տաւարի մսի հետ խառնելով 1 սոխ, 1 զափնի տերի և քիչ բահար՝ մոաջուր եփիր № 37-ի համեմատ։ 1 գրվ. մաքրած գետնախնձորը և մի բուլիու երրորդ մասը եփիր այս մսաջրի մէջ, աւելցրու վրէն՝  $\frac{1}{2}$  գդալ իւղի մէջ  $\frac{1}{2}$  սոխը մանր կտրտած և տապակած ու եփիր։ Յետոյ միաը հանիր, իսկ մոաջուրը քամիր քամիչի մէջ, աղ արա, նորից մէջն ածա կտրտած միսը, կանաչի աւելացրու և տար սեղան։

52. ԹԱՐՄ ՍՈՒՆԿՈՎ. ՍՐԳԱՆԱԿ. 2 գրվ. տաւարի մսից և 1 սոխից մոաջուր եփիր № 37-ի համեմատ։ Կէս ափսէ սպիտակ թարմ սունկը մարրիր, լուա, շաղախիր մի գդալ ալիւրի մէջ,

մի քիչ տապակիր թաւայի մէջ մի գդալ իւղի և մանր կտրտած սոխի հետ, ածա մսաջրի մէջ, մէջը մի քանի հատ մաքրած և մանր կըտրտած գետնախնձոր ածա, մի քանի անգամ եփ տուր, որ սունկի ու գետնախնձորը հում չմնան. ածա մէջը թթուասեր և մի քիչ պըղպեղ և հանելուց յետոյ կանաչի արա։

53. ԲՕՐՇ. 2 գրվ. շաղ տաւարի մսից և արմտիքներից եփիր մոաջուր № 37-ի համեմատ։ 2 ճակնդեղ (ճարխալ),  $\frac{1}{2}$  գաղար,  $\frac{1}{2}$  սոխի դլուխ և 2 գետնախնձոր՝ մաքրիր, բարակ կտրտիր, ածա կաթսայի մէջ, աւելցրու  $\frac{1}{2}$  դլուխ թթու կաղամք, 1 գափնի տերի, սղպեղ, մի գդալ իւղ և 2 գդալ մսաջուր, խառնիր միասին, դիր թոյլ կրակի վերալ, ծածկիր և երեխմն խառնիր։ Երբ ճակնդեղը փափկի, վրէն մսաջուր ածա այնքան որ ծածկի և թող որ քիչ քիչ եփուի, լցնելով մէջը թթուասեր։ Կարելի է նաև առանձին մօտ բերել թթուասերը։ Ամանների մէջ ածելուց յետոյ մաղդանոս և սամիթ ցանիր մէջը։

54. ԹԱՐՄ ԿԱՐԱՄԲՈՅ. ՇԶԻ. 2 գրվ. տաւարի մսից եփիր մոաջուր № 37-ի համեմատ։  $\frac{1}{2}$  գլուխ կաղամքը մաքրիր և 4 մասն արա։ Ճաշից  $\frac{1}{2}$  ժամ առաջ ածա մսաջրի մէջ կըտրտած գաղարի հետ և ածելով մէջը  $\frac{1}{2}$  բա-

ժակ սառը ջրում բաց արած մի գդալ ալիւր,  
եփ տուր. կերակուրն ածելիս սպիտակացրու  
 $\frac{1}{4}$  կամ  $\frac{1}{2}$  բաժակ թթուասերով և կանաչի  
արա:

55. Թթու ԿԱՂԱՄԲՈՎ. ՇՁԻ. 2 գրվ. տա-  
ւարի մսից, 1 սոխից, աւելացնելով և 1—2  
չոր սոնկ և 1 գավինի տերև՝ եփիր № 37 մր-  
սաշուր: 1 գրվ. թթու կաղամբը քամիր, կը-  
տրտիր, մի գդալ իւզի մէջ  $\frac{1}{2}$  գլուխ մանր  
կտրուած սոխը քիչ պղպեղով տապակիր մինչեւ  
որ փափկի և ածա մսաշըրի մէջ, եփիր այն-  
քան, մինչեւ որ կաղամբը փափկի, հետը խառ-  
նիր ջրի մէջ լուծած մի գդալ ալիւր, եփ տուր,  
սեղան տանելիս թթուասերով սպիտակացրու,  
կամ թթուասերը առանձին մօտ տար:

56. ԿԱՆԱԶ ՇՁԻ ԵԳԻՆՃՈՎ. 2 գրվ. տա-  
ւարի մսից եփիր № 37-ի մսաշուր, մէջը մի  
գդալ ալիւր ածա և եփ տուր. 1 գրվ. մատղաշ  
ու մաքրած եղինճը լուս, ածա եռցրած աղա-  
ջըի մէջ, եփ տուր, խախալի մէջ լցրու, քամիր,  
մանր կտրտիր, խակոյն լցրու եռցրած մսաշըրի  
մէջ, եփիր մինչեւ փափկելը և ապա թթուա-  
սերով սպիտակացրու ու սամիթ արա:

57. ԿՈՐՄԵՐ ՊՈՐԻՆՃԱՆՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. 2  
գրվ. տաւարի մսից եփիր մսաշուր № 37-ի  
համեմատ: 1 գրվ. կարմիր պորինճանի սեր-

մերը գին ածա, մնացածը կտրտելով ածա  
կաթսայի մէջ, եփիր, քամիր և մէջը աւելացնե-  
լով 1 գդալ ալիւր, խառնիր մսաշըրի մէջ, եփ  
տուր և աւելացրու մէջը մի քիչ թթուասեր:  
Կարելի է շնել և առանց թթուասերի:

58. ԳԱՌԱՆ ՄՍՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. 2 գրվ.  
գառան միսը սառը ջրում լուս, վրէն ջուր  
ածա, եփիր, քամիր քաշիր և մէջն ածելով մի  
սոխ, գավինի տերև և աղ ու պղպեղ, թող որ  
թոյլ կրակի վրայ եփուի, ձաշից մի ժամ տ-  
ռաջ մէջն ածա արմտիր, քիչ էլ եփիր և երբ  
հանես՝ կանաչի արա:

59. ՀԱՒԻ ՄՍՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. Հաւը մար-  
քիր, փորոտիքը հանիր, կտրտիր, վրէն ջուր  
ածա և եփիր, յետոյ մէջը լցրու 1 գինու բա-  
ժակ բրինձ, մարգարտասերմիկ կամ ման-  
նալեա կրուպա հայն, աղ արա, եփիր և հա-  
նելիս կանաչի արա:

ՀՆԴՈՒԶԱԽԻ ՈՏ ՈՒ ԳԼԽՈՎ. ԱՐԳԱՆԱԿԲ  
պատրաստում է միննոյն կերպով, ինչպէս  
հաւի մսով արգանակը:

ՀՆԴՈՒԶԱԽԻՈՎ. ԱՐԳԱՆԱԿ Նէլ նոյն ձեռվ  
է շնւռաւմ:

60. ԲԱԳՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. Տանու բաղը ե-  
փիր արմտիրի հետ, աւելցնելով մէջը 2 գափ-  
նի տերև, քիչ պղպեղ և աղ, 3 չոր սոնկ և

քամիր: 1 գինու բաժակ եփած մարզարտասերմիկը, մանր կտրտած սունկը և թխուասերլցրու արգանակի մէջ և եփիր մինչև կըպատրաստուի: Ածելիս՝ վրէն կանաչի արա:

61. ՍԱԳՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. պատրաստում է № 60-պէս:

62. ՀՈՐԹԻ ՄՍՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. 2 գրվ. հորթի միսը կտրտիր, լուա, մի անդամ եփ տուր, քափը քաշիր, հանիր, նորից սառը ջրում լուա, աղ արա, նոյն մսաջուրը քամելով՝ միսը մէջն ածա, աւելցրու գաղար, սոխ և եփիր. մէջը լցրու  $\frac{1}{4}$  բաժակ բրինձ և նորից եփիր:

63. ՃԱԿՆԴՅԴ. ՏԵՐԵՒՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. 2 գրվ. տաւարի մսից և արմտիքից ու չորս սունկից պատրաստեցէք № 37-ում յիշուած մսաջուրը և քամեցէք: Ճակնդյդի տերիները մաքրեցէք, լուացէք, կտրտեցէք և ածելով մսաջրի մէջ եփեցէք, մէջն ածեցէք մի գդալ ալիւր և նորից եփ տուէք: Ածելիս պէտք է ցանել վրէն կտրտած մաղդանոս:

64. ՄԱԿԱՐՈՆՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. 2 գրվ. տաւարի մսից և արմտիքից եփել մսաջուր № 37-ի համեմատ: Մակարօնը կտրտելով ածել եռցրած ջրի մէջ և եփել. երբ եփուի՝ քամել և դարձեալ ածել պղնձի մէջ, մսաջուրը ածելով վրէն՝ եփել թոյլ կրակի վերայ: Ուրիշ պղնձում ածել

1 ձուի դեղնուց և  $\frac{1}{2}$  բաժակ սեր ու խառնել, սորա վերայ ածել 1 բաժակ տաք մսաջուր, լաւ խառնել և տաքացնելուց յետոյ բամել մսաջրի մէջ, աւելցնելով աղ և պղպեղ:

65. ԱՐՏԱԼՈՒ. Կովի արտալան և կուրծքը պէտք է կտրտել և լուանալ, չուրը եռ տալով միսն ածել մէջը և եփել այնքան, մինչեռը լաւ եփուի և մսաջուրը մի քիչ թանձրանայ. ածելիս վրէն ցանել կտրտած նեխուր:

66. ԽԱԾ. Ոշխարի կամ կովի ոտները, թափանը, շլկանը և աղիքները մաքուր լուապիքները չուռ տուր, միջի կեղտը մաքրիր, յետոյ անցկացնելով տաք ջրի մէջ՝ գանակավ քերիր, որ բոլորովին կեղտից մաքրուի, ապա մանր մանր կտրտիր բոլորը, խոկ ոտները միջից ճղիր, հանիր մէջի կոշտերը. այս ամենն ածա պղնձի մէջ, սառը ջրով լուա և մի ամբողջ գիշեր այդպէս թող, որ հոտը գուրս գայառաւուր մի քանի անդամ նորից լուանալով՝ գիր կրակի վերայ որ եփուի, մինչի որ ջուրը քիչ թանձրանայ:

Ցանկացողը խաշը կարող է ուտել սըխտորով:

67. Վ.ՅՈՒՆՈՎ. ԵԽ ԿԱՐՄԻՐ ՊՈՐԻՆԱԼԱՆՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. Վառեկը մաքրիր, կտրտիր և լուա. 8 գլուխ սոխը մանր կտրտելով՝ տապակիր  $\frac{1}{4}$

գրվ. իւզի մէջ. 3 գրվ. սլորինճանը ածա տաք  
ջրի մէջ, որ հեշտ կճպուի, կճպիր, կսրիպը մի՛-  
ջից հանիր և մնացածն ածա տապակած սոխի  
մէջ վառեկի հետ միասին, աւելցրու 2 բաժակ  
ջուր, աղ արա և եփիր մինչև վառեկը լաւ կեփուի:

68. ԲՈՉԱՐԹՄԱ. 2 գրվ. ոչխարի միս  
կտրտիր, լուա, ածա պղնձի մէջ. եփիր քափը  
քաշիր. եփելուց յետոյ մսաջուրը քամիր, 6 գր-  
լուխ սոխը մանր կտրտիր, վրէն ածա մսաջրի  
շաղութիւնից և մէջը տապակիր, յետոյ մէջը մսա-  
ջուրն և եփած միսը լցնելով և աւելցնելով աղ  
ու պղպեղ, դարձեալ եփիր. իսկ ածելիս՝ վրէն  
համեմ ցանիր:

69. ՍԵՐԿԵՒԻԼՈՎ. ՄԻՍ. 2 գրվ. ոչխարի չաղ  
միսը կտրտիր, լուա և ածա պղնձի մէջ, վրէն  
բաւական ջուր ածա, եփիր, քափը քաշիր. ե-  
փելուց յետոյ քամիր, միջից աւելորդ ոսկորնե-  
րը ջոկիր: 4 զլուխ սոխը մանր կտրտած քիչ  
տապակիր մի գգալ իւզի մէջ: Այնուհետեւ միսը  
և մանր կպճած, մարբած և կտրտած 4 գրվ.  
սերկեիլը ածա սոխի մէջ, մսաջուրն էլ վրէն, քիչ  
էլ աղ և եփիր մինչև որ սերկեիլը բոլորովին  
վափիր:

70. ԳԱՐԱՆ. ՄՍՈՎ. ԶԻՐԹՄԱ. 2 գրվ.  
գառան միսը պէտք է կտրտել, լուանալ, ածել  
պղնձի մէջ, վրէն այնքան ջուր ածել, որ միսը

ծածկէ, եփել և քափը քաշել և քամել: 4 գը-  
լուխ սոխը մանր կտրտած, գառան մսի գմակի  
հետ տապակել և վրէն ածել քափը քաշած  
միսն ու մսաջուրը, զաֆուան, աղ ու քիչ պըդ-  
պեղ անել և մի քիչ եփել: Ճաշից առաջ 4  
ձուի գեղնուցը լաւ հարելով խորը ամանի մէջ  
պէտք է ածել վրէն 2 գգալ սպիտակ քացախ  
ու խառնել, յետոյ պղնձը կրակից վերցնելով  
մէջը ածա ձուն ու քացախը, շարունակ  
խառնելով, որ ձուն չկտրուի: Ամանների վերայ  
հանելիս վրէն մանր կտրտած տարխուն են  
անում:

71. ՀԱԻԻ ԶԻՐԹՄԱ. Միկնոյն ձեռվ է  
եփում, ինչպէս գառան մսի չխրթման. միայն  
սոխը փոխանակ գմակի՝ տապակում հն իւզով:

72. ՅԻՒՖԹԱ-ԲՕԶԲԱԾ. 3 գրվ. ոչխարի  
կամ գառան վափուկ ու չաղ մսերը ջոկիր,  
կտրտիր և լաւ ծեծիր: Ոսկոտ մսերն էլ ե-  
փիր ու քափը քաշիր և քամիր: ծեծած մսի  
հետ լաւ ծեծիր  $\frac{1}{2}$  գրվ. մարբած սոխը, յե-  
տոյ հետը խառնիր 2 ձու, աղ ու պղպեղ. այդ  
պատրաստ միսը մանր մանր կլորացրու աղած  
բղնձի մէջ և գարսիր պղնձի մէջ, վրէն լցրու  
քամած մսաջուրն ու եփիր, եփելու ժամանակ  
աւելցրու քիչ զաֆուան, համեմ և ով ցանկա-  
նում է մի քիչ էլ րրինձ:

73. ԲԲՆՉԱՎ. ԱՐԳԱՆԱԿ (ՇՈՐՎԱՅ). ՄԵ  
վառեկը շորս կտոր արա, լուա, դիր պղնձի  
մէջ, աղ արա, և բաժակ ջուր ածա, մի գի-  
նու բաժակ էլ բրինձ. եթէ վառեկը շատ լզար  
է՝ մի սեղանի զղալ էլ իւղ արա և եփիր մինչ-  
չև որ բրինձը լաւ եփուի և մի քիչ շիրայ  
թողնի:

74. ԿԱԹՆԱՓՈՒՐ. Այն ամաելը, որի մէջ կաթը  
պիտի եփեր, պէտք է նախապէս սառը ջրով  
ողողել: Երես չքաշած կաթը պէտք է այն-  
քան եռցնել, մինչև որ վրբուրը բոլորովին  
նստի: Երգանակ ստանալու համար՝ կաթի  
մէջ կարելի է լցնել 3 մսխալ օոլայ, մակա-  
րոն, ձու, բրինձ, չոկոլադ կամ պարսիմատ:  
Կարելի է շինել և խմորիկներով: Գետնախն-  
ձոր երեք չպէտք է անել:

75. ԿԱԹՆԱՎ. ԵՒ ՄԱՆՆԱՅԱ. ԿՐՈՒՊՈՎ. ԱՐ-  
ԳԱՆԱԿ: 6 բաժակ կաթը եռցրու, մէջն ածա  
1 դինու բաժակ մաննայա կրուպա, եփիր,  
լաւ խառնելով որ կոշտեր շմնայ և պղնձից  
ածելուց յետոյ մէջը աղ արա:

76. ՀԻՒՈՒԴԻ ԲՈՒԼՅՈՒ. 2 գրվ. փափուկ  
և ճարպից մաքրած տաւարի կամ հորթի հում  
միսը մաներ կտրտելով ածում են լայնարերան  
շշի մէջ, բերանը խցանով պինդ փակում և  
չորսվ կապում և դնելով դոլ ջրով լի պղնձիք

մէջ՝ եփ են տալիս 20 լոսկչաշափի, մինչև որ  
շշի մէջ կաղմուի մոյզ դեղին թանձր արդա-  
նակ: Յետոյ զգուշութեամբ հանում են, բե-  
րանը բաց անում և մսաջուրը քամում: Այս  
տեսակ բուլիօնը շատ մննդարար նիւթեր է  
պարունակում (սպիտ, խիժային նիւթեր, պէպ-  
տօն), ախորժ և թեթե կերպով գրգռող համ  
ոնի: Տաւարի մսից ստացւում է աւելի թունդ,  
իսկ հորթի մսից աւելի քնքոյշ բուլիօն:

77. ԻՍԿԱԿԱՆ ԲՈՒԼՅՈՒ. 2 գրվ. միս,  
10 բաժակ ջուր, մի քիչ կտրտած գաղար,  
արմտիքներ, 2 գլուխ չկճապած, խորոված և  
միջից կիսած սոխ, դափնի տերե, բահար,  
միասին պէտք է լաւ եփել. մի կտոր շաքար  
այրելով պլիտի վերայ՝ զցել մէջը գոյն տալու  
համար: Պարզացնելու համար՝ մի կտոր միս  
պէտք է ծեծել և խառնել 2 ձուի հետ. բու-  
լիօնի միսը երբ լաւ եփուի՝ մսերը պէտք է  
հանել և մէջը ածել ձուի խառնուրդը ու կա-  
մաց կամաց եփել մինչև ճաշ: Ճաշից առաջ  
մսաջուրը պէտք է քամել մաքուր անձեռոցի  
մէջ:

78. ԱՐՄՏԻՔՈՎ. ԱՐԳԱՆԱԿ. Եփիր մսա-  
ջուր № 37-ի պէս: Պղնձի մէջ կտրտիր սոխ,  
գաղար, արմտիք, բաւական իւղ արա, քիչ  
էլ մսաջուր և լաւ տապակիր, աւելցրու մէջը

մի քիչ ալիւր, այնքան որ շթանձրանայ: Յետոյ մէջը ածա մսաջրից<sup>6</sup> բաժակ, խառնիր, որ կոշտեր չմնայ, մէջը վարունդ կտրտիր: Իսկ սեղան տանելիս՝ խառնիր 1 բաժակ թթուասեր. եթէ բաւական թթու չլինի, մի քիչ էլ լիմոնի աղ արա:

79. ԽՆՉՈՒՐԵ. Արգանակ պատրաստում են ամենից շատ խնձորից, ալուրալից և սալորից: Պէտք է 1 ֆնտ. խնձորը կճպել, սերմերից մաքրել, կտրտել հաւասար կտորների, հետո խառնել լիմոնի կճեպ, մանր կտրտած և եփել մի լիտր ջրի մէջ: Երբ խնձորը փափկի՝ պէտք է մազի մէջ տրորել: Կարելի է մէջը մի թէյի գդալ գետնախնձորի ալիւր աւելցնել: Սովորաբար աւելցնում են 2 գդալ էլ շաքար, նորից եռցնում են, քափը քաշում և սեղան բերում: Երբեմն խնձորի ապուրի մէջ 1—2 բաժակ սպիտակ դինի են ածում:

80. ԱԼՈՒԲԱԼԵ. ԱՐԴԱՆԱԿ. 1 ֆնտ. ալուրալուց կորիզները հանիր, աւելցրու մի քիչ լիմոնի մանրած կճեպ և 2 գդալ շաքար և եռցրու մի լիտր ջրի մէջ. Երբ ալուրալը փափկի՝ աւելցրու մէջը դանակի ծայրով քիչ գետնախնձորի ալիւր:

Ալուրալէ արգանակ դինիով այսպէս են շինում. վեցնում են դինին, ալուրալի հիւթը և

ջուր իւրաքանչիւրից<sup>1/3</sup> լիտր, լիմոնի կեղեկտրտած և 3 գդալ շաքար, եռցնում են, վրէն քամում են քիչ լիմոն, մէջը լցնում են: մի ամրողջ ձու 2 գդալ ջրի մէջ բաց արած և մի թէյի գդալ գետնախնձորի ալիւր: Եթէ արգանակը շատ թանձր լինի՝ մէջը պէտք է 1—2 գդալ եռցրած ջուր աւելացնել:

81. ՍԱԼՈՐԵ. ԱՐԳԱՆԱԿ 2<sup>1/2</sup> գրվ. սալորը մաքուր լուա, կորիզները հանիր և ածա մի լիտր ջրի մէջ, աւելացրու լիմոնի կեղելը մանրած. Երբ սալորը փափկի՝ մազի միջից տրորելով անցկացրու, մի բաժակ սպիտակ գինի աւելցրու, 2 գդալ շաքար և մի թէյի գդալ օսլայի ալիւր:

Եյսպէս է պատրաստում զօղոշի պուրը:

## 2. ԶԿԱՆ ԱՐԳԱՆԱԿՆԵՐ

82. ՕՐԱԳՈՒԷԼԻ ԱՐԳԱՆԱԿ. Օրագուլը կտրտելով՝ մի քանի անգամ լաւ լուա, սովոն էլ տափակ տափակ կտրտիր. պղնձի մէջ դարսիր մի կարգ օրագուլ, վրէն մի կարգ սոխ, աղ ու պղպեղ, նորից օրագուլ, նորից սոխ ու պղպեղ մինչեւ վերջանայ, վրէն քիչ ջուր ածա մինչեւ ծածկէ և զիր կրակի վերայ, քափը քաշիր և եփիր, ածելով մէջը թթած զափոան, իսկ հանելիս ով ցանկանայ կտրտած համեմ:

88. ԱՍԵՏՐԻՆ ԶԿՆՈՎ, ԱՐԳԱՆԱԿ. 1 գր-  
դակալ իւղի մէջ տապակիր 1 գլուխ սոխ, 2 բա-  
ժակ քամած թթու կազամբ, ջուր ածա վրէն,  
աւեցըռու 2 դափնի տերև, պղպեղ, մի գգալ  
էլ ալիւր և եռցըռու, յետոյ լցըռու մէջը 2 գրվ.  
աղ արած ու կտրտած ձուկ և եփիր մինչեւ  
կըպատրաստուի: Հանելիս կանաչի արա: Սորտ  
համար գործ է դրւում թէ թարմ, թէ աղած  
և թէ շորացրած ձուկը:

### 3. ՊԵՍՈՒԱՅՑ

84. ԱԶԱՓՍԱՆԴԱԼ. 2 գրվ. կճպած և  
կտրտած պոմադոր, 3 գլուխ մանր կտրտած  
սոխ, 10 պորինճան կճպած և լայնութեան վե-  
րայ կտրտած, քիչ համեմ, ուեհան, պրաս, բոլո-  
րը կտրտած, մի վինու բաժակ ջուր, քիչ աղ  
և պղպեղ, 6 հատ զետնախնձոր կճպած ու կը-  
տրտած և  $\frac{1}{2}$  գինու բաժակ ձեթ միասին  
պէտք է ածել պղնձի մէջ, ծածկել և իւր գո-  
լորչու մէջ եփել մինչեւ լաւ կեփուի:

85. ՍԻՍԵՐԻ ԱՐԳԱՆԱԿ. 1 գրվ. սիսեռը  
գիշերը զըջիր եռցրած ջրում. միւս առաւոտ  
լուա, պղնձի մէջ ածա ջուր, քիչ աղ և եփիր  
մինչեւ մէջը հում շմնայ: Յետոյ ուրիշ ամանի  
մէջ 4 գլուխ սոխ կտրտիր և 4 գգալ ձեթի մէջ

տապակիր, ածա սորտ մէջ եփած սիսեռը, 5  
բաժակ իւր ջրից, քիչ զաֆռան, կտրտած կա-  
նաչեղին, 1 գգալ սպիտակ ալիւր, իսկ ով  
ցանկանում է՝ ալիւրի փոխարէն բրինձ և մի  
քիչ էլ եփիր ու բաւական է:

86. ՍՈՒՆԿԻ ԱՐԳԱՆԱԿ.  $\frac{1}{2}$  գրվ. չորս սունկը  
գիշերը դոջիր եռցրած ջրի մէջ. միւս առա-  
ւոտը ջրից հանիր և կեղտից մաքրիր ու օմանը  
կտրտիր: Մի ափսէով մանր կտրտած սոխը  
տապակիր  $\frac{1}{4}$  գրվ. ձեթի մէջ. մէջը ածա կը-  
տրտած սունկը և էլի մի քիչ տապակիր. յետոյ  
սունկի քամած զուրը վրէն ածա չորս խորը  
ափսէի չափ. արա մէջը աղ,  $\frac{1}{2}$  գինու բաժակ  
հում բրինձ, զաֆռան, կտրտած կանաչեղին և  
եփիր, մինչեւ որ բրինձը եփուի:

## Պ. ՄԸՆՔ

### ԺԵՇԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿ ԿԵՐԵԿՈՒՐՆԵՐ

87. ԵՓԱԾ ՄԻՍ. Միսը ամենից լաւ եփում են այս եղանակով։ Առաւտը միսը երկու մասի են բաժանում. առաջին մասը լինում է բոլոր ջլոտ մասերն ու ոսկրները. իսկ երկրորդը բաղկացած է մաքուր մսից տանց ոսկրների։ Տաւարի միսը լաւ եփելու համար՝ գէթ մի ամբողջ օր պէտք է հում պահել։

Առաջին մասն ամբողջապէս պէտք է մանր կտրտել, ոսկրներն էլ երկայնութեան վերայ կոտրել և բոլորը միասին սառը ջրի մէջ ածել։  $1\frac{1}{4}$  դրվ. մսին պէտք է վերցնել 12 մեծ բաժակ ջուր։ Մէջը մի փոքր աղ ածել և քիչ էլ քացախ կամ 6 կաթիլ լիմոնի խոզ և թողնել այդպէս մի քանի ժամ։ Ելք միջոցին մսի բոլոր մննդարար հիւթերը անցնում են ջրի մէջ։ Մօտ 10 ժամից յետոյ պէտք է սկսել ջուրը քիչ քիչ տաքացնել եւ երբ լաւ կ'եռ զայ, մէջը լցնել մսի երկ-

րորդ մասը. այդ միջոցին մսի ամբողջ երեսը ծածկում է սպիտային թաղանթով, որ թոյլ չէ տալիս որ մսի հիւթը մսից դուրս գալ, բայց չէ արգելում, որ միսը եփուի ինչպէս որ պէտք է։

Միսը պէտք է եփ գայ, մինչի որ բոլորովին կը փափկի։ Եթէ ցանկանում էք սընդարձար բուլիօն ստանալ՝ մսի ջրում հաւաքուած սպիտը պէտք է թողնէք, իսկ եթէ հարկաւոր է ստանալ մաքուր ու թափանցիկ արգանակ, այդ դէպքում սպիտը պէտք է հեռացնել, և մէջը լցնել մաքրած արմտիք՝ աղաոքեղ (պերցուկա), նեխուր, գաղար և ղեղին ստեղլին (պաշեռնակ) (բայց ոչ սոխ)։ Խւղը քաշել պէտք կլինի միայն, երբ չափազանց շատ է։

Պատրաստ միսը ամբողջ կամ կտրտած բերում է սեղան գետնախնձորի հետ։

88. ԵՓԱԾ ՏԱԿԱՐԻ ՄԻՍ. ՏԱՊԱՆԱԾ ՍՈՒՆԿՈՎ. (տես № 12):

89. ԵՓԱԾ ՏԱԿԱՐԻ ՄԻՍ. ԳԵՏՆԱԽՆԶՈՐՈՎ. ԵՒ ՄՍԱՋՐԻ ՍՈՈՒՄՈՎ. Գետնախնձորը մաքրիր, լուա, մանր կտրտիր, աղ արած ջուր ածա վրէն, եփիր, ջուրը արգանակի մէջ ածա, գետնախնձորին մի դպալ խոզ, մի դպալ մանր կտրտած մաղղանոս և սամիթ, մի բաժակ չաղ-

մաշուր արա և մէջն ածա եփած տաւարի  
միսը և խուփը ծածկելով եփիր:

90. ԵՓԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍԸ ԿԱԹՆԻ ՍՈՒԽ-  
ՍՈՎ. (№ 139):

91. ԵՓԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍԸ ԵՓԱԾ ԳԱԶԱ-  
ՐՈՎ. 4—8 զաղար մաքրիր, մանր կտրտիր,  
լուա, եփիր մսաշըրի մէջ, հանիր ափսէի վերայ,  
վրէն արա իւղի մէջ տապակած՝ չոր փշտած  
բուլկի:

### ՏԱՊԱԿԸ ՈՒ ԽՈՐՈՎԸ

92. ՏԱՊԱԿԸ ՏԱՒԱՐԻ ՄԻՍ. (դր. Ման.):  
Նախընթաց օրը 2 գրվ. տաւարի փափուկ մի-  
սը փայտէ մուրճով լաւ ջարդիր, վրէն  $\frac{1}{2}$  թէ-  
յի գլալ աղ և քիչ ել պղպեղ ածա և քրեղա-  
նի մէջ գնելով ծածկիր և թող այդպէս մինչեւ  
միս օրը: Միւս օրը ճաշից  $\frac{1}{2}$  ժամ առաջ  
միսը գիր թաւի մէջ, աւելցրու 2 գլալ իւղ և  
տապակիր մինչեւ որ միսը կարմրի. յետոյ մի  
քիչ ջուր ածա թաւի մէջ և տապակածից ծորած  
ջրից շուտ շուտ վրէն ածա: 1 գրվ. գետնա-  
խնձորը լուա, եփիր և կճպիր. ճաշից առաջ  
ածա թաւի մէջ և շուտ շուտ խառնելով տա-  
պակիր և մօտ բեր տապակածի հետ:

Բացի գետնախնձորից կարելի է հետը

գործ դնել ձմեռը՝ թթու խիար կամ թթու  
կաղամբ, իսկ ամառը թարմ աղցան (салատ):  
93. ՏԱՊԱԿԸ ՏԱՒԱՐԻ ՄԻՍ. Մինոյնը  
կարելի է շինել նաև նոյն օրը, առանց միսը  
մի գիշեր պահելու:

94. ԵՆՉՊԵՍ ՊէՏՔ և ՄԻՍԸ ՏԱՊԱԿԸ.  
Միսը պէտք է տապակել անշուշտ թա-  
ւայի մէջ, այդպիսով աւելի լաւ ոսուս է  
ստացւում, քան ինքը տապակածը. այդ նորա-  
նից է, որ երբ մսի ներքեի մասը տապակում  
է, վերեխնը ճաքճռում է և միջից ծորում է  
մսի բոլոր հիւթը: Հիւթի թափուկու առաջն  
առնելու համար՝ պէտք է հնոցը (պլիտան)  
փաղօրօր տաքացնել հարկաւոր չափով և միսը  
թաւայի մէջ զնել այն ժամանակ, երբ ամ-  
բողջ խլը հալուած լինի. այդպիսով մսի  
արտաքին ծալիրը շուտով են տապակում:  
չափով տապակելու համար՝ հնոց  
սկզբից առաջ պէտք է միսը ամեն կողմից  
կարմրացնել, իսկ յետոյ միայն փոքր առ  
փոքր չափաւոր կրակի վերայ տապակել ամեն  
կողմից: Առողջապահական կողմից միանգա-  
մայն խոտելի են՝ տապակածի մէջ խառնել  
զանազան համեմեներ, քացախ, նոյն իսկ սոխ,  
մեխակ հային:

Աղ շատ շպէտք է անել տապակածին.

մանաւանդ այն տապակածներին, որոնք երկար եփուելու կամ տապակուելու պէտք ունեն. որովհետև այդ դէպքում հեղուկի մի մասը չողիանում է, իսկ մնացածը չափազանց խըստանալով՝ աղի համ է ստանում:

Տապական երբէք չպէտք է պատառաքաղով ծակծկել իմանալու պատրաստ է թէ չէ, կամ պատառաքաղով շուռումուռ տալ. այդպիսով ամրող հիւթը դուրս է թափուում, և տապակածը բոլորովին կորցնում է իւր սընդականութիւնը:

Տապական կորցնում է իւր հիւթը նաև այն ժամանակ, երբ ժամանակ առ ժամանակ ջուր կամ արգանակ են ածում վրէն, որ տապակածի մակերեսյթը փափկացնում է և հեշտացնում այդպիսով մսի հիւթը թափուելլ:

Տապակածի հիւթը չպէտք է այրել. դրա համար մի քիչ արգանակ են խառնում հետը և շարունակ խառնում են, իսկ յետոյք քամում: Լաւ կլինի տապակածից ստացուած ճարալը հեռացնել, և դորա փոխարէն իւղածել:

Չափազանց այրուած հիւթը այրուած սուրճի գոյն ունի, որ առաջ է գալիս խանձուելոց կամ մէջը ածուխ դոյանալուց, որը ուն գոյն է տալիս սուրախն և խանդարում ախոր-

ժակն ու մարսողութիւնը: Հիւթի խակական վոյնը բաց-շագանակագոյն է:

Տապակածը աւելի լաւ է սառն ուտել, նախաճաշին: Հիւանդներն ու հիւանդագարձները նոյնպէս աւելի լաւ են մարսում սառը տապական. քան նոցա համար միշտ զգուելի քուլիօնները:

Միուր շատ գեղեցիկ տապակւում է խըմորում փաթըթած. դորա ամենամեծ տուաւելութիւնն այն է, որ միուր ստացւում է չափազանց հիւթալի: Դորա համար նոցը պէտք է տաքացնել ոչ շատ խիստ, որ խմորի կեղեքը չտրաքալքուի և մսի հիւթը չթափուի: Խմորը պէտք է ամուր լինի: Ոչ մի տեսակ համեմունք չպէտք է անել:

95. ՇԱՄՓՐԻ ՎԵՐԱՅ ԽՈՐՈՎԱԾ ՏԱՒԱՐԻ ՄԻՍ. Սուկուց կամ փափուկ մսից շագութիւնները պէտք է հանել, կտրտել, աղ, պղպեղ և կտրտած սոխ անել տուաւուր ու պահել քբեգանի մէջ, ճաշին շարելով մաքուր շամփուրների վերայ պէտք է խորովել շուռ տալով մինչև կարմրելը: Խորովածի հետ զործ են գնում թթու խիար կամ աղցան:

96. ԽՈՐՈՎԱԾԻ ՄԻ ՈՒՐԻՇ ՏԵՍԱԿԸ. Սուկու կամ փափուկ մսի ջղերը հանեցէք, աղ, պղպեղ արէք և խորովեցէք շամփուրի վերայ:

Յետոյ սոխ կտրտեցէք պղնձի մէջ։ Խորովածը  
կտրտեցէք նորա մէջ և դրէք կըակի մօտ մինչ  
և ճաշելը։

97. ՏԱՊԱԿԱԾ ՀՈՐԹԻ ՄԻՍ. Հորթի հա-  
տի մաից՝ երիկամունքով և 2 հատ կողով լուա-  
ցէք, մի քանի ժամ աղաջրի մէջ թողէք և յե-  
տոյ հանեցէք. դրէք թաւի մէջ մի քիչ իւղ և  
մի երկու գդալ էլ ջուր աւելցնելով մէջը տա-  
պակեցէք, շուտ շուտ շուռ տալով և նորանից  
դուրս եկած հիւթը ածեցէք վրէն, որ հիւթու-  
թի և փափուկ լինի։ 4 կամ 5 գրվ. հորթի մի-  
սը պէտք  $\frac{3}{4}$  ժամ տապակել. հետո կարելի  
է տապակել մաքրած և կտրտած գետնախն-  
ձոր։ Պէտք է ուտել որիէ աղցանով։

98. ԵՓԱԾ ՀՈՐԹԻ ՄԻՍ ՍՊԻՏԱՄ ՍՈՌԻՍՈՎ.  
2 գրվ. հորթի փափուկ միսը պէտք է կրտ-  
տել, լուանալ, մի անգամ եփ տալ, բափը  
քաշել, հանել, սառը ջրում անցկացնել, աղ  
անել, վրէն իւր մոածուրը ածել, գաղար և  
սոխ աւելցնել և եփել այնքան մինչև որ փափ-  
կի, բայց չըդրբուի։ Մոռւս:  $\frac{1}{2}$  րաժակի ալիւրը  
տապակիր մի գդալ իւղի մէջ, բաց արա-  
2—3 րաժակ հորթի մսաջրի մէջ, եփիր, մէնի-  
աւելցրու  $\frac{1}{2}$  րաժակ թթուասիր կամ մի բա-  
ժակ կաթը. և այս սոռսի մէջ դիր մոաջրի  
մէջ եփած գետնախնձորն ու կտրտած հորթի

միսը, մէկ էլ եփ տուր, կանաչի արա և պատ-  
րաստէ։

99. ՀՈՐԹԻ ԵՒ ՏԱԿԱՐԻ ԼԵԶՈՒ. Լեզուն  
պէտք է դնել տաք ջրի մէջ, կաշին պլոկել,  
լուանալ և յետոյ եփել աղ արած ջրի մէջ մին-  
չև որ փափկի, յետոյ հանել. և ուտելու է  
դարսով № 15։

100. ՏԱՊԱԿԱԾ ԳԱՌԱՆ ՄԻՍ. Դառան  
փափուկ միսը կամ բուլը լուա, աղ արա,  
դիր թաւի մէջ, վրէն 2—3 գդալ ջուր ածա և  
խորովիր հնոցի մէջ, շուտ շուտ ածելով վրէն-  
իրանից թողած ջուրը։ Այս միննոյն սոռսի  
մէջ միաժամանակ կարելի է և մի քանի դլուխ  
սոխ էլ խորովել սաղ սաղ և ով սիրում է՝  
նոյնպէս սխտոր։

Տապակած գառան հետ գսրծ են զնում  
աղցան և թթու խիար։

101. ՏԱՊԱԿԱԾ ՀՈՐԹԻ ՄԻՍ ԿԱՄ ՏԱԿԱՐԻ-  
ՍՈՒԿԻ ԶՈՒՈՎ. ԵՒ ՍՈՒԽԱՐԻՈՎ. (Wiener  
schnitzel): Փափուկ միսը տափակ կտրտիր,  
փայտէ մուճով ջարդիր և աղ արա։ Պէտք  
է ձուն քիչ հարել, մոի կտորները թա-  
թախել ձուի մէջ, ածել վրէն ծեծած ոուխարի  
և իւղի մէջ տապակել երկու կողմից։

102. ՏԱՊԱԿԱԾ ՎԱՌԵԿ ԶՈՒՈՎ. Վառեկը  
լու մաքրելուց յետոյ մի անգամ եփ տուէք, հանե-

ցէք, աղ արէք, թաթախեցէք հարած ձուի մէջ և  
յետոյ ծեծած՝ պարսիմատի մէջ և իւղը թաւի  
մէջ տաքացնելով՝ տապակեցէք նորա մէջ մին-  
չև որ լաւ կարմրի. խորովելիս շուտ շուտ վրէն  
ածեցէք իր հիւթից, որ լաւ կարմրի:

103. ԲԻՖԵՏՏԵՔՅՈՒ. (Համբուրգեան): Տաւարի  
փափուկ միսը կամ սուկին լուացէք, կտրտե-  
ցէք և փայտի մուրճով ջարդեցէք, մինչև որ  
փափկի. յետոյ տապակեցէք իւղի մէջ թէժ  
կրակի վերայ. քանի կտոր միս լինի՝ այնքան  
էլ ամբողջ ձու պատրաստեցէք իւղի մէջ և  
միսը հանելուց յետոյ ամեն մէկ կտորի վրայ  
մի մի ձու զրէք, վրէն էլ ածեցէք մսի հիւթը,  
մէջը քիչ մսաջուր խառնած:

104. ԲԻՖԵՏՏԵՔՅՈՒԱՐՄՏԻՔՈՎ. Սուկու կտորը  
պէտք է ջարդել ամեն կողմից, վրէն աւելցնել  
այն արմտիքը, որ անում ենք սովորաբար  
մսին, թղթէ ծրարը թաթախել տաք իւղի  
մէջ զգուշութեամբ բիֆշտէքսի կտորը ւտցնել  
ծրածի մէջ ու թեթև կապել. Փոքրիկ կաթ-  
սայի մէջ ածել 2—3 զգալ բուլիօն իւղի հետ,  
երբ արգանակը կտաքանայ, պէտք է վրէն  
դնել ծրարով բիֆշտէքսը և 6—8 բուլէ տա-  
պակել, շարունակ պտոյտ տալով, ապա  
ծրարը հանել տափակ զգալով կամ դանակով,  
դնել տաք ափսէի վերայ և այդպէս սեղան

առանել: Այդպիսով ստացւում է շատ հիւթալի  
և անուշահոտ բիֆշտէքու:

105. ՌԱԳԴՈՒ. Ռագուն պատրաստում է սու-  
կու փափուկ մսից, որից պէտք է հանել  
ջղերն ու մանր կտրտել, կամ թէ գառան  
մսից: Միսը աղելով և թաթախելով ալիւրի  
մէջ՝ պէտք է տապակել թաւի մէջ տաքացրած  
իւղում, մինչև որ սկսէ մսից հիւթը ծորել,  
ապա զնել պղնձի մէջ, խուփով ծածկել  
և զնելով հնոցի մէջ՝ թողնել որ բուղի մէջ  
եփուի: Ռագուի հետ մօտ են բերում տապա-  
կած գետնախնձոր:

106. ՈՍԿՐՈՎ. ԿԱՏԼՅԾ. Վերցրէք ոչխարի  
ետևի կողերից, որի վերայ փափուկ միս էլ  
կայ. մէջէմէջ կտրտեցէք ամեն սոկըն առանձին.  
ամեն մի սոկըք բերեցէք այնպէս որ միսը հաւա-  
քուի մէկ ծայրին. միսը ջարդեցէք. աղ, պղպեղ  
և ձու արէք ու խառնեցէք, միսը կատէտի  
ձևով ամբացրէք սոկորի վերայ մինչև սոկը  
կէսը, թաթախեցէք ծեծած սուխարու մէջ և  
դանակով ուղղեցէք ու իւղի մէջ երկու երիսն  
էլ տապակեցէք: Սորա հետ գործ են զնում  
հետեւալ սօսւսը.—գետնախնձորն եփում են,  
կճպում և մաղի մէջ անցկացնում, յետոյ ածում  
պղնձի մէջ մի քիչ իւղ, քիչ շաքար, կաթ և

խառնում մինչև քիշ թահճրանայ ու ածում  
կատլէտի վերայ իւր հիւթով:

107. ԿԱՏԼԵՏ, Կատլէտը պատրաստում է  
փափուկ մսից: Մսից պէտք է ոսկրներն ու  
ջղերը հեռացնել և մանր ծեծել դահակով  
կամ մերենայի մէջ: Փրանսիական բուլիու մի-  
ջուկը պէտք է մանրացնել, վրէն տաք կաթ  
կամ բուլիօն ածել, ծածկել և այդպէս թող-  
նել  $\frac{1}{4}$  ժամ, որից յետ մազի տակ անցկացնել:  
Սովոր միսը և տրորած բուլիին խառնել, տ-  
ւելցնել բուլիօն և աղ, ուզած ձեզ տալ, երե-  
սին ձու բսել, ծեծած սուխարու մէջ թաթա-  
խել և այնուհետև 15 բոլոքաշտի տապակել  
իւղի մէջ:

108. ՀՈՐԹԻ ՈՏ ՈՒ ԳԼՈՒԽԸ ԶՈՒՌՎ. Են-  
սուխսրով, ՏԱՊՈՎԱԾ. Ոտ ու գլուխը պէտք է  
լաւ եփել, սոկորները միջից չսկել միսը խառ-  
նած ձուի մէջ թաթախել, ածել վրէն ծե-  
ծած սուխարի և խզի մէջ տապակել:

109; ԽՈՐՈՎԱԾ ԽՈՃԱՌ. Խոճկորը պէտք  
է լաւ մաքրել, մի քանի կտոր անել, ներսից  
ու դրախայ աղ անել, և դնել թաւի մէջ, վրէն  
2—3 զգալ ջուր ածել, լցնել վրէն  $\frac{1}{3}$  դրու-  
խու և մէկ ժամի շափ փուռի մէջ խորովել,  
իր հիւթը ածելով վրէն:

110. ԽՈՉԻ ԽՈՐՈՎԱԾ. Խորովածի համար

պործ են դնում, խոզի կողքեր և սաւկի, և խո-  
րովում են շամփուրի վերայ ոչխարի մսի նման:

111. ԽՈՐՈՎԱԾ ՀՆԴՈՒՀԱԿ. Հնդուհաւը  
լաւ մաքրելը, փորոտիքը հանիր և վրէն քիշ  
իւղ քսելով գիր թաւի մէջ ու խորովիք փռան  
մէջ: Հետը գործ են դնում թթու: Խխար կամ  
ալյան:

112. ԽՈՐՈՎԱԾ ՎԱՌԵԿ. Վառեկը լաւ  
մաքրելով անց են կացնում շամփուրի վերայ.  
վրէն քսում են մի քիշ իւղ և խորովում կըակի  
վերայ, շարունակ շամփուրը պտոյտ տալով.  
Խորովելիս քիշ իւղ են քսում գարձեալ, որ լաւ  
կարմրի: Հետը գործ են դնում զանազան աղ-  
ցաններ:

113. ՏԱՊՈՎԱԾ ՎԱՌԵԿ. Վառեկը պէտք  
է լաւ մաքրել, փորոտիքը հանել և լուանալ,  
վրէն աղ անել և թաւի մէջ քիշ իւղ ածելով՝  
երկու կողմից տապակել մինչև կարմրելը: Մօտ  
քերելիս տապակած վառեկի վերայ ածում են  
հետևեալ սոսւը. — մի վիճու բաժակի չափ  
մսաջուրը ածել թաւի մէջ, մէջը ածել 1 ծե-  
ծած սուխար և վառեկի մնացած սոսւը, այս  
բոլորը պէտք է մի քանի բոլէ եփել և ածել  
վառեկի վերայ:

114. ՏԱՊՈՎԱԾ ՍԱԳ. Սազը մաքրեցէք, փո-  
րոտիքը հանեցէք, աւելորդ ճարալը հեռացրէք,

Ներսից ու դրսից լաւ աղ արէք, քիչ էլ պղպեղ-  
2—9 գդալ ջուր և տապակեցէք, հետզհետէ լցնե-  
լով վրէն իրանից ծորած հիւթը: Կարելի է հետը  
տապակել նաև մի քանի հատ սոխ:

Տապակած սազի հետ կարելի է գործ դը-  
նել՝ սազի հետ եփած մանր կտրտած խնձոր:

115. ՏԱՊԱԿԱԾ ԲԱԴ. Բաղը պէտք է  
մաքրել, աղ անել, վրէն մի քիչ ալիւր, 2 դդալ  
մսաջուր ածել և թաւի մէջ տապակել, տապա-  
կելիս իրանից դուրս եկած սօսւսը ածելով  
վրէն: Սորա հետ կարելի է գործ դնել տա-  
պակած կարտօֆիլ և աղցան:

116. ՎԱՅՐԻ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ, ՕՐԻՆԱԿ բադ,  
կաքաւ, փայտմորիկ (տետերկա), վայրի աքաղաղ  
և այլն: Պէտք է փետրել, մաքրել, փորոտիրը  
հանել, լուանալ, աղ ու քիչ պղպեղ անել, և  
դնելով թաւի մէջ ու վրէն 2—3 դդալ ջուր  
ու մի դդալ իւղ անելով՝ տապակել ամեն կող-  
մից, հետը իր սօսւսից վրէն ածելով: Եյս  
սօսւսի մէջ դարսելու է մի քանի հատ մաքրած  
դետնախնձոր, որ խորովուի: Իսկ առանձին էլ  
մօտ են բերում որիէ աղցան:

117. ՀԻՒՆՔԵԱՐՊԼՅԱՆՏԻ (արքայավայել):  
Սև պղրինճանը առանց կճպելու կրակի վերայ  
խորովելու է. յետոյ կճպել,  $\frac{1}{4}$  ժամ դնել կա-  
թի մէջ, կաթը նորանից քամել առանց սեղ-

մելու: Քիչ պանիր քերելով ածել պղրինճանից  
վերայ: Ոչսարի միսը մանր կտրտած և մանր  
սոխով իւղի մէջ տապակած՝ պոմադորը քամել  
վրէն և եփել քիչ ջրի հետ. յետոյ պղրինճանը  
դնել սկստովի վերայ, միսն էլ վրէն և այնպէս  
մօտ տանել:

118. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏԱՊԱԿԱԾ. Վերցրէք  
2 գրվ. սուկի կամ փափուկ միս, պղնձի մէջ  
դրէք  $\frac{1}{8}$  գրվ. իւղ և միսը ամբողջ դրէք մէջն  
ու տապակեցէք շուռ տալով, մինչև լաւ կար-  
մըի: Յետոյ միսը հանեցէք և մէջը լցրէք կը-  
տրտած սոխ ու գաղար և տապակեցէք, որից  
յետոյ դրէք նորա մէջ նաև միսը և դարձեալ  
տապակեցէք ածելով վրէն մի շերեփ մսաջուր:  
Կտրտեցէք 2 գրվ. վետնախնձորը և աւելցրէք  
նորա վերայ և կամաց կամաց միասին տապա-  
կեցէք: Երբ կհանէք՝ միսը կտրտեցէք և հիւթն  
էլ վրէն ածեցէք:

119. ԲՈՉԲԵՖ. 2 գրվ. փափուկ մսից հե-  
ռացրէք ջղերն ու ճարպը, լուացէք, աղ արէք  
և դրէք պղնձի մէջ. մէջն աւելցրէք 3 գլուխ  
սոխ ամեն մէկը շորս մասն արած, մի քանի  
դափնի տերե, մի գաղար կտրտած, մի քանի  
հատիկ անգլիական պղպեղ (բահար), կէս բա-  
ժակ սպիտակ գինի, մի քիչ իւղ. այս բոլորը  
միասին լաւ տապակեցէք մինչև որ կարմըի և

փափկի: Երբ հանեք՝ կտրտեցէք և իր ջուրն  
էլ ածեցէք վրէն: Թօզբի ֆի հետ տապակել  
կտրելի է և սաղ սաղ գետնախնձոր:

120. ՀԱԼԻ ԿԱՄ ՎԱՌԵԿԻ ՍՈՌԻՍ. Մի վա-  
ռել մաքրիր և եփիր: Մի մեծ բուլկու-  
երեսը կճպելով՝ մնացածը դիր մի կլոր սկուտ-  
ղի վերայ. Եփած հաւը կտրտելով դարսիր վրէն  
և ածա դորա վերայ հետեւեալ սուսը.—պղնձի  
մէջ պէտք է ածել բաւական իւզ, քիչ ալիւր  
և եփել. վրէն ածել երկու շերեփ մսաշաւր և  
խառնել, որ ալիւրից կոշտեր չգոյանայ, եփել  
այնքան, որ ոչ շատ թաեձր լինի և ոչ շատ էլ  
ջրալի. այդ սուսի մէջ ածել վառեկի թոքն ու-  
քարճիկը մանր կտրտած և վրէն քամել <sup>2</sup> լի-  
մոն: Այնուհետև մի խոր ամանի մէջ հարիր <sup>2</sup>  
ձուի դեղնուց և զգուշութեամբ խառնիր սուսի  
մէջ, որ չկտրուի: Ելս սուսը պէտք է ածել  
սկուտղի վերայ, պատրաստած վառեկի վերայ:

121. ԼՈՒԱՅ ՔԵԱԲԱՐ. 2 զրվ. ոչխարի  
վափուկ ու չաղ միսը ծեծիր 4 զլուս մանր  
կտրտած սոխի հետ. հետը խառնիր աղ և քիչ  
պղպեղ, 2 ձու, մի կտոր էլ թրջած ու քամած  
բուլկի. շամփուրը տաքացրու, այդ մսից կըպ-  
ցրու վրէն և խորովիր կրակի վերայ: Մկուտ-  
ղի վերայ հանելիս՝ վրէն անում են ծեծած  
ոմաղ:

122. ՈՉԽԱՐԻ ԿԱՄ ԽՈԶԻ ԴԱՌԻՄՄԱ. 2  
պրվ. չաղ միսը կտրտիր, լուս, ածա պղնձի  
մէջ, աւելցրու մի ափսէ լիքը կտրտած սոխ և  
<sup>1/2</sup> բաժակ ջուր՝ ու տապակիր մինչև սոխը  
լաւ կարմրի:

### ԱՂՅԱՆՆԵՐ

Տապակած մսի, թռչունների և ձկների  
հետ դորձ են զնում հետեւեալ աղցանները.—

123. ԹԱՐՄ ԿԱՂԱՄԲԵՒ ԱՂՅԱՆ. Թարմ կա-  
զամբը լաւ մաքրիր, մանր կտրտիր, ածա մաղի  
վերայ, վրէն եռցրած ջուր լցրու և երբ լաւ  
քամուի՝ ածա աղցանի մէջ, աղ արա, վրէն ա-  
ւելցրու 2 գդալ պրօվանսի ձէթ, 2 գդալ էլ  
քայախ և խառնիր:

124. ՄՈԼՈՏ (Խաւարտ): Խալաթը լաւ մաք-  
րիր, փուած տերենները հեռացրու, լաւ լուս,  
կտրտիր, քիչ աղ արա: Մէկ ձուի պինդ եփած  
գեղնուց և ով ուզում է երկու գդալ էլ շաքա-  
րաւաղ, տրորիր ամանի մէջ, 2 գդալ թարմ  
թթուասէր խառնիր և մի գդալ էլ քացախ,  
խառնիր, սալաթն էլ հետը և տար ճաշի: Կա-  
րելի է աւելցնել և բարակ բարակ կտրտած  
վարունգ:

Պաս օրերին ձուի և թթուասէրի փոխա-  
նակ պէտք է աւելցնել 1 գդալ պրօվանսի ձէթ:

125. ԹԱՐՄ ՎԱՐՈՒՆԳ. 2—3 վարունք կճպիր, բարտկ բարակ կտրտիր, աղ արա. մէժամից յետոյ իրանից թողած ջուրը դէն ածա, 2 գդալ սլրօվանսի ձէթ, 2 գդալ քացախ, քիչ էլ պղպեղ և սամիթ արա ու խառնիր:

126. ՃԱԿՆԴԵՂ (ճարխալ): Մի քանի հատճակնդեղ պէտք է խորտվիլ, մաքրել, կտրտել, ածել ամանի մէջ, վրէն աղ, պղպեղ, ձէթ, քացախ և կանաչի անել ու լու խառնել:

127. ԽՆՁՈՐ. 4—8 թթուառն խնձոր կճպիր, կտրտիր, միջուկը հանիր, դարսիր պլդինձի մէջ, աւելցրու մի գդալ շաքարաւազ, 2—3 գդալ ջուր,  $\frac{1}{4}$  գդալ աղած դարչին և խորտվ ծածկելով այնքան եփիր, որ խնձորը փափկի, յետոյ վրէն ածա 2 գդալ տապակածիր սոսւից:

128. ՊԱՐՁ ՏԵՍԱԿ ՍՍԼԱՏ: Մալաթը լուանալ, կտրտել, աղ, շաքար, քացախ անել և խառնել:

### ՓԼԱԿՆԵՐ

129. ՔԱՇՈՎԻ. 1 գրվ. բրինձը ընտրիր և մի քանի անդամ լուա: Բրինձը մի ամանով չափիր և ինչքան որ բրինձն է՝ 2 այնքան ջուր արա,  $\frac{1}{4}$  գրվ. իւղ և մի քիչ աղ անելով՝ ե-

փիր, մինչև որ ջուրը ցամաքի. յետոյ մեծ դղալով հաւաքիր պղնձի մէջ տեղը, մի սինի ծածկիր պղնձի վերայ և շարունակիր եփել կարճ ժամանակ, այդ միջոցին մի երկու անգամ սինին վերցրու, որ հաւաքուած գոլորշին թափուի (դամը քաշուի):

130. ՔԱՇՈՎԻ ՓԼԱԿ. 1 գրվ. բրինձը ընտրիր, 3 անգամ լուա և գոլ ջրում դրչիր  $\frac{3}{4}$  ժամ. բաւականաչափ ջուր ածա պղնձի մէջ և եռ տուր. բրինձը ածա մէջը. երբ բրինձը մի անգամ եռ գայ արա մէջը այնքան աղ, որ ջուրը մի քիչ աղի լինի. մի քանի անգամ էլ եփ տալուց յետոյ պէտք է մի քանի հատիկ բրինձ հանել և տեսնել, եփուած է թէ չէ. երբ բրինձը քրքրուած չէ, բայց եփուած է՝ այն ժամանակ պղինձը շուռ տուր փլաւ քամիչի մէջ. պղինձը ողողելով սառը ջրով՝ այդ ջուրն էլ ածա չլաւի (եփած բրինձի) վերայ: Երբ ջուրը լաւ քամուի՝ չլաւը ածա դարձեալ պղնձի մէջ և մէջ տեղը հաւաքիր ու ածա վրէն ուրիշ փոքր պղնձի մէջ տաքացրած  $\frac{1}{2}$  գրվ. իւղ. պղնձի վերայ ծածկիր սինին և թոյլ կրակի վերայ դիր կարճ ժամանակ և դամը քաշիր, ինչպէս № 129 քաշովի փլաւի ժամանակ:

131. ՓԼԱՒ ԶՈՒԹՎ. ՓԼԱՒՐ ՀԻՆԿՈՒՄ է մինչն ձեռվ, ինչպէս որ գրուած է № 130-ում. մինչև բընձի քամելը. երբ չլաւը պատրաստ է, հարիր Յ ձու, պղնձի մէջ քիչ խող տաքացրու, ձուի մէջը միքանի գդալ չլաւ խառնիր և լցրու խողի մէջ ու տարածիր պղնձի տակը ամբողջապէս. յետոյ չլաւը ածա վրէն. հաւաքիր մէջտեղը և վրէն ածա  $\frac{1}{2}$  գրվ. տաքացրած խող և դոմ քաշիր:

132. ԳԱՌԱՆ ՄՍՈՎ. ԿԱՄ ՎԱՌԵԿՈՎ. ՓԼԱՒ. ՓԼԱՒ պատրաստում է № 130-ի պէս: Գառան միսը կամ վառեկը մանր կտրած պէտք է տապակել և դարսել փլաւի մէջտեղը, վրէն խող ածել և այնպէս դամ քաշել:

133. ՓԼԱՒԻ ՎԵՐԱՅ ԴՈՐԾԱԾՈՒՈՂ. ՔԱՂՅ-ՐԵԴՆՆԵՐ. Քամովի պարզ փլաւի վերայ զոր և դնում:

1, ալուբալին կորիզները հանած և շաքարի մէջ եփած:

2, շլորը նոյնպէս կորիզները հանած և շաքարի մէջ եփած:

3, հոնը, նոյնպէս պատրաստած:

4, դամբուլը նոյնպէս պատրաստած:

134. ԴԱԲԼՈՒ ՓԼԱՒ. ՓԼԱՒ պատրաստիր № 130-ի եղանակով: Իսկ զարլուն շինւում է հետեւել կերպով. 1 գրվ. քիչմիշ կոթերից և

կեղտերից մաքրում են և լաւ լուանում: Լուանում են նոյնպէս 1 գրվ. մաքրած նոխուղը (մուխունդը), ածում են եռցրած ջրի մէջ և առանց աղի եփում, մինչև որ փափկի, բայց չքրբուի. յետոյ ջուրը քամում են փլաւ-քամիչի մէջ,  $\frac{1}{2}$  գրվ. խողը հալելով պղնձի մէջ՝ մէջը պէտք է ածել լուացած քիշմիշն ու եփած նոխուղը դնել կրակի վերայ և խառնել մինչև քիչ կիփուի, բայց չպիտի այրել, ապա՝ աւելցնել մէջը 1 գրվ. շաքարաւաղ և թուլ կրակի վերայ մի փոքր էլ եփել: ՓԼԱՒ երբ կհանէք սկրտղի վերայ՝ զարլուն էլ պէտք է ածել երկսին:

135. ԿԱԹՆԵՍՊՈԱՍ. 1 գրվ. բրինձը մաքրելով կեղտից՝ լաւ լուած մի քանի անգամ. պլողնձի մէջ ածա 5 բաժակ կաթ, Յ բաժակ էլ ջուր և բրինձ ու եփիր. երբ կաթը ցամաքի՝ աւելցրու զարձեալ 5 բաժակ կաթ և  $\frac{1}{2}$  գրվ. շաքարաւաղ ու լաւ եփիր մինչև թանձրանալը: Հանելուց յետոյ՝ վրէն շաղ տուր ծեծած շաքար, զարչին և զափոան:

136. ՇԱԼԱՓԱԱ. 2 գրվ. ոչխարի միս կամ մի հաւ պէտք է կտրաել և լուանալ ու ածել պղնձի մէջ, վրէն աւելցնել այնիքան ջուր, որ մոխից մի քանի մատ բարձր կանգնի, եփել քափը քաշելով, մսաջուրը քամել, մսի աւելորդ ոս-

կորները դէն ածել, մսաջուրը, միսը և  $1\frac{1}{2}$  գրվ. լուացած բրինձը ածել պղնձի մէջ, աղ, պղպեղ և զիրա անել և դնելով կրակի վերայ թողնել որ թանձրանայ:

137. ՀԱՐԻՍԱ. Հեղունաւը կամ ոչխարի փափուկ և չաղ միսը կտրտեցէք, լուացէք և լաւ եփեցէք՝ քափը քաշելով, այնպէս որ ոսկորները մսից ջոկուի. քամեցէք, ոսկորները մսից ջոկեցէք. մսաջուրն ու միսը ածեցէք պըղնձի մէջ, մէջը ածեցէք մաքրած և լուացած ձաւարը և շարունակեցէք եփել. երբ ջուրը ցամաքի՝ վրէն աւելցրէք եռցրած ջուր. եփելիս քաֆկիրով պէտք է լաւ հարել, որ մածուցիկ դառնալ: Եփելուց յետոյ աղ արէք: Մանր կրտրտած սոխը տապակելով իւղի մէջ՝ ածեցէք հարիսի վերայ՝ ամանների վերայ հանելուց յետոյ, հետն էլ շաքար և դարչին:

Հարիսան եփել ոկում են մի օր առաջ:

#### 2ԿՆԵՂԷՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ:

138. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ԿԱՄ ԻՇԽԱՆ. Գեղարքունին կամ իշխանը մաքուր պէտք է լուանալ, կտրտել, ածել եփ տուած աղաջրի մէջ և եփել. առաջ զլուխն են գցում ջրի մէջ, որով հետեւ նա աւելի ուշ է եփում:

Գեղարքունու և իշխանի հետ գործ են պնում ծեծած ընկոյզը քիչ ջրի մէջ բաց արածցանկացողները նաև սխտոր նոյնպէս պատրաստած:

139. ՆՈՐ ԶՈՒԿ. Նոր ձուկը պէտք է մորթել, փորոտիրը հանել և լաւ լուանալ. եթէ մանր են՝ ամբողջ, իսկ եթէ խոշոր են՝ կարելի է կտրտած եփել: Ջուրը պէտք է եռցնել, ածելով մէջը այնքան աղ, որ մի քիչ աղի լինի ջուրը, ձկները լցնում են մէջը և եփում մինչև որ աչքի բիբերը սպիտակեն: Գա նշանէ, որ ձուկը եփուած պատրաստ է և իսկոյն պէտք է հանել:

140. ԼՈԲՈ. Լոքոն եփում են միենսոյն տեսակ, ինչպէս նոր ձուկը:

Հետը տալիս են կտրտած համեմ քացալիս հետ խառը:

141. ԶՈՒԹԻՆ (սևրիոգա): Թարմ զութին պէտք է լաւ քերել, ոսկորները մաքրել և այնքան լուանալ, մինչև որ կաշին բոլորովին սպիտակի, յետոյ կտրտել ու եփել աղաջրի մէջ: Եթէ զութին աղի է՝ առաջ 24 ժամ պէտք է թրջել, ջուրը մի քանի անգամ փոխելով, և ապա միենսոյն ձեռվ եփել: Եթէ իսկոյն ուտելու համար է՝ վրէն քացալս են լցնում և այնպէս ուտում: իսկ եթէ պահելու համար է՝ լցնում

են վրէն հետեւալ խառնուրդը. — սպիտակ քացախ, հետը մի քիչ ձկան ջրից խառնած, բահար և դավնի տերեւ. միասին եփ տալ, սառցնել և վրէն ածել մինչև ծածկելը:

142. ԽՈՐՈՎԱԾ ՕՐԱԴՈՒՆ. Օրագուշը պէտք է լաւ լուանալ, կտրտել և աղ ու քիչ էլ պըզպեղ անել. յետոյ շարել շամփրի վերայ և կըրակի վերայ խորովել մինչև կ'կարմրի:

Օրագուշի հետ գործ են դնում նարշարաբի կամ քամած թթու նուռն:

Կարելի է քիչ քացախի մէջ մանր կտրտած սոխը եփել և խորոված օրագուշի վրէն ածել:

143. ԹՍՐԹ (ԵՇԼՈՐ): Պէտք է տաք ջրի մէջ դնել և քերել. յետոյ եռցրած աղաջրի մէջ ածել դավնի տերեւ, բահար, մի երկու գլուխ սոխ և քացախ, թարթն էլ մէջը և թող եփուի այնքան, որ չըրբրուի:

Եսկ եթէ ուզում էք պահել՝ եփելուց յետո՛ իր ջուրը սառցրէք, չաղութիւնը դի՞ն ածէք և ձուկը դարսելով քիլի մէջ՝ ջուրն ու քացախը ածեցէք վրէն, վրէն էլ դավնի տերեւ և բահար:

144. ՆՈՐ ԶՈՒԿԸ ՏԱՊԱԿԱԾ. Նոր ձկան փորոտիքը հանիր, լաւ լուած, աղ արա և ա-

ռաջ ձուի ու յետոյ սուխարու (սպարսիմատի) մէջ թաթախելով՝ տապակիր իւզի մէջ:

145. ԵՓԱՆ ԹՍՐԹ (ՕՍԵՏՐԻՒԱ): Թառափը մարբիր և լաւ լուած, կտրտիր ու ածելով աղաջրի մէջ՝ եփիր, մի քանի անգամ քափը քաշելով:

Թառափի հետ գործ են դնում խրէն, քացախ ու պրովանսի ձէթ կամ մանանեխ:

146. ԵՓԱՆ ԳՈՇ. Ամբողջ գոշը գիր տմանի մէջ, վրէն գոլ ջուր ածա, մէջը լցրուերկու բուռը թեփ և թող այդպէս 24 ժամ. յետոյ հանիր, քերիր ու լուած. գիր տաք ջրի մէջ և թոյլ կրակի վերայ եփիր այնքան, որ չըրբրուի:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԲՈՒՄԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Կենդանական կերակուրը գրեթէ բացառապէս սպիտակին նիւթից և ճարպերից է բաղկացած. բուսական կերակուրների մէջ աւելի մեծ շափով ածուխն է, իսկ սպիտ և ճարպ քիչ կայ:

Ածուխը բոյսի մէջ ներկայանում է սրպէս օսլայ և շաքար դանաղան ձևով (եղէկնի,

խաղողի, պտղի) ևայն, կան նաև համեմներ և զանազան հոտաւէտ նիւթեր:

Բուսական կերակուրների մէջ առաջին տեղը բռնում են (հացահատիկները), այն է՝ ցորենը, վարսակը, գարին, հաճարը, բրինձը, սիմինդրը և կորեկը:

Սլիւրը մարդկային մարմնին մատակարարում է ամենամեծ քանակութեամբ ածուխ:

Հացահատիկների ալիւրից ամենից սնընդարար է վարսակի ալիւրը:

Հացահատիկների ալիւրը վերին աստիճանի գիւրամարս է և չէ պարունակում իւր մէջ քիմիական գրգռող նիւթեր:

Բուսական կերակուրների մէջ հացահատիկներից յետոյ երկրորդ տեղը բռնում են քանչաշալները, որոնք, բացի գետնախնձորից, շատ քիչ մննդանիւթ են պարունակում իրանց մէջ, և ընդհակառակն, հարուստ են անպէտք ցանցամաշկերով։ Այնուամենայնիւ դոքա շատ համեղ և օգտակար խառնուրդ են մսի հետ։ Մոէ կերակուրը, հիւթալի նիւթերի պատճռով գրգռում է, տաքայնում, իսկ բանջարները ամեններն չեն գրգռում ստամոքսը քիմիապէս, այլ աղիքներում առաջ են բերում միայն մերենական գործունէութիւն։

Օրգանական թթուներ ունենալու պատճառով շատ բանջարեղիններ նպաստում են մսային կերակրի սպիտերի մարսողութեան, ախորժակ են գրգռում, թարմացնող աղդեցութիւն են առաջ բերում, օժանդակաւմ են աղիքների հիւթի սաացման, աղիքների միջինը փափկացնելուն, իսկ անշափաւոր գործածութեան գէպրում, մանաւանդ թարմ ձեռվ, մինչև անդամ լուծովութիւն են պատճառում։ Սակայն մի քանի բանջարներ՝ օր. քրենը, բողկը, սոխն ու սխտորը պարունակում են իրանց մէջ առողջութեան համար վնասակար և դրգռող նիւթեր։

ԲԱՆՁԱՐԵՎԱԿՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՂԱՆԱԿԸ. Ամենից յաճախ եփում են մինչև սր փափկի կամ տաք ջուր են ածում գրէն, իսկ յետոյ աւելցնում են մի քիչ բուլիօն և իւղ, որովհետի բանջարեղինները շատ քիչ իւղ ունին իրանց մէջ, ինչպէս միսը բանջարեղինը պէտք է ուղղակի եռցրած ջրի մէջ դնել։ Հակառակ գէպրում ջուրը քաշում է բոլոր մննդարար նիւթերն ու բանջարեղինը կորցնում է համը, և խոտի համ է ստանում։ Մի քանի բանջարներ, ինչպէս օր. կաղամբը, ընդեղինները, գոյն են տալիս ջրին և տալիս ձին նորան վատ հոտ և անախորժ համ. այդ

ջուրը պէտք է թափիլ, որպէս դի մարտողութեան չվեսանին, զատ բանջարներ եփուելիս իրանց կանաչ գոյնը չնն կորցնում, եթէ կաթսայի բերանը բաց ենք թողնում:

ՊԱՏԻՃԱԽՈՐ ԸՆԴԵՎԼԵՆԻՑ ոլոռնը, լորին, սսպլ, որպէս մի բացառութիւն միւս բանջարների մէջ, մեծ քանակութեամբ ազօտալին նիւթեր են պարունակում, օսլայ, աղեր, կիր, մասամբ և շաքար (շաքարային ոլոռն) և այս կողմից գերազանցում են միւս բոլոր մննդանիւթերից առհասարակ:

Այնպէս որ ազօտային նիւթերի բովանդակութեան կողմից, ընդեղէնները մսլց զերազանց են, իսկ ածուխի կողմից՝ միայն հացատիկից են յետ մնում:

Բայց պինդ կճեսլ ունենալու չնորհիւ և կարծի լինելու պատճառով՝ ջրում պարզ եփած ընդեղէնները դժուար են մարսում, առ զիքներում թթւում են, առաջացնում են գաղեր, փրանք և քամիներ։ Անշուշտ ինչքան մատադ են պատճառը ընդեղէններն, այնքան հեշտ են մարսում:

ՊԱՏԻՃԱԽՈՐ ԸՆԴԵՎԼԵՆԻ ԵՓԵԼՈՒ ԿԱՆՈՆԸ. Վերը յիշածների պատճառով անհրաժեշտ է որ ընդեղէնը եփելուց առաջ երկար ժամանակ սառը ջրի մէջ մնայ, և ինչքան հասուն

Ֆի՛ այնքան աւելի երկար ժամանակ, վատ չէ աւելցնել միջը մի քիշ երկրնածխաթթուական սօդա, որով կանաչ գոյնն էլ մնում է տեղը և ունդն էլ փափկում է։ Եփել պէտք է շարունակ և անընդհատ, մինչև որ կճեպը պլոկուի։ Որովհետեւ եփելիս ջուրը գոլորշիանում է, ուստի պէտք է քիշ քիշ եռցրած ջուր ածել։ Եթէ ուզում էք, որ ընդեղէնը աւելի պիւրամարս գառնայ, լաւ եփելուց յետոյ պէտք է մաղումն էլ տրորուի։ Ոլոռնի պիւրէն աւելի լաւանում է, եթէ մէջը խառնում ենք մի քիշ ալիւր և կտախիդ։ Եփելիս ընդեղէնը մեծ քանակութեամբ ջուր է ծծում։

ԱՐՄՏԻՔՆԵՐԻՑ ամենատռաջին տեղը բանում է գետնախնձորը։ Սորա արժանաւորութիւններից գլխաւորը արժանութիւնն է, որ միջոց է տալիս մեր օրգանիզմին անհրաժեշտ մի նիւթ ձեռք բերել արժան զնով։ Բայց միւս կողմից չէ կարելի ասել թէ նա մի շատ էլ սննդաբար նիւթ է։ Սպիտ շատ քիշ կայ նորանում, ճարպ ամենեին չկայ և սննդական նշանակութիւն ունի միայն նորա օսլան։ Միմիայն գետնախնձորով կերակրուելու համար շատ միծ քանակութեամբ պէտք է ընդունել, օրական կէս փթից աւելի։ Այն ժողովուրդը, որը ստիպուած է լոկ գետնա-

Խոճորով կերակրուել, օր. իրանդացիք, հետանդոտ են և սակաւարիւն, խլախտի և անդլիական ախտի հակումն ունին, տանջում են մարսողութեան խանդարումով և մշտատե խարանացաւով։ Գետնախնձորը ենթակայ է զանազան հիւանդութիւնների և յաճախ աճում է նորա մէջ մի խիստ թռնաւոր իր—սօլատինը։

Այսպէս ուրեմն զետնախնձորը պիտանի է ուրիշ կերակրի հետ գործածուելու, որ հարուստ լինի սպիտով և ճարպով, օր. մսի և կաթի հետ։ Գետնախնձորի հետ իւղ խառնելով՝ ոչ թէ միայն ախորժելի համ է ստանում, այլ և նպատակայարմար է և քիմիական տեսակէտից։

Գագարն ու շաղպամը աւելի հարուստ են սպիտնով քան զետնախնձորը. պիտրէ շինելով՝ նոցա դարձնում ենք զիւրամարս և օգտակար են փորկապութեան դէմ։

Բողկը, քրենը, սոլին ու սխտորը անպայման խոտելի են առողջապահական կերակուրների շաբքից, որովհետև միանդամայն անմարսելի են։

Վարունգն ու ամեն տեսակ աղցանները նոյնպէս գրեթէ անմարսելի են. թթու աղցանը գեռ էլի մի նշանակութիւն կարող է

ունենալ այն կողմից, որ մասամբ նպաստում է սպիտային նիւթերի իւրացման և մերենարար օգնում է կերակրի յառաջացման աղիքների մէջ. բայց յաճախ աղցանը պատրաստում է հաղար ու մի կծու նիւթերից, ուստի և գրգռող աղղեցութիւն ունի ստամոքսի վերալ։ Թթու վարունգը, լորին ևայլն քացախով և այլ թթու կծուներով համեմուած առողջապահութեան տեսակներից ոչ մի բանի պէտք չեն և անպայման պիտի հանուին կերակուրների ցուցակից։

Ծներեկը, սպանաղը և գունաւոր կաղամբը, մանաւանդ սպանաղը, հեշտ մարսուող են, բայց մննդարար նիւթ քիչ կայ մէջը։

Թէ սպիտակ և թէ կարմիր կաղամբը բացի այն որ շատ վատ են մարսուում, աղիքներումն էլ թթուութիւն ու մեծ քանակութեամբ գաղեր են առաջացնում, ուստի և միանգամայն անպէտք են։

ՍՈՒՆԿԵՐԸ, չնայելով, որ մեծ քանակութեամբ աղօտային նիւթեր են պարունակում իրանց մէջ, ահազին քանակութեամբ ցանցամաշկերի և նոցա հիւսուածների կարծրութեան պատկառով՝ գրեթէ ամեննեին չեն մարսուում և չեն կարող իբրև կերակուր ծառայել, մանաւանդ որ նոցա միջի աղօտային նիւթերի մեծ

մասը ոչ թէ սպիտն է, այլ մեր մարմնի համար բոլորովին անօգուտ մի ուրիշ խառնուրդ (ամիգօ): Ելի մի փոքր կարելի է իրեն սուսազրծածել, բայց աւելի լաւ է առանց նորան հօլլայ գնալ, մանաւանդ որ նոցա մէջ խիստ շատ կան թունաւորուածներ և մինչեւ անզամ ուտելու սունկն էլ, եթէ հասած չեն, կարող են թունաւորութիւն առաջացնել:

### ԸՆԴԵՂԵՆ ԵՒ ԱՐՄԱՏԵՂԵՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

147. ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ԿԱՏԼԵՏ ԿԱԹՆԵՎ ՍՈՌԽՈՎ. Գետնախնձորի կապահանձորը լուա, մարքիր, եփիր աղաջրի մէջ, ջուրը դէն ածա, կճղիր և տրորիր, մի գդալ իւզ արա, մէկ կամ երկու ձու,  $\frac{1}{4}$  բաժակ կարմրացրած ալիր և աղ, կատլէտներ շմիր, շաղախիր ալիրի կամ փշրած սուխարու մէջ և իւզի մէջ տապակիր: Սորա հետ զործ դիր հետեւեալ կաթնէս սուսը: 2 բաժակ կաթնի հետ խառնիր 2 թէլի գդալ ալիր, 1 գդալ շաքարաւաղ և մի քիշ դարչին, դիր պլիտի վերայ, եփիր և ածա կատլէտի վերայ:

148. ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ԿԱՏԼԵՏ ՍՈՒՆԿԻ ՍՈՌԽՈՎ. Կատլէտը պատրաստիր մինոյն ձեռվ ինչպէս № 147-ում ասուած է: Պղնձի մէջ լցրու  $\frac{1}{8}$  գրվ. կարագ, իսկ պասին՝ քաղցր

ձէթ, մէջը ածա մի գդալ սպիտակ № 2 ալիւր և եփիր, հետը խառնելով. մէջը լցրու 2 բաժակ սունկի բուլիօն, որը պատրաստում է 4-8 չոր սունկը՝ աղով և 2 գլուխ սոխով եփելոց. լաւ եփ տուր, մէջը ածա մանր կտրտած եփած սունկ, կանաչի և հանիր կատլէտի կողքին:

149. ԿԱԹՆՈՎ. ԳԵՏՆԱԽՆՁՈՐ. Գետնախնձորը կպճիր, լուա ու եփիր: Երբ փափկի, ջուրը դէն ածա, իսկ գետնախնձորը փայտէ ամուր գդալով լաւ տրորիր, մինչեւ չի սառել. աղ արա, մի գդալ էլ իւզ, խառնիր, որ սպիտակի, վրէն 1 կամ  $1\frac{1}{2}$  բաժակ կաթ ածա, խառնիր, մի ձու արա, նորից խառնիր, հանիր իւզով օծած թափ մէջ, վրայից սուխարի ցանիր և տաք հնոյում թիւիր:

150. ԿԱՆԱԶ ԼՈԲԻ ԵՂ ՈՒ ՁՈՒՈՎ. 2 գրվ. Կանաչ լորու ծայրերը պէտք է կտրտել և թելերը հեռացնել, մանր կտրտել դանակով, լուանալ, պղնձի մէջ ածել, աւելցնել 4 գլուխ կրտրտած սոխ, վրէն ջուր լցնել մինչեւ լորին կծածկուի և եփել. Երբ որ ջուրը կիսով շափ պակասի՝ պէտք է աւելցնել մէջը սամիթ, ուեհան և տարխուն և շալունակել եփելը, հետն էլ քափկիրով ջարդել. Երբ որ ջուրը գրեթէ բոլորովին ցամաքի՝  $\frac{1}{4}$  գրվ. իւզ արա և իւզի

մէջ նորից եփիր, երբ պատրաստ լինի՝ հինգ  
հարած ձու արա երեսին և առանց խառնելու  
եփիր մօտ 10 ըռալէ:

Կանաչ լորին կարելի է նաև չորացնել և  
ձմեռը չորից նոյն ձեռվ կերակուր պատրաս-  
տել, միայն եփելուց առաջ պէտք է եռցրած-  
ջրով մի երկու անգամ լուանալ:

151. ԿՅՆԱԶ ԼՈԲԻ ՎԱՐԵԿՈՎ. Կանաչ լո-  
րին եփիր ինչպէս գրուած է № 150-ի մէջ.  
Երբոր իւղ անես, գոխանակ ձուի՝ աւելցրու-  
մէջը տապակած և կտրտած վառել և այն-  
պէս շաբունակիր եփել մինչև որ լորին բոլո-  
րսին եփուի:

152. ԿՅՆԱԶ ԼՈԲՈՒ ԲՈՐՍՆԻ. Կանաչ լորին  
եփել № 150 ի ձեռվ, միայն սոխը և իւղը ա-  
ւելի պէտք է անել և առանց ձուի: Մինոյն  
ժամանակ տապակիր մի վառել կամ գառան-  
միս և կտրտիր: Յետոյ բլիւդի վերայ մի երես  
լորի ածա, մի երես վառել կամ միս գարսիր  
և վրէն դարձեալ մի երես լորի: Մի քիչ սառ-  
ցնելուց յետոյ վրայից ածա քամած և զրի մէջ  
բաց արած կամ միայն քիչ քամած մածուն,  
իսկ սորա վերայ ցանիր ծեծած դարշին,  
շաքարաւաղ և դափուան, նախապէս միասին  
խառնելուց յետոյ:

153. ՊՈՐԻՆՃԱՆԻ ԲՈՐՍՆԻ. 10 պորինճան:

կմլիր, երկար շերտերով կտրտիր, 1 սեղանի  
գովալ աղ արա և մի քիչ յետոյ ճմլելով՝ չու-  
րը քամիր. քամելուց յետոյ մի աման կտրտած  
սոխի և  $\frac{1}{4}$  զրվ. իւղի հետ տապակիր. տա-  
պակելիս ածա մէջը մի քիչ կտրտած ոամիթ  
և ոեհան. այս կերակուրը հանիր բլիւդի վե-  
րայ, չորս կողմը դարսիր տապակած ու կը-  
տրտած վառեկը և վրէն ածա քամած ու զրի  
մէջ լուծուած կամ ուղղակի կիսատ քամած  
մածուն, վրէն էլ ցանիր՝ զափուան, շաքարա-  
ւաղ և դարշին՝ միասին խառնած:

154. ԹԱՐՄ ԲԱՄԻԱՅՈՎ. ՄԻՍ. 2 զրվ. ոչ-  
խարի միսը կտրտել և քիչ իւղի մէջ մի փոքր  
տապակել 2 – 3 զլուխ մանր կտրտած սոխով:  
2 զրվ. կարմիր պորինճանը քամիլ, 3 զրվ.  
Նոր բամիան լուանալ և դարսել մսի վերայ,  
պորինճանի ջուրն էլ վրէն ածել, աղ, պղպեղ  
անել և միջակ կրակի վերայ եփել մինչև որ  
բամիան եփուի:

155. ԹԱՐՄ ԲԱՄԻԱՅՈՎ. ՄԻՍ ՈՒՐԻՇ ԿԵՐՊ. 2  
զրվ. ոչխարի միսը մանր կտրտել, ածել կաթսայի  
մէջ և քիչ ժամանակ կրակի վերայ թողնել,  
որ ջուրը ցամարի. յետոյ աւելցնել մի փոքր  
կտրտագ, աղ անել և տապակել այնքան, մինչև  
որ կարմիրի: 4 զլուխ տափակ կտրտած սոխ  
խառնել հետը և նորից տապակել մինչև որ

սովն էլ եփուի. Այնուհետև վրէն դարսել  
մաքրած բամիայ Յ գրվանքի չափ, մի բա-  
ժակ ջուր ածել և թողնել որ եփուի բամիան:

156. ԶՈՐԱՅՐԱԾ ԲԱՄԻԱՅՈՎ. ՄԻՍ. Նախապէս  
միոը պէտք է պատրաստել այն ձեռվ, ինչպէս  
որ ասուած է նախընթաց յօդուածում:

2որ բամիան սովորաբար շարած է լի-  
նում թելերի վերայ: Բամիան,  $\frac{1}{4}$  ֆունդ,  
այդպէս թելով պէտք է քիչ խաշել, յետոյ թե-  
լից հանել, ջուրը դէն ածել և բամիան դարսել  
վերոյիշեալ ձեռվ տապակած մսի վերայ, մին-  
չե որ բամիան կեփուի:

157. ԱԶԱՓՍԱՆԴԱԼ. Վառեկը մաքրել,  
փոշոտիրը հանել և կտրտել. 1 գրվ. սովը  
մանր կտրտել և տապակել իւղի մէջ. վրէն  
աւելացնել 2 գրվ. կարմիր պոմազոր և 10  
հատ էլ բաղրջան կտրտած. պամագորը պէտք  
է առաջուց ածել տաք ջրի մէջ, կաշին կը-  
պել և կորիզները հանել: Վարելի է ածել և  
1 գրվ. կճապած և կտրտած գետնախնձոր: Մի  
քիչ եփելուց յետոյ աւելացնել վառեկը և դար-  
ձեալ եփել մինչե պատրաստուելը:

158. ԲԱԴԲԻՉԱՆ-ՊԵՅՐԵՔ. 10 պորինճանը  
կիսիր մէջտեղերից. սոցա էլ կիսիր երկարու-  
թեան վերայ. իւրաքանչիւր կտոր նորից կի-  
սիր առանց բաժանելու միմեանցից և աղ արա:

2ուն հարիր, մէջը պանիր քերիր, մաղղանոս  
կտրտիր և այս թանձը խառնուրդը զնելով  
կիսած պորինճանների մէջ խղում տապակիր:

159. ՍԵՐԿԵՒԻԼՈՎ. ՄՄԻ ՏՈՒՄԱ. Վերցընւ

8 հատ սերկելի, կոթի տեղերը քիչ կտրիր և  
այնտեղից փորիչ գործիքով կամ եթէ այդ շը-  
կայ՝ դանակով միջի գուլը հանիր: Անուհետե  
2 գրվ. ոչխարի փափուկ միոը լաւ ծեծիր, մէ-  
ջը 2 գլուխ կտրտած սոխ, քիչ աղ ու պղպեղ  
և կտրտած մաղղանոս արա, միասին խառնիր  
և տապակիր մի գդալ իւղի մէջ. յետոյ նորից  
ծեծիր և այդ ծեծած մսով լցրու փորած սեր-  
կելիները, կտրտած գլուխները նորից վրէն  
ծածկիր, դարսիր պղնձի մէջ, հետը դարչին,  
2 գդալ շաքարաւազ,  $\frac{1}{4}$  գրվ. իւղ, մի բա-  
ժակ էլ ջուր ածա, երեսը պինդ ծածկիր և  
թոյլ կրակի վերայ եփիր այնքան, որ չըրբրուի:

160. ՌՈՒԼԵՏ. Տաւարի միոը ծեծիր ինչ-  
պէս կատէտի համար, մէջը խառնիր ձու,  
սպիտակ հաց, աղ, պղպեղ, ով ցանկանում է  
նաև կծոխուր: Վերցրու ոչխարի փառը և կի-  
սիր. ծեծած միսն էլ կիսիր. ամեն բաժինը  
փաթթիր մի կտոր փառի մէջ, ծայրերն ամ-  
րացնելով դիր թաւի մէջ և հնոցում խորովիր:  
Առանձին առանձին եփիր մակարօն, ու սալոր,  
գետնախնձորն էլ կճպելով տապակիր: Յետոյ

Խորոված միսը կտրտիր, դարսիր սկսւաղի վերայ և կողքին դարսիր մակարօնը, սալորն ու գետնախնձորը: Սոցա ջրից քիչ վերցնելով պատրաստիր հիւթ և ածա սպատրաստած կերակրի վերայ:

161. ԾՆԵԲԵԿ ԵՂ. ՈՒ ԶՈՒՈՎ. ԾՆԵՐԵԿԸ ծայրից կտրտում են մանր մանր, մինչև չորացած մասի հասնելը. չոր մասերը պէտք է դէն ածել. կտրտածը պէտք է լաւ լուանալ, ածել պղնձի մէջ, աւելցնել քիչ կտրտած սոխ, վրէն բաւական ջուր ածել, աղ անել և եփել մինչև կփափկի. յետոյ ջուրը քամել. պղնձում դնել իւղ և եփած ծներեկը ու նորից եփել թոյլ կրակի վերայ. մի քիչ եփելուց յետոյ՝ վրէն ածել հարած ձու ու առանց խառնելու. եփել դարձեալ մօտ  $\frac{1}{4}$  ժամ: Մի քրեզան լիքը ծներեկին հարկաւոր է 4 դլուխ սոխ,  $\frac{1}{4}$  գրի. իւղ և 6 ձու:

162. ՍՊԱՆԱՐ. (ՉՈՄԻՆ) ԵՂ. ՈՒ ԶՈՒՈՎ. Սպանաղից մաքրում են դեղնած տերիները, լուանում և պղնձի մէջ բաւական ջրի մէջ քիչ եփում. յետոյ քամում և ակիշով լաւ ջարդում. մանր կտրտած սոխը իւղի մէջ տապակում են և մէջը ածում սպանաղը, աղ անում և լաւ խառնում. մի քիչ եփելուց յետոյ երեսին հարած ձու են անում և դարձեալ եփում  $\frac{1}{4}$  ժա-

մի չափ: 4 գրի. սպանաղին անում են  $\frac{1}{2}$  գրի. իւղ, 4 դլուխ սոխ և 10 ձու:

163. ՔԻՇՄԻՇՈՎ. ԵՒ ԶԻՐԻՇԿՈՎ. ՀԱԻ. Զաղ հաւը պէտք է լաւ մաքրել և եփել.  $\frac{1}{4}$  գրի. պիրիշկ մաքրիր, լուա և քիչ ջրի մէջ եփիր. մէջը արա 2 գրի. քիշմիչ և 1 գրի. շաքար և դարձեալ եփիր. երբ արդէն լաւ եփուած լինի՝ հաւը կտրտիր, ածա սկուտղի վերայ և այդ եփած խառնուրդն էլ կողքին:

164. ՎԱԶԻ ՏԵՐԵՒՈՎ. ՏՈԼՄԱ. 2 գրի. ոչ խարի կամ գառան շաղ և փափուկ մսերից ջղերը հանելով՝ մնացածը լաւ պէտք է ծեծել, հետը խառնելով աղ, պղպեղ և քիչ բրինձ. ծեծած մսի հետ պէտք է խառնել և 2 ձու: Վաղի տերեկը ածա եռցրած ջրի մէջ և շուտով հանիր, կոթերը կտրտիր և ծեծած միսը մանր մանր մէջը փաթթիր. այդ կոլուակները դարախիր պղնձի մէջ, վրէն ծածկիր փորբ ափաէ, որ ջուր ածելիու շբարձրանայ: Թորա վերայ ածա մնացած սսկորներից եփած մսաջուրն այնքան, որ ափոէն ծածկուի ու թող, որ լաւ եփուի: Քամած մածունը բաց արա ջրի մէջ և երբ տօլման ամանի վերայ հանես՝ վրէն ածա մածունը, իսկ նորա վերայ էլ ծեծած դարչին ու շաքար:

165. ԿԱՂԱՄԲՈՎ. ՏՕԼՄԱ. Մինոյն կերպով պէտք է պատրաստել ինչպէս վազի տերեսով, միայն փոխանակ վազի տերեսի՝ վերցնելու է կաղամբի բարակ տերեները. միսը մէջը փաթթելուց յետոյ տապակելու է իւղի մէջ. և ածելիս՝ մածուն, դարշին ու շաքար չի հարկաւոր. սրա փոխարէն թթուացնելու համար մսի մէջ պէտք է խառնել չոր հոն, ճանճուռի չիր, կծոխուր և կամ պոմագորի հիւթը:

166. ՍԵՒ ՊՈՐԻՆՃԱՆՈՎ. ՏՕԼՄԱ. 2 գրլ. ոչխարի շաղ և փափուկ միսը պէտք է ծհծել, վրէն կտրտել մի գլուխ սոխ, հետը խառնել մի քիշ եփած բրինձ, աղ, պղպեղ ու մաղպանոս անել և այս բոլորը տապակել մի գդալ իւղի մէջ. ապա նորից ծեծել: 8 սկ պորինճանը կճպել, մէջները փորել և պատրաստ ծեծած միսը լցնել նոցա մէջ, իւղով տապակել թաւի մէջ և դարսել պղնձի մէջ. յետոյ 3 գրլ. կարմիր պորինճանը լուանալ, կտրտել, եփել և մաղի մէջ քամել. ստացուած թանձր ջուրը ածել տոլմի վերայ և եփել:—8անկացովը կարող է առանց իւղի մէջ տապակելու՝ ուղղակի պղնձում եփել 2 գդալ իւղով և քամած կարմիր պորինճանով ու աղ անելով:

167. ԽՆՉՈՐԻ ՏՕԼՄԱ. Միսը պատրաստում է նոյն ձեռով, ինչպէս և իւղով վլաւը:

առանց բրնձի: 20 հատ թթուաշ խնձորի գուլը հանել առանց կճպելու և պատրաստ ծեծած ու տապակած միսը լցնել մէջը և դարսելով պղնձի մէջ, 2 գդալ իւղ անել, 1 բաժակ էլ ջուր, թիշ էլ շաքար ու դարչին և եփել մինչեւ խնձորը լաւ կարմրի:

168. ՏԱՊԱԿԱԾ ԳԵՏՆԱՍԻՆՉՈՐ. Գետնախնձորը կճպիր, տափակ կտրտիր և ջրի մէջ ածա մինչեւ եփելը, որ չորանայ. յետոյ թաւիր մէջ ձէթ ածա. գետնախնձորը ջրի միջից հանիր, աղ արա և ձէթի մէջ տապակիր: Հանելով ամանի վերայ վրէն շաքարաւաղ ցանիր:

169. ԳԵՏՆԱՍԻՆՉՈՐ ՍՈԽՈՎ. ՈՒ ՁԵԹՈՎ. 2 գրլ. գետնախնձորը կճեղով եփիր, կճպիր, մանր փշրիր, և աղ արա: 5 գլուխ սոխ մանր կտրտելով տապակիր  $\frac{1}{4}$  գրլ. ձէթի մէջ, այնքան որ չայրուի, յետոյ փշրած կարտոֆիլը խառնիր մէջը և տապակիր:

170. ԽՈՐՈՎԱԾ ԴԳՈՒՄ. Գդումը անմիջապէս զնում են հնոցի մէջ և խորտկում մինչեւ կփափկի: Կտրտելուց յետոյ կարելի է վրէն անել շաքարաւաղ կամ եփած չոր հոն:

171. ՁԵԹՈՎ. ՓԱՄԻՌ. պատրաստում է նոյն ձեռով, ինչպէս և իւղով վլաւը:

Ձէթով վլաւի մէջ կարելի է անել՝

1, քշմիշ, ընտրած, լուացած և փլաւի  
մէջտեղը ածած գամ քաշելոց առաջ:

2, դաբլու կարելի է շինել, իւղի փոխա-  
րէն ձէթի մէջ եփելով նոխուդն ու քիշմիշը:

3, նուշ և քիշմիշով, որոնք հաւասար չա-  
փով՝ եփում են շաքարի և րիշ ջրի մէջ և ա-  
ծում են փլաւի երեսին:

4, ալուրալ, հոն և շլոր, նոյն ձեռվ շի-  
նուած, ինչպէս և իւղով փլաւի համար:

172. ԳԵԾՆԱՋԻՆՁՈՐՈՎ, ԿԱՏԼԵՏ. 1 դրվ.  
գետնախնձորը եփիր, եփելուց յետոյ կճպիր,  
և փայտէ գդալով լաւ տրորիր, որ կոշտեր չը  
մնայ մէջը. աղ և մի քիշ մաղդանոս կտրտիր վրէն,  
կատլէտների ձեւ տուր, սպիտակ ալիւրի մէջ  
թաթախիր և երկու երեսն էլ ձէթի մէջ տա-  
պակիր:

173. ՏՈՊԱԿԱԾ ԲՈԽ. Քիշ թթխմոր բաց  
արէր գոլ ջրի մէջ, քիշ աղ արէր, մէջը սպի-  
տակ ալիւր խառնեցէր, կտրտեցէր բոխը և  
մէջը ածեցէր. Յետոյ մի մի գդալ հանելով ա-  
ծեցէր ձէթի կամ իւղի մէջ ու տապակեցէր,  
հետը շուռ ու մուռ տալով. և այսպէս շարու-  
նակեցէր մինչև վերջանալը:

Միենոյն ձեռվ կարելի է տապակիր և  
տարխունը, քոնդարը, սոխն ո գետնախնձորը,  
միայն խմորը շատ ջրալի շպէտք է լինի:

174. ՍՈՒՆԿՈՎ. ԿԱՐԿԱՆԴԱԿ. 2որ սունկը  
մէկ զիշեր պէտք է թթչել և միւս օրը լաւ  
մաքրել ու կտրտել. յետոյ լաւ եփիր. մի քիշ  
էլ բրինձ եփիր առանձին. սոխը կտրտիր,  
տապակիր ձէթի մէջ. կտրտած սունկն էլ խառ-  
նիր սոխի մէջ ու միասին տապակիր. եփած  
բրինձն էլ խառնիր նորա մէջ:

Առ 10 կոպ. թթխմոր, պղնձում գոլ ջը-  
րում լուծիր, ալիւրով շաղախիր և հունցիր,  
քիշ աղ էլ արա և տաք տեղ դիր, որ խմորը  
բարձրանայ: Յետոյ պղնձից սեղանի վերայ  
շուռ տուր, տակը ալիւր փոէ և խմորը բաց  
արա. սունկը քիշ քարսիր բաց արած խը-  
մորի վերալ, խմորի ափերը ծածկիր և կտրտիր  
բաժակով կամ դանակով, ձեւ տուր, երե-  
սին քիշ ձէթ քսիր և հետոյում թխիր:

175. ԿԱՆԱԶ ԼՈԲԻ ԸՆԿՈՒՁՈՎ. 2 դրվ.  
կանաչ լոբու ծայրերը, թելերը կտրտիր և  
կոտրտէ մանր. լուա, ածա պղնձի մէջ, ջուր  
ածա վրէն մինչև կծածկի և եփիր. երբ մի  
անգամ եռ գայ՝ աւելցրու մէջը կտրտած սոխ,  
կանաչեղին ու աղ և լաւ եփիր մինչև որ ջուրը  
ցամաքի և լոբին հում շմնայ. յետոյ  $\frac{1}{2}$  դրվ.  
ընկոյզ ծեծիր և արա մէջը, մի երես էլի եփ  
տուր:

176. ԶԻԹՈՎ. ՊՈՐԻՆՃԱՆ. 10 պղրինճանը

կճպիր, մէջելքից կտրիր և յետոյ մանր կտրտիր  
երկարութեան վերայ. ածա մի ամանի մէջ,  
բաւական աղ արա, 5 րոպէի չափ տրորիր ու  
յետոյ միջի ջուրը պինդ սղմելով քամիր, որ  
դառը ջուրը գուրս գայ և լաւ լուա որ կո-  
րիլներից մաքրուի: Յետոյ բաւական սոխ կը-  
տրտիր մանր, ածա պղնձի մէջ սոխը, պո-  
րինճանը,  $\frac{1}{4}$  զրի. ձէթ, աղ, կտրտած կանա-  
չեղին և թոյլ կրակի վերայ տապակիր այն-  
քան, մինչև որ պորինճանը հում չմնայ: Յան-  
կացողը սորա հետ գործ է դիում սխտոր ու  
քացախ խառնած:

177. ԶԻԹՈՎ. ԼՈԲԻ. Լոբին ջրի մէջ եփիր  
քիչ աղով. երբ եփուի՝ քամիր վլաւքամիշի մէջ:  
Բաւական սոխ տապակիր ձէթի մէջ, լոբին ա-  
ծա մէջը ու նորից տապակիր:

178. ՂԱՆՉԻԼ. Գէտք է լաւ մաքրել, լուա-  
նալ, բաւական ջրի մէջ ածել ու եփել. յետոյ  
հանել պղնձից և սառը ջրի մէջ ածել. 10 րո-  
պէից յետոյ հանել, ածել սկուտղի վերայ, աղ  
անել ու խառնել, վրէն ձէթ, իսկ ցանկացողը  
կարող է և քացախ ածել:

179. ՍՊԻՆՏՐԻ. Լաւ մաքրիր, քիչ աղով  
ջրի մէջ եփիր, յետոյ ջրից հանիր ու քացա-  
խով տար սեղան:

180. ՆՇԵՄՊԱՅ.  $1\frac{1}{2}$  զրի. քաղցր նուշը  
ածա եռցրած ջրի մէջ,  $\frac{1}{2}$  ժամ մէջը թող և  
հանելով կճպիր, ծեծիր հաւանդի մէջ, ցանե-  
լով վրէն մի քիչ ջուր. ծեծած նուշը բաց ա-  
րա 3 բաժակ եռցրած ջրի մէջ, կտաւի մէջ  
քամիր, մնացորդը նորից ծեծելով՝ դարձեալ  
3 բաժակ տաք ջրի մէջ բացարա և քամիր. և  
ստացուած նշաջուրը ածա պղնձի մէջ, աւել-  
ցրու վրէն  $\frac{1}{2}$  զրի. շաքարաւաղ և 2 բաժակ  
լուացած բրինձ և եփիր մինչև թանձրանալը:  
Եթէ բրինձը հում մնայ, իսկ նշաջուրը ցամա-  
քի՝ ծեծած նշի մնացորդից դարձեալ կաթը  
հանելով՝ աւելցրու վրէն մինչև որ բրինձը  
բոլորվին եփուի:

181. ՊՈՄԱԴ-ՈՐՈՎ. ՍՈՈՒՄ. 1 զրի. պոմա-  
դորը կտրտիր, միջի սերմերը հանիր և վէն  
ածա, քիչ մսաջրի մէջ եփիր, քամիր մաղի  
մէջ և քիչ շաքար աւելցրու: Դորա վերայ ա-  
ծա մի գդալ իւղ և մի գդալ ալիւր, աղ արա,  
երկու գդալ մսաջուր աւելցրու և եփիր:

182. ՍԱԼՈՐԻ ՍՈՈՒՄ. 1 զրի. քաղցր սա-  
լորը, քիչ մեխակ և գարշինի հետ եփիր ջրի  
մէջ, անցկացրու մաղի միջով, հետը խառնիր  
 $\frac{1}{2}$  զրի. շաքար,  $\frac{1}{2}$  զինու բաժակ սպիտակ  
գինի, 1 գդալ գետնախնձորի ալիւր և մի գը-  
գալ ջուր, ու բոլորը միասին խառնելով՝ եփիր:

183. ԽՆՉՈՐԻ ՍՈՌԻՍ. Պէտք է 4 խնձոր կճպել, կտրտել և գուլը մաքրել, իսկ կճեպները եփել Յ բաժակ ջրի մէջ, բամել ու բամած ջուրն ածել խնձորի վերայ. յետոյ աւելցնել մէջը 6—8 կտոր շաքար ու քիչ դարչին, զնել կրակի վերայ, միաժամանակ խառնել և հետը մէջն ածել մի երկու գդալ ջրի մէջ լուծած գետնախնձորի ալիւր և երբ լաւ եփուի վերցնել կրակից:

ԱՀԻՒԹԵ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ:

184. ՄԱԿԱՐՈՆ ԵՂ. ՈՒ ԶՈՒՌՎ. 1 գրվակարօն լուս և եփիր քիչ աղով ջրի մէջ, բամիր և տապակիր  $\frac{1}{2}$  գրվ. իւղի մէջ, աւելցնելով 2 ձու. երբ իւղի մէջ լաւ տապակուի՝ երեսին պէտք է անել 4 հարած ձու և եփել մինչև ձուն թերլսաշ կեփուի:

185. ԷՐԻՇՏԻ ԵՒ ՔԱՂՅՅ ԿԱՐԿԱՆԴԱԿՆԵՐԻ ԽՄՈՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՔ. Հունցիր պինդ խմոր մի կամ 2 ձուից, նոյնքան ջրից և մօտ  $1\frac{1}{2}$  բաժակ կամ  $\frac{1}{2}$  գրվ. ալիւրից  $1\frac{1}{2}$  թէլի գդալ աղից. Փայտէ զբանակով բարակ բաց արա, ալիւր ցանելով վրէն, կտրիր շերտ շերտ երկու մատ լայնութեամբ, կտորները մէկմէկու վերայ դարսիր, մանր կտրտիր, սեղանի վերայ փոփոխ, որ չորանայ:

Կարկանդակների համար նոյնպիսի խմոր պէտք է հունցիր, բաց անել, մանր գունդերով միջուկից դարսել վրէն, ծածկել բաց արած խմորով, ափերը ջրով թաց արած, փոքր բաժակով շրջանակների ձևով կտրտել, ափերը ամրացնել, ածել աղով ջրի մէջ և եփել:

186. ԱԼՈՒԲԱԼՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ. Պատրամալիր խմորը № 185-ի համեմատ և բացարա: Վաղօրօք պատրաստիր ալուբալը. կորիզները հանիր, շաքարի մէջ շաղախիր, 2 թաս մարած ալուբալին 1 թաս շաքար արա և դիր արեկի տակ: 3—4 ժամից յետոյ ածա քամիչի մէջ. ալուբալի դուրս թողած հիւթը ածա ողնձի մէջ. ալուբալով լցրու կարկանդակների խմուսիները և եփիր: իսկ հիւթը պէտք է գործ զնել կարկանդակների հետ թարմ թթուասերով:

187. ԹԹՈՒՍԵՐՈՎ ՄԱԿԱՐՈՆ.  $\frac{1}{2}$  գրվ. մակարօնը մանր կտրտիր, եփիր աղ արած ջրի մէջ, այնպէս որ շատ չեփուի ու ածա մաղի վերայ: Ելք ջուրը բամուի՝ ածա մի ամանի մէջ, աւելցրու 2 ձուի դեղնուց  $\frac{1}{2}$  բաժակ թթուասերի կամ 1 բաժակ կաթի մէջ բաց արած, քիչ էլ իւղ, խառնիր, ածա իւղով օծած հողէ ամանի մէջ ու եփիր հնոցի մէջ:

188. ՔԱՂՅՅ ԹԵԼԽՄՈՐ (ճաճկա): 1 գրվ. թելխմորը (վերմիչել) եփիր եռցրած աղաջրի

մէջ և քամել ու ածել մի ամանի մէջ. աւելցնել վրէն 6 ձու,  $\frac{1}{2}$  գրվ. շաքար, 3 զդալիսկ, բոլորը միասին խառնել, մաքուր պղնձի մէջը ամեն կօղմից խղ քսել, տակը մաքուր թուղթ փռել, կողքերին ծեծած պաքսիմատ ածել և խառնուրդը լցնել մէջը, հնոցի մէջ դնել և թխել; Երբ որ թխուի՝ պէտք է ամպողապէս սկսութիւն վերայ հանել: Կէս չիշ գիշի, շաքար, մեխակ և դարչին միասին եփելով՝ ածա վրայից:

189. ԲՈՒԴԻՆԳ. Մի սպիտակ բուլկին թրչիր կաթի մէջ և քամիր. յետոյ դիր պղնձի մէջ, վրէն ածա 6 ձուի գեղնուց,  $\frac{1}{2}$  գրվ. էլ շաքար ու լաւ խառնիր. յետոյ 6 ձուի սպիտակուցը լաւ փրփրացնելով խառնիր նորա հետ. այնուհետեւ կաղապարի ներսից ամեն կօղմից խղ քսիր, վրէն էլ ծեծած պաքսիմատ. իսկ յետոյ լցրու պատրաստած խառնուրդը. կաղապարը գիր մի պղնձի մէջ, վրէն ջուր ածա այնպէս, որ կաղապարի մէջ եռ տալիս ջուր չմտնի, լաւ է՝ որ 3 մատի շափ ջրի մէջ լինի. կաղապարի բերանը ծածկիր և գիր կրակի վերայ մինչեւ որ թխուի, Երբ որ պատրաստուի՝ հանիր բլիղի վերայ և վրէն ածա խր սօսուր, որ պէտք է հետևեալ կերպով շինել.—3 ձուի գեղնուց,  $\frac{1}{2}$  չիշ գինի,  $\frac{1}{4}$  գրվ. ծեծած շաքար լաւ խառնիր հարիչով մինչեւ որ թանձրանայ:

## Դ. ՄԱՍԼ

ՃՇԾԵ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

### 1. ԱԼԻԻՐԵ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

190. ԿԱՐԿԱՆԴԱԿ ՏՎԱՐՈԳՈՎ. (լաճոյ): Խմորը պէտք է պատրաստել 185-ի եղանակով. 1 գրվ. թարմ տվարօգի հետ խառնիր մի զդալ թթուասեր, 1 ձու և աղ. և խմորը բացանելով՝ կաղմիր կարկանդակներ ու ածա աղ արած եռցրած ջրի մէջ; Երբ որ ջրի երեսը բարձրանան՝ հանիր սկսութիւն վերայ; Հետոը գործ են դնում իւղ, իսկ ով սիրում է՝ նաև թթուասեր, շաքար և դարչին:

191. ԿԱԹՆՈՎ, ՄԱԿԱՐՈՆ.  $\frac{1}{2}$  գրվ. մակարոնը պէտք է ածել եփ տուած ջրի մէջ, եռցնել և հանել քամիչի մէջ, վրէն սառը ջուր ածել. Երբ ջուրը քամուի՝ մակարոնը հանել և ածել իւղով օծած պղնձի մէջ, դորա վերայ

էլ ածել  $1\frac{1}{2}$  բաժակ եռցրած կաթ, աւելցնել 1 գդալ կարագ,  $\frac{1}{4}$  բաժակ շաքարաւազ, վրէն ցանել սուխարի և թխել։ Հետը կարելի է դործ զնել շաքար և դարչին։

192. ԲՈՒՐԲՈՒՇԵԼԱ. 4 ձուից և սպիտակ խոշոր ալիւրից պինդ խմոր հունցել, խմորը բաց անել շատ բարակ, կտրտել զանազան ձևի և էլի աւելի բարակացնել ու մէջ տեղը կտրտել ձեխով, իւղը եռցնել թաւի մէջ, խըմորներ մէկ մէկ զնել մէջը և պատռաքաղով խկոյն շարժել, որ ուռչի. մի քանի վայրկեանում արդէն կկարմրի, խկոյն հանեցէր և շաքարաւազ շաղ տուէք վրէն։

193. ԱԼԱԳԻՍ.  $1\frac{1}{3}$  բաժակ ջուր,  $2\frac{1}{4}$  բաժակ ալիւր և 2 մսխալ չոր թթխմոր, 1 թէյի գդալ աղ լաւ խառնեցէր միասին, ծածկեցէք մի շորով և տաք տեղ դրէք։ Երբ խմորը բարձրանայ՝ նորից հունցեցէք 1 ձուով և 1 գդալ իւղով ու դրէք որ նորից բարձրանայ։ և յետոյ էլ չխառնելով, մի մի գդալ վերցրէք, դրէք թաւի վերայ եռցրած իւղի մէջ ու երկու կողմից տաղակեցէք։ Սորա հետ ուտում են շաքար ու քաղցրաւենի։

194. ԱԼԱԳԻՍ. ԽՆՉՈՐՈՎ. Պատրաստիր խըմորը, ինչպէս ասացինք № 190-ի մէջ։ Տաղակելուց առաջ խնձոր կճպիր, միջուկը հա-

նիր և բարակ բարակ կտրտելով խառնիր խըմորի մէջ։ Այսուհետև խմորը գդալ գդալ հանիր, ամեն գդալի մէջ մի կտոր խնձոր, և տաղակիր։ Ուտում են շաքարով։

Ալագիսայի խմորը կարելի է շինել և այս կերպով. վերցրու 2 ձուի գեղնուց,  $\frac{1}{2}$  բաժակ կաթ և  $\frac{1}{2}$  բաժակ ջուր, ով ցանկանայ քիչ էլ շաքար, միասին խառնիր, մէջը ածելով ալիւր, մինչև որ միջակ թանձրութիւն ստանայ. երբ պատրաստուի՝ մէջը խառնիր տափակ կտրտած խնձոր, իսկ ով ուզում է քաղցրաւենի. յետոյ 2 ձուի սպիտակուցը լաւ փրփրացրու, մէջը խառնիր և տաղակիր ինչպէս վերև ասուած է։

195. ԲԻՍԿՎԻՑ. (Դրաշեն)  $1\frac{1}{8}$  գրվ. իւղ հարիր բաժակի մէջ մինչև սպիտակելը. 3 ձուի գեղնուց էլ  $\frac{1}{4}$  բաժակ շաքարով (ոչ շաքարաւազ) հարիր մի ուրիշ բաժակում մինչև սպիտակելը, երկուսը միասին խառնիր, լցնելով մէջը 2 բաժակ խոշոր սպիտակ ալիւր և ածելով վրէն 2 բաժակ կաթ գդուշութեամբ խառնիր։ Մեծ թաւի մէջ 1 գդալ իւղ ածա, երբ շատ կտարանայ՝ խմորը ածա վրէն և  $\frac{1}{2}$  ժամ դիր հնոցը որ թխուի։

196. ԲԻՍԿՎԻՑ. ԴՐՈԺՈՎ. 5 գրվ. ալիւր, 5 կոպ. գրոժ խառնել գոլ ջրի մէջ, հետը

խառնելով 2 բաժակ զոլ կաթ։ յետոյ ածել քիչ ալիւր և լաւ խառնելուց յետոյ դնել որ բարձրանայ։ 12 ձուի հետ ածել  $1\frac{1}{2}$  բաժակ իւղ, 3 բաժակ շաքար, առաջուայ խառնուրդը, մնացած ալիւրը և լաւ խառնել։ երբ դարձեալ բարձրանայ՝ թխել հնոցի մէջ։ Խմորը փափուկ լինի։

197. ԽԵՂՃ ԱՍՊԵՏՆԵՐ. Սպիտակ բուլին սլէտք է հաստ շերտերով կտրտել, 1 բաժակ կաթի հետ խառնել 2 ձու և  $\frac{1}{4}$  բաժակ շաքար։ կարելի է աւելցնել և  $\frac{1}{4}$  գղալ աղած դարչին։ Ամեն մի կտոր բուլին թրչիր այդ կաթի մէջ և դարսիր մէկ մէկու վերայ խորը ամանի մէջ։ Վրայից ածա մնացորդ կաթը և մի քանի բոպէ թող որ ուռչին։

Թաւի մէջ  $\frac{1}{4}$  գրվ. իւղ տարացրու, հացերը դարսիր մէջը և տապակիր երկու կողմից։ Հետը կարելի է գործ դնել քաղցրաւենի։

198. ԲԼԻՆՉԻԿ. (կաթխմոր)։ 1 ձու, 1 բաժակ ալիւր և  $1\frac{1}{2}$  բաժակ կաթ խառնիր և աղ արա։ Թաւի վերայ աղ քսելով՝ տաքացրու, շորով մաքրիր, իւղով օծիր և էլի տաքացրու։ մի գղալ խմոր ածա վրէն այնպէս, որ թաւի ամեն կողմը տարածուի և դիր պլիտի վերայ։ Երբ բլինը ոկսի բարձրանալ և թաւից բաժնուել և երբ մի երեսը եփուի, վերցրու և դիր

մաքուր սեղանի վերայ։ Թաւային կրկին խղ քսիր, խմոր ածա վրէն, և այդպէս շարունակիր մինչև վերջ։ ձաշից առաջ իւրաքանչիւր բլինը եռանկիւնի ծալիր, սպիտակ երեսը դըրսից, դարսիր իւղ քսած թաւի վերայ, երկու կողմից եփիր և սեղան տար շաքարով ու քաղցրաւմնով։

199. ԽՆՉՈՐՈՎ. ԲԼԻՆՉԻԿ. Բլինչիկներ թըլիիր № 195-ի պէս։ Վերցրու 2 գղալ ալիւր և 1 գղալ կարագ, լաւ խառնիր  $\frac{3}{4}$  բաժակ կաթի հետ, եռցրու խառնելով, մէջը ածա  $\frac{1}{4}$  բաժակ շաքարաւագ և քիչ ծեծած դարչին և խառնիր։ Երբ բլինները թխուին, ամեն մէկին քսիր վերայիշեալ ալիւրէ խտռնուրդը, աւելցնելով մէջը 2 հատ մաքրած և մանր կտրտած խնձոր։ 2որս ծալ արա, դիր թաւի վերայ եռցրած իւղի մէջ և երկու կողմից եփիր։ Յանկացողը կարող է հետը գործ դնել մորի (մալինա) կամ ուրիշ քաղցրաւենի։

200. ԾԱԼԾԱԼ. ԿՈՐԿԱՆԴԱԿ. (Слоенныя пирожки) 1 գրվ. ալիւրից սառը ջրով խմոր հունցիր. սեղանի վերայ այդ խմորը քիչ բաց արա,  $\frac{1}{2}$  գրվ. կարաղը երեք մասն արա և մէկ կտորը խմորի մէջ դնելով՝ խմորը ծալիր, էլի դրդնակով բաց արա և երեք անդամ միննոյնը կրկինիր, աւելացնելով մնացեալ կարագն էլ։

Խմորը պէտք է ծալել ամեն անգամ այսպէս. առաջ չորս տակ, յետոյ այդ երկար շերտը վերևից ուներկեց վրայ ծալել դարձեալ չորս տակ. և այսպէս երեք անգամ. չորլորդ անգամ բաց արա այնպէս, որ խմորը շատ բարակ չլինի: Վաղօրօր պէտք է պատրաստել գուլը. այն է փափուկ միսը պէտք է լաւ ծեծել, կտրտած սոխի հետ տապակել և երբ տապակուի՝ Յ եփած ձու էլ մէջը լաւ ծեծել, աղ անել և լաւ տապակել: Յետոյ միսը քիչ քիչ շարիր տափակացրած խմորի վերայ, խմորը ափերից ծածկիր մսերի վերայ և կտրտիր առանձին առանձին ու ափերը ամրացրու. վերայից քսիր ձուի դեղնուց և դնելով երկաթէ թիթեղի վերայ՝ հնոցի մէջ թխիր մինչև կարմրելը:

## 2 ՔԱՂՅՐ ԱՐԳԱՆԱԿՆԵՐ ԵՒ ԿՈՄՊՈՏ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ, Թէ արգանակը և թէ կոմպոտը եփում են մի տեսակ, միայն թէ արգանակի համար, օրինակ 4 մարդու համար, 4 ափսէ ջուր են վերցնում, իսկ կօմպոտի համար՝ 1 ափսէ, շաքարը երկուսի համար էլ նոյնքան անելով,

201. ԶՈՐ ՊՏՈՒԴՆԵՐԻՑ ԱՐԳԱԿԱԿ ԿԱՄ ԿՈՄՊՈՏ, 1 գրվ. սկ ճանճուրը, չոր տանձ. չոր

խնձոր և շամիչ տաք ջրում լուա, ածա պղնձի մէջ մի կտոր դարչնի հետ, աւելցրու  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  բաժակ շաքար, ջուր ածա և եփիր մինչև փափկի: Եթէ ուզում էք արգանակ եփիր՝ աւելցրէք մէջը մի թէյի գդալ գետնախնձորի ալիւր  $\frac{1}{4}$  բաժակ սառը ջրի մէջ լուծուած և եռցրու:

202. ԹԱՐՄ ԽՆՉՈՐԻ ԵՒ ՍԵՒ ՃԱՆՃՈՒՐԻ ԿՈՄՊՈՏ,  $\frac{1}{4}$  գրվ. ճանճուրը առանձին եփիր: Յ բաժակ ջրով և մի բաժակ շաքարով եփիր հօսր օշարակ. 4 քաղցր և 4 թթու խնձոր կճպիր, միջուկները հանիր, ամեն մէկը 8 մասն արա և ածա օշարակի մէջ ու եփիր մինչև կակդելը, գցելով մէջը մի կտոր դարչնի: Ամանի վերայ հանելուց յետոյ պէտք է ածել մէջը և եփած ճանճուրը:

ՃԱՆՃՈՒՐԻ ջուրը իբրև դեղ էլ են խմում:

203. ԽՆՉՈՐԻ, ՏԱՆՉԻ, ՆԱՐԻՆՉԻ ԵՒ ՃԱՆՃՈՒՐԻ ԿՈՄՊՈՏ,  $\frac{1}{2}$  գրվ. ճանճուրը մաքուր լուա և եփիր մինչև լաւ փափկի. յետոյ քամիր: 1 գրվ. խնձորն և 1 գրվ. տանձը կճպիր, կտրտիր ամեն մէկը չորս մաս, մէջները մեխակներ ամրացրու: 1 բաժակ ջրի մէջ ածա 1 բաժակ գինի, 1 գրվ. էլ շաքար, քիչ դարչնի և եփիր մինչև քիչ թանձրանայ. սորա մէջ ածա տանձը և եփիր այնքան որ չքըքրուի. յետոյ ածա մէջը խնձորը և այն էլ եփիր ու հա-

նիր որ սառչի: Այնուհետև սկսուաղի վերայ մէջ-  
տեղը դարսիր ճանճուռը, դորա շուրջը տանձն  
ու խնձորը. 2 նարինջ կտրտելով ու գոլ օշա-  
րակի մէջ թաթախելով՝ դարսիր նորա բոլորքը  
և օշարակն էլ ածա վրէն:

204. ՊԱՂՊԱՂԱԿ. Վերցրու 1 վանիլ, 1  
լիմոնի կճեպ, 2 զրկ. շաքար, 10 ձու: Վա-  
նիլը կտրտիր և լիմոնի կճեպի վերսկի մասը  
կճպիր, շաքարն ու ձուն խառնիր միմեանց  
հետ: 12 բաժակ կաթը տաքացրու, ածա հա-  
րած ձուի մէջ և խառնիր. դիր պլիտի վերայ  
և հարիչով խառնիր, թող քիչ քիչ թանձրա-  
նայ, միայն չը եռ գայ և չկարուի. յետոյ քա-  
միր մաղի մէջ. ածա պղնձում և սառուցի վե-  
րայ սառցրու. ածա կաղապարի մէջ, ծածկիր  
վրէն թուղթ և յետոյ խուփը. ու դիր տակա-  
ռի մէջ, որի չորս կողմը լցրու սառուցով, իսկ  
սառուցի վերայ աղ լցրու: Հուտ շուտ պտոյտ  
տուր կաղապարը, երբ սառուցը հալուի՝ դար-  
ձեալ աւելցրու ինչպէս նաև աղը: Երեք չորս  
անգամ փայտի գդալով պէտք է խառնել պաղ-  
պաղակը, որ լաւ սառչի: Եւ այդպէս պէտք  
է մէկ կողմից պտոյտ տալ և միւս կողմից  
տակառից ջուրը բաց թողնել:

205. ՊԼՈՄԲԻՐ:  $\frac{3}{4}$  զրկ. շաքար և 6 ձուի  
գեղնուց մի փոքր պղնձում լաւ խառնիր, ինչ-

պէս գոգլիմոգլի, հետը խառնելով 1 կտրտած  
վանիլ և լիմոնի կճեպ. վրէն խառնելով ածա  
1 բաժակ կաթ, քիչ կրակի վերայ դիր և տա-  
քացրու, յետոյ անցկացրու մաղի մէջ և այդ-  
պէս պղնձով սառուցի վերայ: Այնու-  
հետի մի ուրիշ ամանի մէջ  $\frac{1}{2}$  չիշ լաւ հում  
սերը հարիչով փրփրացրու և միասին խառնիր  
ձուի հետ: Կաղապարի մէջ մանր կտրտիր մի  
երկու ծուկատ (պտուղների չոր քաղցրաւենի),  
վրէն լցրու պատրաստած խառնուրդից, իսկ  
նորա վերայ էլ գարձեալ մանրացրած ծուկատ,  
ծածկիր մաքուր թուղթ ու խուփը, դիր սա-  
ռուցի մէջ, շատ աղ արա սառուցի վերայ, որ  
շուտով սառչի: Երբ պատրաստ լինի՝ առաջ  
կաղապարը մաքուր լուա, լաւ մաքրիր, սկսու-  
դի վերայ մի անձեռոց փոփր և դանակով պլոմ-  
բիրը հեռացնելով կաղապարից՝ շուր տուր  
նորա վերայ: 2որս կողմը շարիր բիսկվիտ:

206. ԺԷԼԵ. Լաւ սառը ժէլէն մի թար-  
մացնող կերակուր է, մանաւանդ ամառը: Լաւ  
ժէլէի պատրաստելը երկար ժամանակ և աշ-  
խատութիւն է պահանջում. խէծը փոխանակ  
ինքներս պատրաստելու ոսկրներ, ջղեր, կրու-  
ճուկներ եփելով, աւելի յարմար է ուղղակի  
պատրաստ ծախուող խէժ գործ լինել: Պատ-  
րաստ խէժերը սոքա են՝ ժելատին, ձկան

խէժ և բուսական խէժեր։ Ամենից յարմարը ժելատինն է, որ և արժան է և միանդամայն անվնաս։

207. ԿՐԷՄ. Մի շիշ հում սերը ածա միջակ մեծութեան պղնձի մէջ և դիր սառուցի վերայ. մի ուրիշ փոքր պղնձի մէջ ածա 15 թերթ սոսինձ և մի թէյի բաժակ գոլ ջուր ածելով վրէն քիչ կրակի վերայ խառնիր, որ տակը չկաչի և չալրուի և դիր մի տեղ որ սառչի։ Մի ուրիշ փոքր պղնձի մէջ էլ 3 ձուի դեղնուց  $\frac{1}{2}$  զրվ. շաքար, մի գինու բաժակ կամ քիչ աւելի կաթ, մի լիմոնի կճեպ բարակ կճպած և մի վանիլ, այս բոլորը միասին կը-րակի վերայ խառնիր այնպէս որ լաւ թանձրանայ, յետոյ գդալով մաղի մէջ անցկացրու, այնպէս որ համը հետն անցնի։ Հարիչով հում սերն այնքան հարիր, որ թանձրանայ. ձուի խառնուրդը կամաց կամաց ածա ու սերի մէջ խառնիր, միայն սերը շատ սառած չպէտք է լինի, հարիչով մի քիչ հարիր. սօսինձն ածա մէջը և խառնիր. այս խառնուրդը լցրու կաղապարի մէջ և դիր սառուցի մէջ ու սառը տեղ դիր, որ չփշանայ։ Երբ սկուտղի վերայ հանես՝ շուրջը բիսկվիտ շարիր։

Յ ՔԱՂՅՅ ՊԻՐՈԴՆԵՐ։

208. ՊԱՍՈՒԱՅ ԽՄՈՐ. Նախընթաց երկ-կոյին վերցրու  $1\frac{3}{4}$  բաժակ սառը ջուր, 3 մըս-խալ չոր թթխմոր և 3 բաժակ կամ 1 զրվ. ալիւր և սոցանից խմոր հունցիր, շորով ծածկիր, որ բարձրանայ։ Միւս օրը վաղ առաւօտ նորից հունցիր, ինչքան կարելի է լաւ, խառնելով հետը մի թէյի զդալ աղ, ով կցանկայ՝ կարող է աւելցնել 1 կամ 2 զդալ արեածաղկի կամ ընկուզի ձէթ 1 կամ 2 զդալ շաքարի հետ լաւ հարած, լիմոնի մանր աղած չոր կճեպ, 3 բաժակ ալիւր էլ աւելցրու և մի քիչ պահիր՝ տակը փուելու համար։ Այնքան հունցիր մինչև որ խմորը ձեռքերին էլ չկաչի, թող որ բարձրանայ, բաց արա, գուլը դիր վրէն, ափերը ամրացրու, թիթեղի վրայ դիր, սորա վերայ ալիւր շաղ տալուց յետոյ, թող որ բարձրանայ, վրայից մեղրաջուր, թէյ կամ սուրճ քսիր և խկոյն հնոցը դիր, որ թխուի ու կարմրի։

209. ՈՒՏԻՍՈՒԱՅ ԽՄՈՐ. Երեկոյին խմոր հունցիր  $1\frac{3}{4}$  բաժակ խիստ սառը ջրից, 3 մսխալ չոր թթխմորից, 1 ձուով,  $\frac{1}{4}$  զրվ. հարած—սպիտակացրած իւղով և 2 զրվ. ալիւրով, լաւ հարիր և անձեռոց ծածկելով թող բարձրանայ։ Երբ առաւօտը խմորը բարձրանայ,

կլոր բաց արա, վրէն միջուկը դիր, ափերն ամրացրու, թող բարձրանայ, միայն վրայից ջրախառն գեղնուց քսիր և կէս ժամ դիր հընոցում։ Յանկացողը խմորի մէջ կարող է խառնել  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  բաժակ ծեծած ձուախառն շաքար։ Հնոցից հանելուց յետոյ պէտք է իւղ քսել վրէն։

210. Փօրսին ԽՄՈՐ ԹԹՈՒԱՍԵՐՈՎ,  $\frac{1}{2}$  գրվ. թթուասերը և  $\frac{1}{4}$  գրվ. իւղը տաքացրու այնպէս, որ փափիկի. 1 ձու,  $\frac{1}{4}$  թէյի թասով շաքար,  $\frac{1}{4}$  թէյի զդալ աղ,  $\frac{1}{2}$  թէյը զդալ ուղար խառնիր, ալիւր ցանելով վրէն, որ հէշտ լինի բաց անել։ Երկաթէ թիթեղի վրայ սառը իւղ քսիր, բաց արած խմորը փոփր նորա վերայ, վրէն քաղցրաւանի կամ խնձորի պիլքէ դիր, խմորի կտորսվ ծածկիր, ափերն ամրացրու, մանր շաքար ցանիր վրէն և դիր հնոցի մէջ մօտ  $\frac{1}{2}$  ժամ։

211. ՊիՌՈԳԻ ԸՆՏԻՐ ԽՄՈՐ. Վերցրու բուլկու խմոր, դիր պղնձի մէջ, աւելցրու բաւականի իւղ, կաթ, ձու, ալիւր, քիչ էլ զոլ ջուր և միասին խառնիր. Երբ խմորը բարձրանայ՝ սեղանի վերայ ալիւր փոփր և վրէն այդ խմորը նորից հանցիր. իսկ պիլքոդ կարելի է պատրաստել վերոլիշեալ եղանակով։

212. ԽՆՉՈՐՈՎ, ԿԱՐԿԱՆԴԱԿ. Խմորը շինում են ինչպէս ասուած է № 208-ի կամ

209-ի մէջ։ 4—8 խնձոր պէտք է կճպել, մանր կտրտել, շաքարաւաղի հետ խառնել, դնել բաց արած խմորի մէջ, երեսին իւղ քսել ու թթվիր։

213. ՍԵԽ ՍԱԼՈՐՈՎ, ԿԱՐԿԱՆԴԱԿ. Խմորը շինել ըստ № 208 կամ 209-ի։  $\frac{1}{2}$  գրվ. ու սառորը պէտք է ածել մի բաժակ կէծ ջրի մէջ և եփել այնքան որ քրրուի։ յետոյ խալալի միջից տրորելով անցկացնել, նորից եփել, աւելցնելով քիչ շաքարաւաղ, դնել խմորի մէջ և թթվել։

214. ՔԱՂՅՐԱՒԵՆԻՈՎ, ԿԱՐԿԱՆԴԱԿ. Խմորը պէտք է հոնցել 208 և 209-ի եղանակով։ Մնացեալը պատրաստում է ինչպէս վերելը ասուած է։

215. ՇՈԿՈԼԱԴՈՎ, ՊԱՐՍԻՄՅՈՒՏ,  $\frac{1}{4}$  գրվ. մանր ծեծած շաքարը խառնել 4 ձուի գեղնուցի հետ և այնքան խառնել որ սպիտակի։ Ածել մէջը  $\frac{1}{8}$  գրվ. մանր ծեծած քաղցր նուշ,  $\frac{1}{2}$  կտոր շոկոլադ,  $\frac{1}{8}$  գրվ. ամենալաւ ալիւր, և 1 ձուի սպիտակուցը փրփրացրած, այս ամենը լաւ խառնելուց յետոյ՝ դնել իւղ քսած թիթեղի վրայ և թթվել հնոցում։

216. ԸՆԿՈՅՁԻ ՊԱՐՍԻՄՅՈՒՏ, 1 գրվ. մաքրած ընկոյզը լաւ ծեծել, հետը խառնել 1 գրվ. շաքար, 20 ձուի գեղնուց. յետոյ աւելացնել

20. Ճուի սպիտակուց վրբիրացրած և մի բաժակ ալիւր, լաւ խառնելուց յետ խառնուրդը մասերի բաժանել, ուղած ձեերը տալ, դարսել թիթեզի վերայ և թխել ոչ թեժ հոցում:

217. ՎԱՅԼԻ. 4 ճուի գեղնուցը լաւ սպիտակացնել  $\frac{1}{4}$  բաժակ շաքարի հետ, մէջը խառնել  $\frac{1}{2}$  բաժակ ալիւր, այնքան հարել մինչև որ խմորը միանայ և կոչտեր չմնան. ապա ածել մէջը 1 բաժակ կաթ, 8 ճուի սպիտակուց վրբիրացրած ու լաւ խառնել. վերցնել վաֆլու փորմը, մէջը գուալով ածել այդ խառնուրդից և թխել կրակի վրայ:

218. ՀԱՅՈՒՅ. Վերցնել 1 բաժակ բրնձի ալիւր, 1 բաժակ շաքար, 1 բաժակ ձու,  $\frac{1}{2}$  բաժակ իւլ: Ալիւրը, շաքարը և ձուն լաւ խառնել, մինչև միանայ. յետոյ այդ խառնուրդը ածել տաքացած իւղի մէջ և դարձեալ լաւ խառնել: Յետոյ կրակի վրայ մոխիր ածեցէք և այդ խառնուրդը պղնձով վրէն դրէք. ամեն մի հինգ րոպէում պէտք է լաւ խառնել. մինչև որ խառնուրդը վիսրուն դառնայ:

219. ԿՐԵՄՈՎ. ԶՈՂԻԿՆԵՐ (ՏՐՈՒԲՈՉԿԱՆԵՐ). Մի ամանի մէջ ածել 5 ձու և հարիշով խառնել մէկ զրվանքա շաքարի հետ. երբ այդ զանգուածում փամփուշտներ (բշտիկներ) երեան այն ժամանակ պէտք է մէջը ածել  $\frac{3}{4}$  զրվ.

ալիւր, ջարդած վանիլ և թեթև կերպով խառնել: Զողիկների փորմերը նման են վագլու փորմերին: Այնունետև փորմի վրայ իւղ պէտք է քսել և դնել կրակի վրայ, որ լաւ տաքանայ. յետոյ վերցնել կրակից և խոկոյն մէջն ածել խառնուրդից և տապակել երկու կողմից էլ:

Երբ երկու կողմն էլ կարմրեն, պէտք է հանել մաղի վրայ և խմորին ձողիկների ձետալ ձեռքով: Մէջը պէտք է լցնել առաջուց պատրաստած կրեմ, որ պատրաստում է հետեւալ կերպով:

220. ԿՐԵՄ ԶՈՂԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ. Մի ամանի մէջ հարի 1 ձու և 3 ճուի գեղնուց  $\frac{1}{2}$  զրվ. շաքարի հետ: Հետոլ խառնել 20 մըս-խալ ալիւր, ածել վրան  $2\frac{1}{2}$  բաժակ եփտուած կաթ և դնել թոյլ կրակի վրայ ու շարունակ խառնել, աշխատելով որ ամանին չկպչի, բայց չպէտք է եփտ տալ: Երբ թանձրանայ՝ կրակից վերցնել և սառցնել: 1 բաժակ սերը պէտք է սառուցի վրայ լաւ հարել և խառնել կրեմի հետ:

#### 4 ՊՑՈՒՂՆԵՐ:

221. ԹԱՐՄ ՎԱՅՐԻ ԵՒ ՊԱՐՏՔՁԻ ԵԼԱԿ, ՄՈՐ (մալինա) ԿԱԹՈՎ, ՈՒ ՇԱՔՍՐՈՎ,

222. ԽՈՐՈՎԱՆ ԽՆՉՈՐ ՇԱԲԱԲՈՎ, ՈՒԿԱԹՈՎ, ԽՆՃՈՐԸ Խորովելիս՝ միշտ պէտք է թաւի մէջ քիչ զուր ածել: Խոկ աւելի լաւ է, որ միջուկը հանէք, շաքար ածէք մէջը և զուր շաղ տաք վրէն:

223. ԴԱՐՁԵՍԼ ԽՆՉՈՐԻ ԿԱՐԿԱՆԴԱԿ (Apfelstrudel): Վերցրու  $\frac{1}{4}$  գրվանքար ալիւր, մի ձու, կարագ և տաք զուր. շաղախիր և մի ժամ թող մինչեւ որ խմորը գայ կամ դառնայ ձգական: Խմորը բաց արա, վրէն քսիր կարագ, կտրտած խնճորը դարսիր նորա վերայ, խմորը կողքերից ծածկելով՝ ոլորիր և դիր վտարանում՝ որ թիսուի:

224. ԽՆՉՈՐՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ ՈՒՐԻՇ ԿԵՐՊ, (Gebakene Apfel): Քիչ ալիւրից, 3 ձուից, 2 զգալ սպիտակ գինուց, քիչ կաթից խմոր շինիր կաթսայի մէջ: Թթու մեծ խնճորը տափակ կտրտիր, թաթախիր խմորի մէջ և դարսիր թաւայի վերայ տաք խղի մէջ ու եփիր. հանելիս վրէն շաքար ածա:

225. ԶՄԵՐՈՒԿ ԿԱՄ ՍԵԽ.

226. ՊՏՈՒՂՆԵՐԻ ՍԵՆԴԱՐԱՐ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ (բացի ընկոյզից ու շաղանակից) աննըշան է և գորա պիտանի են միայն իրանց մէջ շաքար պարունակելու պատճառով: Նոցա գլխաւոր նշանակութիւնը կայանում է նորանում, որ ծառայում են իրեն ճաշակաւոր նիւթ: Իրանց մի-

Չի թթուների, ցանցամաշկերի և շաքարի չնորհիւ պտուղները թեթև լուծողական ազդեցութիւն ունին: Միմիայն զօդնուը կապող յատկավթիւն ունի:

Պտուղներից առանձնապէս օգտակար են մարդուս՝ խնճորը, որովհետև մէջը երկաթ ու լուսածին կայ, և խաղողը, որ հարուստ է շաքարով, թթուներով և ջրով: Խաղողի մեծ քանակութեամբ գործածելը դիւրացնում է մարմնի մէջ նիւթերի փոխանակութիւնը, օգնում է աղիքների մաքրուելուն և մէղի արտադրութեան: Միջի մեծ քանակութեամբ շաքարն էլ մասնաւոր ոննդարար նշանակութիւն ունի:

Պտուղներին են պատկանում նաև ընկոյզ, կաղին, նուշն ու քաղցր շաղանակը: Նորա խիստ շատ մննդարար նիւթեր են պարունակում և պտուղների մէջ այն տեղն են բռնում, ինչ որ ընդեղէնը բանջարների մէջ: Ընկոյզն ու նուշը հալուստ են սպիտով և ճարպով, բայց աւելի պակաս դիւրամարս են, խիստ շատ ճարպ ունենալու համար և շուտ են կշտացնում: Սակայն նշէ կաթը, որ ստացւում է մի լիտր ջուրը 40 քաղցր և 2 գառն մաքուր ծեծած նշերի հետ խառնելուց, մի շատ ախորժահամ ու մննդարար խմիչք է: Ճագանակը շատ մննդար է, որովհետև  $73^{\circ}/_0$  ածուխ (օոլա) և  $11^{\circ}/_0$

սպիտ է պարունակում, բայց հեշտութեամբ  
մարսում է վշրուած դրութեամբ:

Պտուղներից հում կարելի է ուտել միայն  
խաղողն ու ալուբալին (այն էլ առանց կճեպի  
ու կորիզների) մորին, արքայամորին: Մնա-  
ցեալ բոլոր պտուղները ևիած աւելի դիւրա-  
մարս են, որպէս կօմպօտ, քանի թէ հում:

## Ե ՄԱՍԱՀ.

227. ԿՈՒԼԻՉ ՃԻԼՈՎ. Երեկոյեանից վերց-  
րու 2 բաժակ խիստ սառը ջուր, 3 մսխալ  
չոր թթխմոր  $\frac{1}{2}$  գրվ. իւղ՝ քրեղանի մէջ  $\frac{1}{2}$   
բաժակ շաքարով լաւ սպիտակացրած, 20  
հատիկ ծեծած հիլ, 1 ձու, մի զգալ աղ և 2  
զրվանքի չափ ալիւր, խառնիր և իսկոյն հուն-  
ցիր ինչքան կարելի է լաւ խմոր, դիր սեղանի  
վերայ և ծածկիր անձեռոցով: Երբ բարձրանայ,  
դարձեալ լաւ հունցիր, կարելի է մի խնձորա-  
չափ կտրել խմորից, մնացեալից հացագունտ  
չինիր, դիր մէջը իւզով օծած թաւի վերայ.  
վրայից՝ կտրած խմորից երկու կտոր դիր խա-  
շածի, վրէն կիսած նշեր դիր, թող բարձրա-  
նայ, յետոյ վերեից ջրի մէջ հարած դեղնուց

քսիր, վշրած սուխարի ցանիր և  $\frac{3}{4}$  ժամի չափ  
թխիր հնոցի մէջ: Խմանալու համար թխուած  
է թէ չէ՝ պէտք է մէջը վայտիկ ցցել և հա-  
նել, եթէ մաքուրէ ու շոր՝ կնշանակի որ կու-  
լիչը պատրաստ է: Երբ հնոցից հանէք՝ պէտք  
է կողըից դնէք մազի վերայ ու գլորէք որ ա-  
մեն կողմից հաւասար հովանայ: Կարելի է մէջը  
մանր կարտած ծուկատ և չամիչ խառնել:

228. ՀԱՍՏԱՐՈՎ ԶԱՏԿԱՀԱՅ. Միջակ մեծու-  
թեան կապալպարի համար վերցրու 7—8 գրվ.  
Ժարմ խաճոյ (творогъ). մի օր ու գիշեր  
ճեցցի տակ դիր, յետոյ արորելով քամիչի մէջ  
անցկացրու, աւելացրու մէջը <sup>1</sup> բաժակ բալո-  
րովին թարմ թթուասեր, <sup>1/2</sup> գրվ. ամենաթարմ  
կարագ, 2 թէյի գգալ աղ, <sup>1/2</sup> բաժակ և մին-  
չե անգամ աւելի շաքար, նայելով համին, բո-  
լորը միասին շաղախիր ինչքան հնար է լաւ,  
որ գունդեր չըմնան մէջը, ածա վայտի կա-  
պալպարի մէջ, որիներսից ծածկած պիտի լինի  
մաքուր բարակ անձեռնոց, երեսին տախտակ  
ծածկիր և մի ծանր քար էլ վրէն: Մի օր ու գի-  
շերից յետոյ զգուշութեամբ հանիր սկուտղի  
վերայ:

Ճատերը մէջը քիշմիշ են խառնում և դըր-  
սից զարգարում: Հոտի համար կարելի է լի-  
մոնի կամ ապելսինի շոր կճեպի աւելացնել: Սա-

որ տեղ պէտք է պահել, որովհետի 3—5 օրից  
յետոյ սկսում է փշանալ:

229. ԸՆՏԻՐ ԶԱՏԿԱՀԱՅ. Մի մեծ տակա-  
ռի կամ պղնձի մէջ 60 ձու կոտրիը, 6 գրվ.  
էլ շաքար արա և թթակով լաւ խառնիր: Յետոյ  
աւելցրու զրէն 15 բաժակ գոլ կաթ և լաւ  
խառնիր. այնուհետի մէջը 20 գրվ. լաւ մա-  
զած ալիւր արա ու խմոր հունցիր: Հունցելիս  
արա մի ծեծած վանիլ, լիմոնի կաթիլ, բա-  
րակ աղած աղ, 20 կոպէկի էլ թրջած զաֆրան:

Մի մեծ ամանի մէջ 2 բաժակ ջուր ածա  
և մէջը խառնիր  $\frac{3}{4}$  գրվ. թթխմոր, ալիւրով  
շաղախիր և դիր տաք տեղ, որ բարձրանալ:

Մի ուրիշ ամանի մէջ ածա 6 բաժակ  
եռցրած կաթ, 2 բաժակ էլ ալիւր և շաղա-  
խիր ու դիր որ քիչ սառչի: Յետոյ թթխմորը  
ածա սորա մէջ, խառնիր և երբ բարձրա-  
նայ՝ խառնիր մեծ տակառի խմորի մէջ և  
հունցիր այսպէս. վերցրու 4 գրվ. գոլ իւղ կամ  
կարագ. ձեռքդ մէջը թաթախիր և խմորը հուն-  
ցիր և այսպէս շարունակէ  $1\frac{1}{2}$  ժամ հունցել,  
մինչեւ որ բոլոր իւղը հատնի: Խմորի մէջ նուշ  
և քիչմիշ խառնիր, ծածկիր խմորը և տաք տեղ  
դիր. երբ բարձրանայ, այնպէս որ տակառը  
լցուի, կաղապարների ներսից իւղ քաելով՝ ա-  
մին մէկի մէջ 5 կամ 6 գրվ. խմոր զունտ գունտ

անելով՝ լցրու մէջը, մաքուր ծածկիր և թող  
որ գարձեալ բարձրանայ: Յետոյ դիր հնոցի  
մէջ, ուր 1 ժամ թող, թխուելիս կաղապարի  
մէջ կիսատ տեղն էլ կրարձրանայ: Թխուելիս  
շուտ շուտ նայիր, որ շայրուի: Հանելուց յետոյ  
տաք տեղ գլորիր, որ հաւասար կերպով սառչի:

230. ԿԱՅՆԱՀՈՒՆՅ (հազուք). 1 բաժակ  
դրոժը և 1 բաժակ գոլ կաթ խառնել մի քիչ  
ալիւրի հետ. այնպէս որ զանգուածը քիչ  
թանձրանայ յետոյ ծածկել շորով և դնել տաք  
տեղ մինչև բարձրանայ: Եյնուհետի 20 ձուի  
գեղնուցը խառնել  $1\frac{1}{2}$ —2 գրվ. շաքարի հետ  
մինչև սպիտակելը: Երբ խմորը բարձրանալ,  
վերցնել 1 թէյի զդալ աղ, 1 ըմպանակ բոմ  
կամ կոնեակ, 1 վանիլ, 5 կոպ. հիլ, 20 կա-  
թիլ լիմոնի հիւթ, սպիտակացրած ձուի դեղ-  
նուցը, 20 ձուի սպիտակուցը փրփրացրած,  
1 բաժակ տաք իւղ, 3 բաժակ տաք կաթ,  
ալիւր և բոլորը միասին հունցել. 30—40 ըս-  
պէ հունցելուց յետոյ պէտք է խմորը ծածկել  
մաքուր շարով և տաք տեղ դնել մինչև բարձ-  
րանալը: Երբ որ խմորը լաւ բարձրանայ,  
զունգեր շինեցէք, բարակացըէք ձեռքով մէկ  
մատի հաստութեամբ, երկսին ձու բսեցէք և  
դրէք տաք հնոցի մէջ: Սորա համար հարկա-  
ւոր է 10 գրվ. ալիւր, 1 բաժակ իւղ, 4 բա-

Ժակ կաթ, 20 ձու,  $1\frac{1}{2}$ —2 գրմ. շաքար, 1 բաժակ կամ 5 կոպէկի դրոժ հայլն:

231. ԳԱՅԹԱ. Գաթայի խմորը պատրաստում է կաթնառուցի խմորի պէս. միջուկը պատրաստում է հետեւալ կերպով. 1 դրկ. տաք իւզը պէտք է լաւ խառնել, յետոյ տերյացնել մէջը 1 գրմ. շաքար և այնքան ալիւր մինչեւ որ խառնուրդը սկսի փշրուել: Այնուհետև պատրաստ խմորից զնդիկներ շինել, ամեն 1 գունդը գրդնակով բաց անել, վրան իւզ քսել, այդ խմորի ծայրերը ծալել, դարձեալ իւզ քսել, կրկին բաց անել և վրան միջուկը ածել, ծայրերը միացնել, խմորին հացի ձեւ տալ, երեսին իւզ քսել և թխել հնացի մէջ:

Գաթային կարելի է և այսպիսի ձեւ տալ. խմորի գունդը գրդնակով բարակ բաց անել, վրան միջուկը ածել, գորա վրայ ծածկել մի ուրիշ բացարած խմորը և վրէն դարձեալ ածել միջուկը և այսպէս շարունակել 3 անգամ. այնուհետև փաթթել, ոլորել ու հացի ձեւ տալ և թխել հնացում:

232. ԿԵԿ. Կէկի համար հարկաւոր է  $\frac{1}{2}$  գրմ. շաքար, կարագ  $\frac{1}{2}$  գրմ. ալիւր 6 լոտ, կօրինկա 5 լոտ, չամիչ 5 կոպէկի, ծուկատ 10 կոպէկի, ոռմ 1 ըմպանակ, ձու 7 հատ, լիմոնի իւզ, աղ և 6 լոտ բրնձի ալիւր: Տաք

ալինձէ ամանի մէջ կարագը այնքան հարել մինչեւ որ փրփրալից դառնայ. յետոյ աւելացնել գոլ ջրի մէջ տաքացրած ձուերի դեղնուցները և լաւ խառնել. այնուհետև աւելացնել շաքարը և դարձեալ լաւ խառնել. շամիչը և կօրինկան լաւ լուանալ, շորով ցամաքացնել և կրտս սծ ծուկատի հետ միասին ածել ոօմի մէջ մի քիչ ժամանակ. յետոյ հանել այդտեղից և ածել զանգուածի մէջ: Երկու տեսակ ալիւրն էլ մազել, սպիտակուցները լաւ փրփրացնել և ալիւրի հետ միասին կամաց կամաց ածել խառնուրդի մէջ ու լաւ խառնել: Կէկի փորման ծածկել իւզ քսած մաքուր թղթով և ածել մէջը պատրաստ խառնուրդը, այնպէս որ կողքեզրին չկպչեն. յետոյ գնել տաք հնացի մէջ և թխել: Երբ երեսը կարմրի, ծածկել թղթով և շարունակել թխելը: Պատրաստ կէկը պէտք է քամիչը կամ մազի վրայ դնել և այնպէս սառցնել:

233. ՆԵՐԿԱԾ ԶՈՒ. Զուն ներկում են զանագան եղանակով:

ա. Զուն պէտք է մաքուր լուանալ, շորացրել, եփել և սառցնել. յետոյ փաթթել գունաւոր թղթուրի մէջ, որտեղ 10-ը 5 կոպէկով ծախուում է ամեն տեղ և հրահանգն էլ տպած է վրէն:

բ. Ծախում են մի տէսակ կարմիր հեղուկը շիշը 10 կոսէկով։ Մի բաժակ ջրի մէջ լցրու դորա քառորդ մասը Չուն եփիր, տաք տաք հանիր պղնձից, իսկոյն մաքրիր ու ձգիր այդ հեղուկի մէջ ու հանելով դիր ափսէի վերայ ինչքան հեղուկ գոյնից աւելացնէք՝ այնքան մոյզ դոյն կտտանան ձուաները։

գ. Վաճառում են ամեն տեղ ներկի փոշի ամեն գոյնի. 2 գգալ սառը ջրում պէտք է լուծ ծել արդ մի պարկ փոշին, վրէն աւելցնել մի շի շափ տաք ջուր. առաջուց եփած ու մաքրած ձուաները քիչ քիչ դարսելով՝ մէջը 2—3 րոպէ թողէք ու հանեցէք։

Թէցի ԵՒ ՍՈՒՐՃԻ ՊԱՔՍԻՄԱՑՆԵՐ։

234. ՊԱՍՈՒԱՅ ԲՈՒԼԿԻ, Պատրաստել № 195-ի խմոր, բուլկի պատրաստել և թխել։

235. ԾԱԼԾԱԼ, ՔԱՂՅՐ ՊԻՐՈԳ. (Պատրայ կամ ուտիսուայ): Վերցրու 6 ձու, կոտրտիր փայտէ ամանի մէջ, ածա վրէն 3 բաժակ քաղցըր չուր, այսինքն հետը  $\frac{1}{2}$  բաժակ ջարպած շաքար, 1 ըմպանակ (քյոմքա) օղի,  $\frac{1}{2}$  թէյի զդալ աղ, այս բոլորը լաւ խառնիր, հետը քիչ քիչ խառնիր  $\frac{4}{2}$  զրվ. մաղած ալիւր, հարիւրինչքան կարելի է լաւ, միեշն խմորն սկսուել հարիչին շկալել։

Յետոյ սեղանի վերայ ալիւր ցանելով խըմորը շուռ տուր վրէն, 60 մասն արա, նոցանից հացիկներ շինիր. յետոյ ամեն մէկ հացիկը դրտնակով բաց արա, ալիւր ցանելով, շայլ տակի շափ, այս բաց արած խմորները դարսիր մէկու վերայ, մէջերը բաւական ալիւր շալ տալով, որ մէկ մէկու չկպչեն։ — Մի մեծ կլոր սկուտպի վերայ իւղ քսիր, վերցրու մի կտոր խմորը, ձեռքի մէջ աւելի բաց արա, դիր սկուտպի վերայ, ծայրերը կպցրու, վրէն իւղ քսիր, նորա վերայ դիր միւս խմորը, իւղ քսիր. ևայն։

Եւ այսպէս մէկմէկու վերալ դարսիր 25 հատ, քսանհինդերողի վերայ քաղցրաւենի ածա 1 զրվ. կամ պակաս, տռանց աւելորդ հիւթի, վերջին խմորի ծայրերը վերել ամրացրու, այնպէս որ քաղցրաւենին շթափուի, և յետոյ այս քաղցրաւենու վերայ դիր էլի 35 հատրաց արած խմոր, ամեն մէկին իւղ քսելով ե ձգելով սկուտպի մինչև ափերը։

Սկուտպի ափերից աւելորդ խմորները կը տրտիր, իւղ քսիր, դիր քիչ տաք հնոցի մէջ կէս ժամի շափ, որ թխուի։ Ճաշի բերելիս կարելի է սուր գանակով ծայրերն ուղղել և շաքար ածել վրէն։ Այս պիրովը կարելի է երեկոյին պատրաստել, զնել սառը տեղ և միւս օրը թխել։

Այս պիրոզի վերայ գործ է գրւում 5 գրվ.  
ալիւր, 6 ձու,  $\frac{2}{3}$  թէյի գդալ աղ,  $\frac{1}{3}$  գրվ.  
շաքար, 1 ըմպանակ օղի,  $1\frac{1}{2}$  բաժակ քաղց-  
րաւենի, Պատուայ հոմար ձուի փոխարէն ջուր  
են անում:

236. ԲԻՍԿՎԻՏԻ ՊԻՐՈԳ. ԼԻՄՈՆՈՎ. 5 ձուի  
ղեղնուցը 1 բաժակ շաքարի մէջ պէտք է հա-  
րել մինչև սպիտակելլ, վրէն ածել  $1\frac{1}{2}$  լիմոնի  
քամուքո, 4 սեղանի գդալ (ոչ շատ լիբը) գետ-  
նախնձորի ալիւր, լաւ խառնել, 2 սեղանի լիքը  
գդալ խոշոր ալիւր անել, դարձեալ խառնել,  
աւելցնել 5 հարած սպիտակուց, քիչ էլ խառ-  
նել, ածել հարթ թիթեղեայ կաղապարի մէջ,  
որի վերայ նախապէս քսում են կարագ և սու-  
խարի են ցանում: Կէս ժամի շափ գնել հնոցի  
մէջ: Մի փայտի փոքրիկ ձողով պէտք է տես-  
նել հում է թէ եփած. եթէ ձողին խմոր չէ  
կպչում, կնշանակի պատրաստ է: Հնոցից հա-  
նելով պէտք է շուռ տալ սկրտողի վերայ: Այս  
բիսկվիտը գործ են դնում թէյի կամ սուրճի  
հետ կաթով կամ սերով:

237. ԽՆՁՈՐԻ ՊԻՐՈԳ. 1 ձու, 1 սեղանի  
գդալ սեր,  $\frac{1}{2}$  թէյի գդալ աղ, մի կիսատ բա-  
ժակ ալիւր ( $\frac{3}{4}$  բաժակից աւելի),  $\frac{1}{2}$  գդալ  
խղ, հունցել, խմորը չորս մասն անել, ամեն  
մէկը խիստ բարակ բաց անել մի ափոէի մե-

ՃՈՒԹԵԱՆԻ: Առաջին կտորը դիր իւղքսած թա-  
փի վերայ, որի մեծութիւնը նոյնպէս պէտք է  
ափոէի շափ լինի, վրէն իւղ քսիր, խնձորի մի  
մասը դիր վրէն առանց կճպելու, այլ միայն  
դուլը հանած, միւս խնձորիներն էլ բարակ բա-  
րակ վրէն կտրտելով (ընդամենը  $1\frac{1}{2}$  գրվ. խըն-  
ձոր)՝ շաքարով շաղ տուր ( $\frac{1}{2}$  գրվ. շաքար):  
Խնձորի վերայ դիր միւս բաց արած խմորը,  
նոյնպէս երկու կողմից իւղ քսած, որի վերայ  
ընդամենը  $\frac{1}{4}$  գրվ. իւղ կերթայ:

Այսպէս պէտք է անել և բոլոր խմորի  
կտորները, վերինին նոյնպէս քսել գոլ իւղ:  
դիր շատ տաք հնոցում: Հէնց որ հիւթը ծո-  
րէ, շուտ շուտ լցրու պիրոզի վրայից: Պիրո-  
զը պէտք է թողնել հնոցում այնքան, մինչև  
որ հիւթը եփուելով շաքար դառնայ:

238. ԿՇԵ ՊԱՔՍԻՄԱՏ. Վերցրու  $1\frac{1}{2}$  գրվ.  
քաղցր նուշ, աւելցրու 10 հատ դառը նուշ և  
կճպիր եռցրած ջրի մէջ ու պլիտի վերայ քիչ  
չորացրու: Յետու աւելցնելով 5 կոպէկի վար-  
դաջուր՝ մանր ծեծիր: Վերցրու 2 ձուի սպի-  
տակուց,  $\frac{1}{2}$  գրվ. շաքարաւագ, բոլորը միա-  
սին խառնիր մի ամանի մէջ: 3 ձուի սպիտա-  
կուց փրփրացրու և խառնիր հետը. եթէ շատ  
ջրալի լինի՝ հետը ալիւր խառնիր: Թաւի վե-  
րայ ձէթ քսիր, ալիւր ցանիր և շինած խմո-

րից կտոր կտոր դիր վրէն, իսկ վերեխց ածաք կտրտած նուշ և դիր հնոցի մէջ 15 րոպէլք չափ՝ եթէ տաք է հնոցը, իսկ եթէ չատ տաք չէ՝ 20 րոպէի չափ։ Վերցնելիս դանակով պէտք է վերցնել։

239. ՔԱՂՅՐ ՊԻՐՈԳ.  $\frac{1}{2}$  բաժակ իւղ հարիր ձիւնի վերայ դրած խորը ամանի մէջ մինչեւ սպիտակի։ Մի ուրիշ ամանի մէջ հարիր  $\frac{1}{2}$  բաժակ, այսինքն 6 ձուի գեղնուց,  $\frac{1}{2}$  բաժակ մաղած շաքարի հետ մինչեւ սպիտակի, յետոյ լաւ խառնիր իւզով, շաղ տալով մէջը  $\frac{1}{2}$  բաժակ ամենալաւ խոշոր ալիւր և վերջապէս խառնիր նորա հետ մնացած սպիտակուցը, փրփրացնելուց յետոյ. զգուշութեամբ խառնիր վերեխց ներքի, ածաք թղթէ կամ թիթեղեայ կաղապարի մէջ, որ վաղօրօք պէտք է իւզով օծել ու սուխարի ցանել. դիր հնոցը, կէս ժամփ չափ։ Երբ պատրաստ լինի՝ հանիր ոկուտ պի վերայ։

240. ԶԱՆԴԿՈՒԹԻՒՆ.  $\frac{1}{4}$  դրվ. կարագ խոռը ամանի մէջ պէտք է հարել մինչեւ սպիտակելը, մէջը  $\frac{1}{2}$  բաժակ շաքար լցրու, հարիր, աւելցրու 1 ձու, խառնիր, լցրու  $\frac{1}{2}$  դրվ. խոշոր տլիւր, չամփ համար 3—4 կաթիլ լիմոնի իւղ արա, լաւ հոնցիր, որ պինդ զանդուած դառնայ։ Այս խմարը մանիր կտրտիր, իւրաքան-

շիւր գունդը տափակացրու, դարսիր երկաթէ տախտակի վերայ առաջուց ցանելով վրէն ալիւր, վրէն մանր կտրտած  $\frac{1}{4}$  բաժակ քաղցր նուշ արա, դիր ցուրտ տեղ կամ սառցով ամանի մէջ, յետոյ իսկոյն դիր տաք հնոցում 10—15 րոպէ։ Երբ բիշ կարմրի՝ իսկոյն զգութեամբ հանիր դանակով։

## Զ. ՄԱՍՆ

### Պ Ա Ճ Ա Ր Ե Ղ Է Ն

241. ՔԱՂՅՐ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԻ ՀԱՐԱՐ ՊԱՀԵՍՏԻ ՆԻՒԹԵՐ. Պէտք է տանը ունենալ հիլ, դարչին, լիմոնի և նարնջի չոր կճեղ, դառը նուշ, քաղցր նուշը չորացրած, բոված և աղած, զափոան, վարդի իւղ, լիմոնի իւղ։

242. ՀԱՄԵՎ ՆԻՒԹԵՐ ՍՈՍԻՍԻ ՀԱՄԱՐ. Զաւզ (մաշկատնայ օքքչ) և այրած շաքար։

243. ՀԱՄԵՄՆԵՐ ԵՒ ԽՈՏԵՐ. Պղպեղ ու բահար, զլուխ սոխ և սխառը։

244. ԿԱՐՄԻՐ ՊՈՐԻՆՁԱՆԻ ՊԻՒՐ (ՊՈՄԱԴՈՐ). Հասածները, այսինքն կարմիր պոմադուը կըտրտիր, միջի ջուրն ու սերմերը դէն ածաք, մնացուրդը ածաք պղնձի մէջ, մի քանի անգամ

Եփ տուր առանց ջրի՝ իւր հիւթի մէջ, մաղե  
մէջ քամիր և քամուածքը, որ «պիւրէ» է կոշ-  
ւում, նորից եփիր, մինչև թանձրանայ, շա-  
րունակ խառնելով, որ չայրուի: Երբ սառչի  
լցրու շիշերի մէջ, երեսին պրովանսի ձէթ  
ածա, պինդ ծածկիր և չոր ու սառը տեղ պա-  
հիր: 4 հոգու համար արգանակի մէջ պէտք է  
անել մի փայտէ լիքը գգալ: Կարելի է և իւր  
ջրով ու սերմերով եփել:

245. ԿԱՐՄԻՐ ՊՈՐԻՆՁԱՆ ԶՈՐՍՅՐԱԾ. Հա-  
սածները մէջերից կէս արա, վրէն աղ արա,  
փոխիր արեսի տակ որ լաւ չորանայ: Դործ գնե-  
լիս վեցրու մի փորք ափսէի չափ, 3 ժամ  
թրջիր, ջուրը մի երկու անգամ փոխելով. ե-  
փիր, քամիր և քամուքսը արա արգանակի մէջ:

246. ԱԼ. ԴՐԱՋ ՎԱՐՈՒՆԳ. Ամառը՝ քաղելուց  
յետոյ վարունգն իսկոյն պէտք է աղաջրի մէջ  
դարսել: Եշունքին վարունգն հանում են աղա-  
ջրից, մի երկու օր ածում են պարզ ջրի մէջ,  
որ աղը գուրս գայ և նորից դարսելով ամանի  
մէջ՝ վրէն ածում են կամ միայն քացախ և  
կամ նեխուրի եփած ջուրն ու քացախ:

247. ԹԹՈՒ ՎԱՐՈՒՆԳ. Փոքրիկ տակառի  
մէջ պէտք է ածել մայրի, ալուրալի ծառի և  
հաղարճի տերեներ, սամիթ և սխտոր, վրէն  
մէկ շարք դարսում են նոր քաղած վարունգ

ուղղահայեաց գրութեամբ, վրէն դարձեալ յի-  
շեալ կանաչեղինը, դարձեալ վարունգ մինչև  
տակառը կըցուի: Իսկոյն տակառը ծածկելու  
է 2 փոքր ծակ ունեցող խուփով, որոնցից մէ-  
կից պէտք է օղը գուրս գայ, միսի մէջ պէտք  
է գնել ձագառը և աղաջուր ածել, որ այսպէս  
է պատրաստում. 2<sup>1</sup>/<sub>2</sub> դոյլ (վեգիօ) գետի  
ջրի մէջ խառնում են 6 բաժակ աղ և 1 գգալ  
բորակ (սելուր), յետոյ բերանը պէտք է խցել:

248. ՄԱՆԱՆԵԽ. 3 գգալ չոր մանանե-  
խին 1 գգալ շաքարաւաղ պէտք է անել և 1  
թէյի գգալ աղ, շաղախել սառը քացախով, մի  
կողմից տրորել, ինչքան շատ՝ այնքան լաւ:

249. ՊՏՂ-ՕՂԻ (հալիվկա): Ալուրալին, հա-  
ղարճը, մորին միասին կամ իւրաքանչիւրն ա-  
ռանձին ածա մեծ շշի մէջ, մինչև բերանը լրց-  
րու մի շշաչափ մաքրած օղի, բերանը շորով  
ծածկիր, կապիր. դիր լուսամուտում մի ամբողջ  
ամիս, և ամեն օր զգուշութեամբ շիշը շարժիր:  
Յետոյ այս օղին քամիր մի քանի ծալ մաքուր  
շորի մէջ, և ածա շիշերի մէջ: Ամեն մի շշի  
համար վեցրու 1/4 շիշ ջուր և ով կուզի 1/4  
կամ 1/2 գրվ. կոտրտած շաքար, եռցրու, զգու-  
շութեամբ լցրու այս օշարակի մէջ բոլոր նախ-  
կին լցրած շիշերը, մի անգամ եփ տուր, լըց-  
րու քարէ ամանների մէջ, սառցրու, ածա շի-

շերի մէջ, բերանները փակիր և կալրիր: Մնացորդ պտուղների վերայ դարձեալ նոյնքան օդի լցրու, Յ ամիս թող այնպէս, և նոյն ձեռվ շաքարով պատրաստիր: Խոկ պտուղների վրայ էլ ձագառով եռցրած ջուր լցրու զգուշութեամբ հինց շշի մէջտեղը, որ շիշը չճարի, Յ ամիս այսպէս պահիր, ու նոյն ձեռվ վարուիր և սոցա հետ:

250. ՍՈՒՐՃ. Մի զրվ. սուրճի հետ խառնում են  $\frac{1}{4}$ —մինչև 1 զրվ. ցիկօրիա: Աւելի լաւ է սուրճը՝ ծածկած բովիչի, քան թաւի մէջ բովիել, և պէտք է շարունակ շարժել: Երբ սուրճը մոյդ-շագանակի գոյն ստանայ և թեփ ոկսի զուրս տալ, կնշանակի պատրաստ է. պէտք է զգոյշ լինել որ շայրուի: Ինչքան բարակ աղաք այնքան լաւ է: Ցիկօրին առանձին պէտք է բովիել և խառնել սուրճի հետ և նորան էլ նոյնպէս պէտք է աղալ: Մի գաւաթ՝ սուրճի համար վերցնում են մի թէլի գդալ աղած խառնուրդ: Սուրճը կախում են սրճամանում բրդէ պարկի մէջ և վրէն լցնում եռցրած ջուր ու դնում պլիտի վերայ: Երբ եռ գայ՝ պէտք է յետ դնել և մի գդալ սառը ջուր ածել վրէն: Երբ սուրճը քիչ նստի՝ նորից պէտք է պլիտի վերայ դնել, երբ եռ գայ՝ նորից յետ դնել և մի գդալ սառը ջուր լցնել: Էլի եռցնել, յետ

դնել, որ նստի և պատրաստ է: Սուրճի հետ զործ է գրւում կաթ ու սեր:

251. ԱՐԵՒԱԾԱՂԿՈՎ. ՍՈՒՐՃ. Սուրճը շատ աւելի համեղ է լինում, եթէ մի գըվանքա սուրճի հետ խառնեն 1 կամ  $\frac{1}{2}$  գրվ. արեւա ծաղկի բոված սերմը:

252. ԳԱՐԵ ՍՈՒՐՃ. Պէտք է վերցնել սպիտակ և անպոչ գարին, որ կլոր է լինում, բովիել ինչպէս սուրճը, աղալ և եփել սուրճ պատրաստելու եղանակով:

253. ԽՈԶԿԱՂԻՆԵ ՍՈՒՐՃ. Չատ հասած երկարաւուն խոզկաղինը ժողովելով (զոքա կը լորից աւելի լաւ են) զանակով մաքրում են կանաչ կճեպներից, կիսում են երկարութեան վերայ և ամեն մի կէսն էլ երկու մասն անում: Նոյն երեկոյին ածում են եռցրած ջրում, Միւս առաւօտ ջուրը դէն են ածում և թոյլ հնոցի մէջ չորացնում: Պահում են պարկերի մէջ չոր տեղ, յետոյ բովում են ինչպէս սուրճ, այնպէս որ ոչ բոլորովին բաց լինի և ոչ էլ այրուի: Որովհետեւ խոզկաղինը շուտ չէ բովում, ուստի և պէտք է կստրելով մի քանիսը՝ տեսնել բոված է թէ չէ: Սառցնել, աղալ և եփել ինչպէս սովորաբար եփում են սուրճը:

254. ԱԼՈՒԲԱԼԵ ԽԹԻՉՔ. Ալուբալին մաքրիր, լուա, ածա միծ շիշի մէջ, մի երես ա-

լուրալի, մի երես շաբարաւազ և այսպէս մինչեւ  
շի կէսից աւելի: Բերանին չիքիլա կատելով  
մի ամիս դիր պանի տակ. յետոյ հիւթը մա-  
քուր քամիր և կստանաք մի պատուական խմիչք:

255. ՀԱՂԱՐՁԻ, ՄՈՐՈՒ ԵՒ ԵԼԱԿԻ ՔԱՂՅ-  
ՐԱԽԵՆԻ. Այս պտուղներից քաղցրաւենիք եփե-  
լու համար պէտք է մաքրել և ամեն մի բա-  
ժակ մաքրած պտուղի համար վերցնել 1 բա-  
ժակ կոտրտած շաքար: Զաքարի ածա պղնձէ  
լագանի մէջ և խրաքանչիւր երեք գրի. շա-  
քարի վերայ ածա  $1\frac{1}{2}$ —2 բաժակ ջուր, որ  
շաքարը ջրով կշտանայ և էլ չծծէ: Յետոյ լա-  
գանը դիր կրակի վերայ. երբ եռ դայ, պը-  
տուղներն ածա մէջը, լագանը շարժելով երեք  
անգամ հինց կրակի վերայ և ամեն անգամից  
յետոյ գդալով քափը քաշիր: Յետոյ եփիր թոյլ  
կրակի վերայ, որ պտուղները թթւութիւնը  
կորցնեն և հումի համ շունենան:

Երբ պատրաստ լինի՝ ածա արդանակի ա-  
մանի մէջ, սառցրու, լցրու ապակէ անօթների  
մէջ, բերանը թղթով և փամփուշտով ծածկիր:  
Պիրողների համար այս քաղցրաւենին սիչտք է  
խիտ լինի, այսինքն դրա օշարակը սովորա-  
կան քաղցրաւենիքի օշարակից աւելի քիչ պէտք  
է լինի:

256. ԽՆՉՈՐԻ ՊԻՒՐԻ. Խնձողները մաքրիր,

խորովիր և տաք տաք քերելով քամիր մաղի  
կամ քամիչի մէջ: 2 բաժակ այդպէս ստա-  
ցուած. խնձողներին պէտք է անել  $\frac{1}{2}$ —1 բա-  
ժակ շաբարաւազ կամ սպիտակ մեղք, եփիր  
այնքան, մինչև որ բաւականին թանձրանայ,  
շաբունակ գդալով խառնիր, որ չալրուի: Երբ  
սառչի, նորից ածա մի արծնապակած ամանի  
մէջ ու մի քիչ ժամանակ դիր թոյլ հնոցի մէջ,  
որ քիչ երեսը թխուի, որով պահպանում է  
բորբոսնելուց: Այս տեսակ քաղցրաւենին գործ  
է զրում պիրողների, բլինի և ալաղիալի հա-  
մար:

257. ԱԼՈՒԲԱԼԻ ՊԻՒՐԻ. Մի հողի աման  
լցրու հասած ալուբալով, շորով բերանը ծած-  
կիր, վրէն խմօր քսիր և հացերը հանելուց յե-  
տոյ դիր հնոցի կամ փռան մէջ: Միւս օրը հա-  
նիր, շուռ տուր խախալի վերայ, որ հիւթը  
դուրս ծորէ, յետոյ տրորիր պտուղները: Տըո-  
րած պիւրէն շափելով՝ խրաքանչիւր 2 բաժա-  
կին 1 բաժակ շաբարաւազ արա. համի հա-  
մար կարելի է միքանի ալուբալու աղած կո-  
րիղներ աւելցնել (3—6 կորիզ ամեն մի բաժա-  
կի համար), եփիր, մինչև որ թանձրանայ, սառ-  
ցրու, ածա հողէ ամանի մէջ, դիր հնոցի մէջ,  
հացերը հանելուց յետոյ, մի փոքր ժամանակ,

այնքան որ երեսը թխուի: Թղթի մէջ փաթթիլ  
և սառը տեղ պահիր: Սա գործ է դրւում պի-  
րովների, բլինների և ալագիայի միջուկի համար:

**258.** ԶՈՐԱՅՐԱԾ ՄՈՒ (մալինա): *Ժողովիր,*  
ածա տապակի վերայ, դիր ոչ շատ տաք հնո-  
ցում, որ չորանայ: Եթէ հարկ լինի՝ կրկնիր  
այս մի քանի անգամ: Դորան գործ են դնում  
քաղցրաւենիք շինելու, խմում են իբրև քրտ-  
նաբեր դեղ, եալին:

259. ԼԻՄՈՆԻ ԿՃԵՊ. ԹԵՂի համար լիմոնը  
կտրտելուց առաջ՝ սուր մաքուր դանակով կը-  
տրտիր վրայի գեղին կաշին շատ բարակ շեր-  
տով, առանց սպիտակ մասերի, չորացրու լու-  
սամուտում, տաք սենեկի մէջ և չոր տեղ պա-  
հիր։ Դորա աղածը գործածական է կուլիչի,  
քաղցր բուլկու ու պաքսիմատի համար, իսկ  
կտոր կտոր գցում են կօմպօտի մէջ։

զգածական չին Խորհ և զգածական ուսու-  
-ութ է զախ Խոյակար լաճառ և Խոյակա-  
-րակի վետապու Ան չի դի ոք զա մասսակ  
- պայտան բաց Ճանակակար Խոյակար զա  
- համ ու ըստ մար պայտան մասսակար Խոյա-  
- կար մայո Եմ Եմ Եմ Եմ Եմ Եմ Եմ

Ե. ՄԱՍՔ

Մի ՔԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼ ԻՉ

**260.** ԱՐԴԱՆԱԿ ԵՓԵԼՈՒ ԿԱԹՍԱ. Ոչ մի  
տեսակ արգանակ շպէտք է եփել պղնձէ ամա-  
նի մէջ, որովհետև շատ վնասակար է առող-  
ջութեան համար, այլ անշուշտ չուգումէ արծ-  
նապակած կաթսայի մէջ, որ միշտ պէտք է մա-  
քուր լուանար: Տապակել, գետնախնձոր եփելն  
ի այն, նոյնպէս պէտք է այդ տեսակ տարբեր  
մեծութեան ամանների մէջ լինի:

261. ԶՈՒԳՈՒՆԵԼ ԿԱԹՍԱՆԵՐԻ ՄԱՔՐԵԼՀ,  
Եթէ դոքա սեանան, զնիր 5 կոսէկի բլորի  
կիր, ցանիր չուգունի մէջ, լցրու ջրով, ևոցըու,  
մինչև որ չուգունը սպիտակի. յետոյ յետ դիր,  
ջուրը սառցըու և լցրու շիշերի մէջ ապագայ  
գրգծածութեան համար, իսկ կաթսան մաքալ  
ջրով մի քանի անգամ լոււ:

### 262. ՓԱՅՏԵ ԱՄԱՆՆԵՐԻ ՄԱՔՐԵԼԸ, ԿԵՂ-

տոտ տակառներն ու փայտէ ուրիշ ամանները  
մաքրում են հետեւալ եղանակով. պէտք է բա-  
լորովին նոր կիր ջրի մէջ ածել, նորանից թան-  
ձըր զանգուած պատրաստել, քսել տակառի  
ներսի պատերին, դուրսը դնել, բայց ոչ անձ-  
րեի ու խոնաւութեան տակ։ Մի քանի օրից  
յետոյ կիրը լուա. քերելով մաքրիր, աւազով  
լուա, լաւ ողողիր, դարձեալ տաք ջրով լուա,  
մի դոյլին Յ դդալ անուշագրի սպիրոտ խառնե-  
լով և ողողիր մաքրուր ջրով։

263. ՊԱՆՉԵ ԱՄԱՆՆԵՐԻ ԵՒ ԻՆՔՆԱԵՌԻ  
ՄԱՔՐԵԼ. Առաջ պէտք է ճրակու քսել, լոկ  
յետոյ ցանել վրէն «սլուցպուլվէր» փոշին. նո-  
րանով լաւ մաքրիլ և չորացնել. Կամ գնիր 10  
կոտեկի կրօկուս կարմրագոյն փոշի (այսքանը  
մի ամքովշ տարի բաւական է). Այս կրօկուսը  
փափուկ կաշուէ (զամշ) կտորով քսիր, դորա-  
նով մաքրիր ամքող պղնձէ ամանը, նորարծա-  
թը, արծաթը, մինչև անզամ պողպատը. Մաք-  
րելուց յիսոյ՝ մաքրուր՝ յատուկ դորա համար  
պահուած սրբիչով սրբիր. Խոկ ամենից հասա-  
րակ և լաւ եղանակը՝ զետնախնձորի ջրով  
մաքրելն է. այն է՝ երբ շմաքրած զետնախն-  
ձոր լինիս եփելիս, ջուրը առանձին ամանի  
մէջ ածա, տաք տեղը ջուրը քիշ թթուացրու  
և դրանով մաքրիր պղնձէ ամանները և մինչև

անզամ արծաթը. Լաւ է նոյնպէս տաք ջրով  
մաքրելը, մի դոյլին՝ երեք դդալ անուշագրի  
սպիրոտ խառնելով.

264. ԴԱՆԱԿԻ ՈՒ ՊԱՏՄՈՒԱԲԱՂԻ ՄԱՔՐԵԼ.  
Փայլունկի (սելեդկա), ավլուտած ձկան և սոխից  
առաջացած անախորժ հոտը ոչնչանում է, եթք  
մաքրում են մոխրի և մոխրաջրի խառնուրկով։  
Թալմ փայլունկից երբէք հոտ չէ մնում դա-  
նակի վերաւ, այնպէս որ նոցա թարմութիւնը  
հինց այս եղանակով կարելի է իմանալ.

265. ՊՈՂՊԱՏԻՑ ԺԱՆԿԻ ՀԱՆԵԼՈՒ ՄԻԶՈՅ.  
Սկիպլուտարի իւղ և սպիրակ մեղքամոմ  
հաւասար չափով տաքացրու, խառնիլ և ժան-  
գոտած տեղերը սրբիր։

266. ԶՈՒԻՑ ՍԵԽԱՑԱԾ ԳԴԱՆՆԵՐԻ ՄԱՔՐԵ-  
ԼՈՒ ԶԵՒԾ. Մաքրելու է զամշով (փափուկ կա-  
շի), խիստ բարակ մոխրով, նոյնպէս և օդէ-  
խառն կաւճով։

267. ՇՈՇԵՐԻ ՄԱՔՐԵԼ. Նոցա մէջ պէտք  
է ածել շաքարի թղթի մանր կտորներ կամ մի  
բուռը գարի, կիսով չափ ջրով լցնել, բերանը  
խցել, ողողել, մինչև որ կեղալ վեր գայ. Կամ  
վերցրու մի մեծ, մաքրած հում զետնախնձոր,  
մանր կտրաիր, ածա շշի մէջ. լցրու մէջը  $\frac{1}{4}$   
շիշ քիշ քացախախառն չուր, ամեն կողմից ո-  
ղողիր, ջուրը դէն ածա և մաքրուր ջրով ողողիր։

**268.** ԽՈՀԱՆՈՅԻ ՀԱՍԱՐԱԿ ՍԼՎԱՆՆԵՐԻ  
ՄԱՔԻՆԸԼԸ. Խւրաքանչիւր անդամ կերակուրները  
վերջացնելուց յետոյ, պէտք է սեղանները լուա-  
նալ աւազով ու սապնով, իսկ յետոյ մաքուր  
լուանալ ջրով, Կամ լուանալ տաք ջրով, մի  
վեգովի մէջ Յ գդալ անուշադրի սպիրտ խառ-  
նած։

**269.** ԶԱՆՍՉԱՆ ԻՐԵՐԻ ՄԱՔՐԵԼԸ. Երեք սե-  
ղանի գդալ անուշադր խառներով մի վէգրօ-  
տաք ջրի մէջ՝ ամենալաւ հեղուկն է դռների  
ու լուսամուտների շրջանակները լուանալու  
համար, դռների մետաղիայ փակիչները, վա-  
ռարանների դռնակները, ոսկէ ու արծաթէ իրե-  
րը ու մինչև անդամ աղամանդները մաքրելու  
համար։

**270.** ԼՈ) ՍԱՄՑԻ ԱՊԱԿՈՒ ՈՒ ՀԱՅԵԼՈՒ ՄԱՔ-  
ՐԵԼԸ. Ամենից լաւ է օծել ջրի հետ թանձր  
շաղաղած կաւճի փոշիով։ Տորանալուց յետոյ  
պէտք է սրբել լրադրի շոր թղթով։

Դա ունի Յ զայլ աշխա լուս ըսոյման  
ու Յ ինչ զայ լումանյ ։ Խնդրան ցողման  
մասին Յ ունի ամենա համար համարական  
անձնանոցը ։ Անձնանոցը համար համար  
ԱՆՁՆԱՆՈՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ։

**271.** Ամեն անդամ ուտելուց յետոյ պէտք  
է ոչ միայն ամանները հաւաքել, այլ և ամբողջ  
խոհանոցը։

Խոհանոցի յատակը, ինչքան կարելի է,  
յաճախ պէտք է լուանալ։ Խոհանոցում ոչ կօ-  
շիկ պէտք է մաքրել, ոչ լուացք չորացնել։

Մաքրութիւն պիտի պահել և մառանում  
և ամեն մի փթած բան պէտք է դէն ձգել,  
որ փտութիւնը չտարածուի։

Պէտք է ջանալ մկներից ու մլակներից  
ազատուել ամեն կարելի միջոցներով։ Մկներ  
սպառել կարելի է կատուների օգնութեամբ  
(որոնք սակայն վտանգաւոր են սննդեղինի  
համար), որոզայթներով և մկնաթոյնով։

Ամանները պէտք է առանձնապէս մաքուր  
պահել։ Ամանները հարթ պիտի լինին, առանց  
որևէ զարդարանքի, փորուածքների և խոր-  
տուրարտի, որոնք միայն կեղտի բուն են։ Այս  
պէս պիտի լինին նաև պատառաքաղները, դա-  
նակներն ու գդալները։

Ուտելուց յետոյ միշտ պէտք է բոլոր ա-  
մանները մաքրել, լուանալ տաք ջրով և լաւ  
ցամաքեցնել:

Փայտի չներկած ամանեղինը էժան են,  
անվնաս, բայց առանձին մաքրութիւն են  
պահանջում: Ուտելուց յետոյ նոյն պէտք է  
խնամքով մաքրել, բայց ոչ թէ աւազով, այլ  
կոշտ վրձինով (որովհետև աւազը կերակրում  
շատ անախորժ խառնուրդ է) պէտք է լուա-  
նալ, չորացնել, և չոր ու մաքուր տեղ պահել:

Լաւ այրուած կաւէ ամաններն իս այն  
անյարմարութիւնն ունին, որ իւզը ծծուում է  
նոցա մէջ և այլ իս կերակրի համար անպէտք  
են դառնում:

Կաւէ չնաններկած ամաններն աւելի լաւ  
են կաւէ այրուած հասարակ ամաններից,  
բայց յաճախ զնաններկը պոկւում է և կերակրի  
մէջ ընկնելով՝ թունաւորումն է առաջանում  
արճինով: Այս պատճառով այդ տեսակ նոր  
ամանը, բանեցնելուց առաջ, պէտք է եռցնել  
առնուազն կէս ժամի շափ, մոխրի, աղի և  
քացախի մէջ (3 մասն աղ, 2 մասն քացախ և  
60 մաս ջուր), իսկ այնուհեան ուտելուց ա-  
ռաջ ողօղել տաք ջրով: Հասկանալի է որ այդ  
տեսակ ամանի մէջ երկար ժամանակ չէ կա-  
րելի աղի և թթու կերակուր պահել:

Սպակեղին ամանները առողջապահական  
կողմից ամենից յարմարն են. թէպէտ և նորա  
տաքանալու համար անպէտք են և հեշտ էլ  
կոտրտում են:

Պղնձէ, երկաթէ և անագէ ամանները  
եփելիս առողջութեան համար վնասակար  
նիւթեր են արտադրում. մանաւանդ պղնձէ  
ամանները: Արծաթէ ամանները աւելի յար-  
մար են սեղանի համար:

Խոհանոցի համար անփոխարինելի են ի-  
րանց ամրութեամբ և անվնասութեամբ: Եր-  
կաթէ և չուզունէ զնարակած ամանները: այդ  
տեսակները վերջին ժամանակները բոլոր տե-  
սակներից նախամեծար են համարում և շատ  
են գործածում:

մայիս՝ արդաշրջան պահանջան մշրկիւր Ա  
տղամ և ուժով Ե առ մասնաւու ընթան ըմբույք  
Ե առ  
Ուտելու վերաքերեալ ընդհանուր առողջաւ-  
պահական կանոնները: . . . Յ

**Ա. ՄԱՍԱՀ****Ն Ա Խ Ա Ճ Ա Շ**

ՈՒՏԻՍՈՒԱՅ ԵՒ ՊԱՍՈՒԱՅ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

1. Թէլ	6
2. Սուրճ	7
3. Կաթ	8
4. Կակաօ.	12
5. Շոկոլադ	
6. Զու	13
7. Խոզապուխտ և երշիկ	16
8. Խաւիար և ձկնկիթ.	—
9. Պանիր.	17
10. Կարմիր բողկ	—
11. Փալլունկ	—
12. Մսի վինէգրէտ	—
13. Պասուալ վինէգրէտ.	18
14. Նոր սունկ տապակած	—
15. Նոր սունկ խորոված	—
16. Սպիտակ լոբի կամ ֆասուլիա	19
17. Կանաչ սիսեռ (գորօք)	—
18. Խորոված շաղցամ իւղով	—
19. Խորոված գետնախնձոր իւղով	—

20. Եփած գետնախնձոր	20
21. Եփած գետնախնձոր իւղով և մաղդա- նոսով.	—
22. Եփած գետնախնձոր իւղով և ձուով	—
23. Գետնախնձոր կաթնի սոուսով	—
24. Եփած գետնախնձոր սունկի սոուսով	21
25. Գետնախնձորի պիւրէ երիշկով	—
26. Տաղակած գետնախնձոր	—
27. Եղ ու ձուով էրիշտան	—
28. Կաթնով մաննխա կրուպա	22
29. Կաղամբով պիւրով	—
30. Բրնձով ու ձուով պիւրով	23
31. Մսով, բրնձով ու ձուով պիւրով	—
32. Թարմ սունկով պիւրով	—
33. Տաղակած և խորոված ձկներ	24
34. Կատլէտ	25
35. Եղան ուղեղը խորոված	—
36. Խմորիկներ (ճանա).	—
37. Սոզապով խմորիկ	27
38. Խմորիկ միակն ալիւրից	—

**Բ. ՄԱՍԱՀ**ՏԱՅ ԵՒ ՄԱՍԱՀ, ՈՒՏԻՍՈՒԱՅ ԵՒ ՊԱՍՈՒԱՅ  
ԱՐԴԱՆԱԿՆԵՐ**ՄՄԵ ԱՐԴԱՆԱԿՆԵՐ**

39. Մսէ արգանակներ պատրաստելն առ- հասարակ	31
40. Տաւարի միս	32
41. Տաղակների մասին.	—

42. Կոնչալ իմանկալ բուլիծնը, գետնախընը .02  
ձորը, տապական ևալն պատրաստէ .12  
թէ ոչ . . . . . 33
43. Արմտիք, գետնախնձոր և կանաչի մաք-  
րելու եղանակը . . . . . 32
44. Արմտիքով և գետնախնձորով մսաջուր . . . . . 32
45. Արմտիքով, գետնախնձորով, շաղդամով  
և կաղամբով մսաջուր . . . . . 34
46. Պիրոժկով մսաջուր . . . . . 32
47. Արտասահմանեան արգանակ . . . . . 35
48. Գետնախնձորով և բրնձով կամ կրու-  
պով արգանակ . . . . . 32
49. Մակարոնով և գետնախնձորով արգա-  
նակ . . . . . 32
50. Երիշտա . . . . . 32
51. Գետնախնձորով արգանակ . . . . . 36
52. Յարմ սունկով արգանակ . . . . . 32
53. Բօրչչ . . . . . 37
54. Յարմ կաղամբով չչի . . . . . 38
55. Թթու " " . . . . . 38
56. Կանաչ չչի եղինձով . . . . . 32
57. Կարմիր պորինձանով արգանակ . . . . . 32
58. Գառան մսով արգանակ . . . . . 39
59. Հաւի " " . . . . . 32
60. Բաղրով արգանակ . . . . . 32
61. Սազով " . . . . . 40
62. Հորթի մսով արգանակ . . . . . 32
63. Ճակնդեղի տերենով արգանակ . . . . . 32
64. Մակարոնով արգանակ . . . . . 32
65. Արտալա . . . . . 41
66. Խաչ . . . . . 32

67. Վառեկով և կարմիր պորինձանով ար-  
գանակ . . . . . 32
68. Բոզարթմա . . . . . 42
69. Սերկնիլով միս . . . . . 32
70. Գառան մսով չխրթմա . . . . . 32
71. Հաւով չխրթմա . . . . . 32
72. Քիւֆթա բազրաշ . . . . . 32
73. Բրնձով շորփա . . . . . 32
74. Կաթնապուր . . . . . 32
75. Կաթնով և մաննլա կրուպով արգանակ . . . . . 32
76. Հիւսնդի բուլիօն . . . . . 32
77. Խսկական բուլիօն . . . . . 32
78. Արմտիքով արգանակ . . . . . 32
79. Խնձորէ ապուր . . . . . 32
80. Ալուբալէ արգանակ . . . . . 32
81. Սալորէ արգանակ . . . . . 32
82. Օրազուլի արգանակ . . . . . 32
83. Ասետրին ձկնով արգանակ . . . . . 32
- ՊԱՍՈՒԱՑ**
84. Աջափսանդալ . . . . . 32
85. Սիսեռի արգանակ . . . . . 32
86. Սունկի արգանակ . . . . . 49

**Պ. ՄԱՍՈՒԱԾ**

- ՃԱՇԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ
87. Եփած միս . . . . . 50
88. " տաւարի միսը տապակած սունկով . . . . . 51
89. " " " գետնախնձորով և մսա-  
ջրի սոուսով . . . . . 32

90.	Եփած տաւարի միս կաթնի սոուսով . . . . .	52
91.	" " Եփած զազարով . . . . .	—
ՏԱՊԱԿԱԾ ՈՒ ԽՈՐՈՎԱԾ		—
92.	Տապակած տաւարի միս . . . . .	55
93.	" " " . . . . .	53
94.	Ինչպէս պէտք է միսը տապակել . . . . .	—
95.	Շամփրի վերաէ խորոված տաւարի միսը . . . . .	55
96.	Խորովածի մի ուրիշ տեսակը . . . . .	—
97.	Տապակած հորթի միս . . . . .	56
98.	Եփած հորթի միս սպիտակ սոուսով . . . . .	—
99.	Հորթի և տաւարի լեզու . . . . .	57
100.	Տապակած զառան միս . . . . .	—
101.	Տապակած հորթի միս կամ տաւարի սուկի ձուով . . . . .	57
102.	Տապակած վառեկ ձուով . . . . .	—
103.	Բիւֆշտէքս . . . . .	58
104.	Բիւֆշտէքս արմտիքով . . . . .	—
105.	Ոազու . . . . .	—
106.	Ոսկրով կատլէտ . . . . .	59
107.	Կատլէտ . . . . .	60
108.	Հորթի ու զլուխը ձուով տապա- կած . . . . .	—
109.	Խորոված խոճկոր . . . . .	—
110.	Խոզի խորոված . . . . .	—
111.	Խորոված հնդուհաւ . . . . .	61
112.	" վառեկ . . . . .	—
113.	Տապակած վառեկ . . . . .	—
114.	Տապակած սագ . . . . .	—
115.	" բաղ . . . . .	62

116.	Վալրի թռչուններ . . . . .	—
117.	Հիւնքեարապէլէնսի . . . . .	—
118.	Անզլիական տապակած . . . . .	—
119.	Ոոզրիֆ . . . . .	63
120.	Հաւի կամ վառեկի սոուս . . . . .	—
121.	Լուլա քեաբար . . . . .	64
122.	Ոչխարի կամ խոզի զառւրմա . . . . .	65

### Ա Ղ Յ Ա Ն Ն Ե Բ

123.	Թարմ կաղամբի աղցան . . . . .	—
124.	Սալաթ . . . . .	—
125.	Թարմ վարունդ . . . . .	—
126.	Ճակնդեղ . . . . .	66
127.	Խնձոր . . . . .	—
128.	Պարզ տեսակ սալատ . . . . .	—

### Փ Լ Ա Խ Ն Ե Բ

129.	Քաշովի . . . . .	—
130.	Քամովի վլաւ . . . . .	—
131.	Զուով վլաւ . . . . .	67
132.	Գառան մսով կամ վառեկով վլաւ . . . . .	68
133.	Փլաւի վերաէ զործածուող քաղցրե- ղէններ . . . . .	—
134.	Ղաբլու-վլաւ . . . . .	—
135.	Կաթնէ սպաս . . . . .	—
136.	Շիլափիլաւ . . . . .	69
137.	Հարիսա . . . . .	70

ԶԿՆԵՂԷՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

138.	ԳԵՂԱՐՔՈՒՆԻ, ԽՀՄԱՆ	71
139.	Նոր ձուկը	—
140.	Լոքո	—
141.	Զութիսի	72
142.	Խորոված օրակուլ	—
143.	Թարթ.	—
144.	Նոր ձուկը տապակած	73
145.	Եփած թառափ	—
146.	Եփած դոշ.	—
Անհրաժեշտ զիտելիքներ թրտեղէն կերակուրների մասին		—
ԸՆԴԵՂԷՆ ԵՒ ԱՐՄՏԵՂԷՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ		851
147.	Գետնախնձորի կատ. կաթնէ սոուսով	80
148.	" " սունկով.	—
149.	Կաթնով գետնախնձոր	81
150.	Կանաչ լոբի եղ ու ձուով	—
151.	" " վառեկով	82
152.	" " բորանի	—
153.	Պորինձանի բորանի	83
154.	Թարմ բամիայով միս	—
155.	Թարմ բամիայով միս մի ուրիշ կերպ.	84
156.	Զորացրած բամիայով միս	—
157.	Աջափասնդալ	—
158.	Բաղրջան—պիօրեք	—
159.	Մերկմիլով մսի տոլմա	85

160.	Բուլէտ.	—
161.	Ծներեկ եղ ու ձուով	86
162.	Սպանաղ (շոմին) եղ ու ձուով	—
163.	Քշմիշով և զիրիշկով հաւ	87
164.	Վաղի տերեսով տոլմա	—
165.	Կաղամբով տոլմա	88
166.	Սև պորինջանով տոլմա	—
167.	Խնձորի տոլմա	88

Պ Ա Ս Ո Ւ Ա Յ

168.	Տապակած զետնախոր	89
169.	Գետնախնձոր սոխ ու ձէթով	—
170.	Խորոված դպում	—
171.	Ձէթով վլաւ	—
172.	Գետնախնձորով կատէտ	90
173.	Տապակած բախ	—
174.	Սունկով կարկանդակ	90
175.	Կանաչ լոբի ընկուզով	91
176.	Զիթով պորինձան	—
177.	Զիթով լոբի	92
178.	Ղանձիլ	—
179.	Սվիտրի	—
180.	Եշէսպաս	93

Ս Օ Ո Ւ Ս Ն Ե Բ

181.	Պոմադորով սոուս	90
182.	Սալորի սոուս	—
183.	Խնձորի սոուս	94

**ԱԼԻՒՐԵ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ**

184. Մակարօն եղու ձուռվ . . . . . 94  
 185. Երիշտա և քաղցր կարկանդակների խմոր պատրաստելը . . . . . 95  
 186. Ալուբալով կարկանդակ . . . . . 95  
 187. Մակարօն թթուասերով . . . . . 96  
 188. Քաղցր թելխմոր—(բաճկա) . . . . . 96  
 189. Բուղինդ—սերով և բուլկով . . . . . 96

**Դ. ՄԱՍԱՐ**

ՃԱՇԻ ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

**ԱԼԻՒՐԵ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ**

190. Կարկանդակ տվարոգով . . . . . 97  
 191. Կաթնով մակարօն . . . . . 97  
 192. Բուրբուշէլա . . . . . 98  
 193. Ալաղիա . . . . . 98  
 194. " խնձորով . . . . . 99  
 195. Բիսկվիտ . . . . . 99  
 196. Բիսկվիտ դրոժով . . . . . 100  
 197. Խեղձ ասպետներ . . . . . 100  
 198. Բլինչիկ . . . . . —  
 199. " խնձորով . . . . . 101  
 200. Ծալծալ կարկանդակ . . . . . 101

**ՔԱՂՅՐ ԱՐԳԱՆԱԿՆԵՐ ԵՒ ԿՈՄՊՈՅ**

201. Զոր պառուղներից արգանակ կամ կոմպոտ . . . . . 102  
 202. Թարմ խնձորի և սև սալորի կոմպոտ . . . . . 103  
 203. Խնձորի, տանձի, նարնջի և սալորի կոմպոտ . . . . . —  
 204. Պաղպաղակ . . . . . 104  
 205. Պլոմբիր . . . . . —  
 206. Ժէլէ . . . . . 105  
 207. Կրէմ . . . . . 106

**ՔԱՂՅՐ ՊԻՐՈԳՆԵՐ**

208. Պասուալ խմոր . . . . . 107  
 209. Ուտիսուալ խմոր . . . . . —  
 210. Փիլրուն խմոր թթուասերով . . . . . 108  
 211. Պիրոզի ընտիր խմոր . . . . . —  
 212. Խնձորով կարկանդակ . . . . . —  
 213. Սև սալորով կարկանդակ . . . . . 109  
 214. Քաղցրաւէնիով կարկանդակ . . . . . —  
 215. Շոկոլադով պաքսիմատ . . . . . —  
 216. Ընկոլզի պաքսիմատ . . . . . —  
 217. Վաֆլի . . . . . 110  
 218. Հալուա . . . . . —  
 219. Կրեմով ձողիկներ . . . . . —  
 220. Կրէմ ձողիկների համար . . . . . 111

**ՊՏՈՒՂՅՆԵՐ**

221. Վաֆլի և պարտէզի ելակ մոր—կաթով և շաքարով . . . . . —  
 222. Խորոշած խնձոր շաքարով և կաթով . . . . . 112

223. Դարձեալ խնձորով կարկանդակ 112  
 224. Խնձորով կարկանդակ ուրիշ կերպ . —  
 225. Չմերուկ և սեխ . —  
 226. Պտուղների սննդարար նշանակութիւնը : —

## **Ե. ՄԱՍՔ**

227. Կուլիչ հիլով . . . . . 114  
 228. Հասարակ զատկահաց . . . . . 115  
 229. Բնտիր զատկահաց . . . . . 116  
 230. Կաթնահունց . . . . . 117  
 231. Դաթալ . . . . . 118  
 232. Կէկ . . . . . —  
 233. Ներկած ձու . . . . . 119

### Թէջի եի ՍՈՒՐՃԻ ՊԱՔՄԻՄԱՑՆԵՐ

234. Պասուայ բուլիր . . . . . 120  
 235. Ծալ ծալ քաղցր պիրող . . . . . —  
 236. Բիսկվիտի պիրող լիմոնով . . . . . 122  
 237. Խնձորի պիրող . . . . . —  
 238. Նշէ պաքսիմաս . . . . . 123  
 239. Քաղցր պիրող . . . . . 124  
 240. Զանդկուխէն . . . . . —

## **Զ. ՄԱՍՔ**

### ՊԱՇՄԵՂԵՆ

241. Քաղցր կերակուրների համար պահեստի նիւթեր . . . . . 125

242. Համեղ նիւթեր սոսուի համար . —  
 243. Համեմիներ և խոտեր . —  
 244. Կարմիր պորինձանի պիւրէ . —  
 245. " " չորացրած 126  
 246. Աղ զրած վարունգ . . . . . —  
 247. Թթու վարունգ . . . . . —  
 248. Մանահեխ . . . . . 127  
 249. Պաղօղի . . . . . —  
 250. Սուրճ . . . . . 128  
 251. Արևածաղկի սուրճ . . . . . 129  
 252. Դարէ սուրճ . . . . . —  
 253. Խողկաղինէ սուրճ . . . . . —  
 254. Ալուբալէ խմիչք . . . . . —  
 255. Հաղարձի, մորու և ելակի քաղցրաւենի 130  
 256. Խնձորէ պիւրէ . . . . . —  
 257. Ալուբալի պիւրէ . . . . . 131  
 258. Չորցրած մոր . . . . . 132  
 259. Լիմոնի կծեալ . . . . . —

## **Է. ՄԱՍՔ**

### ՄԻ ՔԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

260. Արգանակ եփելու կաթսալ . . . . . 133  
 261. Չուղունի կաթսան մաքրել . . . . . —  
 262. Փալոէ ամանները մաքրել . . . . . —  
 263. Պղնձէ ամանները և ինքնաեռը մաքրել 134  
 264. Դանակն ու պատառաքաղը " 135  
 265. Պողպատից ժանդ հանելու միջոց . . . . . —  
 266. Չուից սեացած զգալները մաքրել . . . . . —

9149

- |      |                                   |   |     |
|------|-----------------------------------|---|-----|
| 267. | Ծիշերը մաքրել                     | — | 135 |
| 268. | Խոհանոցի հասարակ սեղանները մաքրել | — | 136 |
| 269. | Զանազան իրերը մաքրել              | — | —   |
| 270. | Լուսամտի ապակու և հալելու մաքրելը | — | —   |
| 271. | Անհրաժեշտ գիտելիքներ              | — | 137 |

దానికి మరియు తప్ప

Digitized by srujanika@gmail.com

Proprietary

S20. 0m/s

Digitized by srujanika@gmail.com

Journal of Oral Rehabilitation 2005 32: 295–302

*Am. Journ. Ent.* 22

卷之三

卷之三

www.english-test.net

ANNUAL REPORTS 520

July 19, 1980

July 2000, 865  
Vol. 22, No. 1, 829

Digitized by Google

גנום

#### The Age of Suspicion

Digitized by srujanika@gmail.com

Digitized by srujanika@gmail.com

[View Details](#)

ՀԱՅՈՒԹԻՒՆ ԽՈՏԵԼ ՎՐԱ ՀԱՅՈՒԹԻՒՆ ԽՈՏԵԼ ՎՐԱ

Digitized by srujanika@gmail.com

19.681

СИКИРЯК  
СУМЫ

Digitized by Google




9692

3-  
7m

Ch. 8-1

2 р



2013

«Ազգային գրադարան»



NL0082436

